

Վ. Մ. ԽՈՂՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

---

Զեռագրի իրավունքով  
50 օրինակ № 48

Ա. Ն. ՆԵՐՍԻՍՅԱՆ  
*Պատմ. գիտութ. թեկնածու*

1877-1878 թթ. ՌՈՒՍ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ  
ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

---

ԵՐԵՎԱՆ—1951

(47)  
- 81  
h2.

Վ. Մ. ՄՈՒՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

---

Ա. Ն. ՆԵՐՍԻՍՅԱՆ  
*Պատմ. գիտութ. թեկնածու*

1877-1878 թ.թ. ՌՈՒՍ-ԹՅՈՒՐԲԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ  
ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ



---

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1951

А. Н. НЕРСИСЯН  
КАВКАЗСКИЙ ФРОНТ РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ  
1877—1878 гг. И УЧАСТИЕ АРМЯН

(На армянском языке)  
Издательство Ереванского Государственного университета  
Ереван—1951

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈՒԱՐԵՆ

Մեր այս աշխատությունը նվիրված է հայերի ունեցած մասնակցությանը 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմին:

Թյուրքիայի ռազմա-ֆեոդալական դեպոտիզմի լծի տակ հեծող հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմին, նրա օգնությունն ու օժանդակությունը Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական բանակին հայ և ռուս ժողովուրդների պատմական բարեկամության և քաղաքական մերձեցման ցայտուն արտահայտություններից մեկն է հանդիսանում: Մեր առաջ զրված նպատակին հասնելու համար, մենք ուսումնասիրել ենք այդ պատերազմին նվիրված, հատկապես պատերազմի մասնակից հեղինակների, գործերը, հրատարակված և չհրատարակված արխիվային փաստաթղթերը, ինչպես նաև ժամանակակից հայ և ռուս պարբերական մամուլում հրատարակված հարուստ նյութերը: Մեզ հաջողվեց չափազանց արժեքավոր փաստաթղթեր հայանարերել Մոսկվայի Ռազմա-պատմական, Հայկական ՍՍԻ և Վրացական ՍՍԻ Պետական արխիվներում: Հիշյալ նյութերի հիման վրա էլ շարադրված է մեր այս աշխատությունը:

Աշխատության առաջին գլուխը մի պատմական ակնարկ է 19-րդ դարի ընթացքում (մինչև 1877—1878 թթ. պատերազմը) Պարսկաստանի և Թյուրքիայի դեմ Ռուսաստանի մղած պատերազմներին հայերի ունեցած մասնակցության մասին: Յուրյ է տրված, որ Հայերը Թյուրքիայի և Պարսկաստանի ծանր լծից ազատագրվելու իրենց հույսերը Ռուսաստանի օգնության մեջ էին փնտրում: Նշելով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու փաստը, պատմականորեն այն դիտվում է առաջադիմական երևույթ հայ ժողովրդի հեռավա զարգացման և հուսառու հեռանկարների տեսակետից:

Նրկորոգ գլուխը վերաբերում է Թյուրքիայի դեմ բալկանյան ժողովուրդների մղած ազատագրական պատերազմի շրջանում հա-

յերի ունեցած վերաբերմունքին և արևմտահայերի ազատագրութեան հետ կապված հայ հասարակական հասանքների միջև տեղի ունեցած պայքարին: Պատմական փաստերի հիման վրա մենք եկել ենք այն եզրակացութեան, որ հայ ժողովրդի առաջավոր դործիչները արևմտահայերի փրկութեանը թշուրթիայի լծից իրավացիորեն Ռուսաստանի օգնութեան մեջ էին տեսնում: Անգլիայի և Բարձրագույն Դուան հետ իրենց շահերով կապված արևմտահայերի մի աննշան հատվածը, որը հայերի փրկութեան հույսը թշուրթիայի բարենորոգումների կամ Անգլիայի միջամտութեան վրա էր դնում, պատմականորեն ճիշտ չի եղել, չի արտահայտել ժողովրդի կամքը և պաշտպանություն չի գտել նրա կողմից:

Երբորդ գլուխը նվիրված է հայերի ունեցած մասնակցութեանը 1877—1878 թթ. ռուս-թշուրթիական պատերազմին: Արեւիվային հարուստ փաստաթղթերի հիման վրա մենք աշխատել ենք ցույց տալ հայերի, ինչպես նաև անգրկովկասյան մյուս ժողովուրդների գործուն մասնակցությունը պատերազմական գործողություններին և ռուսական բանակի հաղթանակն ապահովելու համար նրանց կատարած զոհողությունները: Հայերը մասնակցել են որպես կամավորներ (միլիցիա), ուղեկցողներ, թարգմանիչներ, հետախույզներ և այլն: Հայերը միաժամանակ նյութական մեծ աջակցություն են ցույց տվել ռուսական բանակին: Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև նրանք իրենց փրկութեան հույսը աչք պատերազմի հաջող ելքի հետ էին կապում:

Աշխատութեան շարժողույթը և վերջին գլուխը վերաբերում է պատերազմից հետո Սան-Ստեֆանոյում և Բեռլինի կոնգրեսում հայկական հարցի քննարկմանը: Այս գլխում ցույց ենք տվել հայկական հարցի ձախողման պատճառները, Անգլիայի և Գերմանիայի բացասական դիրքը, ինչպես նաև սուլթանական թշուրթիայի վրեժխնդրութեանը մատնված արևմտահայերի ծանր վիճակը: Անգլիան, պայքարելով Ռուսաստանի ազդեցութեան դեմ, իր «պաշտպանութեան» տակ է վերցնում թշուրթիային, դրանով իսկ օգնում է նրան իր բռնակալ լծի տակ պահելու միլիոնավոր թշվառ քրիստոնյաների: Ցույց է տրված հայերի վերաբերյալ, 61-րդ հոդվածի ձևական բնույթը, որովհետև այն փաստորեն հնարավորություն տվեց «հայակեր» Սուլթան Համիդին վարպետորեն օգտագործելու կրոնական խռոչը պետությունների միջև եղած շահերի հակասությունները և»

իր ուղած ձևով «լուծելու» հայկական հարցը, այն է՝ մասսայական ու սիստեմատիկ կոտորածներով բնաջնջելու հայերին:

Վերջում մենք ցույց ենք տվել, որ հայկական հարցը լուծեց միայն Սովետական իշխանությունը:

«Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի ննաբավորություն» (Ի. Ստալին):

Սովետական իշխանությունը հնարավորություն ստեղծեց ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերի վերամիավորման համար:

**ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՅՅՈՒՆԸ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍ-  
ՅՅՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՆ ՄԻՆՉ 1877—1878 ՅՔ.  
ՊԱՏԵՐԱԶՄԸ**

«Հայաստան... Ով ծանոթ չէ այս ժողովրդի ողբերգական կոշ-  
մարային անցյալին:

Գտնվելով երկրագնդի երկու աշխարհների, երկու երկրների—  
Եվրոպայի ու Ասիայի սահմանում, երբեմնի հին Արևելքի հզորագույն  
երկրներից մեկը՝ Հայաստանը անթիվ կռիվների ու արշավանքների  
թնաերարեմ է եղել. մի խումբ նվաճողների փոխարինում էին  
մի այլ խումբ նվաճողներ: Ինչպես մրրիկ ու փոթորիկ՝ անցնում  
էին երկրի վրայով հույները, պարսիկները, հռոմայեցիները, արաբ-  
ները, բյուզանդացիները, սելջուկները, մոնղոլները և օսմանցիներ-  
ը: Հազիվ էր ժողովուրդը ոտքի կանգնում մեկ ավերիչ փոթոր-  
կից, երբ նոր փոթորիկ էր մտանում: Եվ նորից էին ավերվում  
գյուղերն ու քաղաքները, կործանվում էր կուլտուրան, ոչնչանում  
էին աշխատավոր հայերը: 14-րդ դարի վերջերին Հայաստանը  
վերջնականապես բաժանվեց Միջին Ասիայի տերիտորիայում  
պաշարող զանազան պետությունների միջև: Հայ ժողովրդի պատ-  
մության մեջ սկսվեցին ամենամռայլ ժամանակները»<sup>1</sup>:

Դարեր շարունակ գտնվելով Արևելքի երկու բնապետություն-  
ների՝ շահական Պարսկաստանի և սուլթանական թյուրքիայի ծանր  
լծի տակ, հայ ժողովուրդը անասելի մռայլ օրեր է ապրել՝ ենթարկ-  
վելով աննկարագրելի բռնությունների և հալածանքների: Հայ

<sup>1</sup> „Правда“, 1935 թ. նոյեմբերի 28-ի առաջնորդողը:

ժողովրդի ապրած աչդ մտալլ օրերի նկարագիրը տվել են ինչպես հայ պատմիչներն ու գրողները, այնպես էլ օտար հեղինակները:

«Քուցե դժվար լինի,—գրում է լորդ Բայրոնը,—գտնել պատմության մեջ մի որևէ ազգի ժամանակագրություն, որն այնքան քիչ հանցանքներով արատավորված լինեք, որքան հայերի պատմությունը, որոնց առաքինությունը խաղաղասիրությունն է, և որոնց մոլությունը եղել է դիմացկունությունը: Բայց ինչ որ էլ լինի, նրանց ճակատագիրը և աչդ ճակատագիրը արգարև դառն է եղել, ինչ էլ որ լինի դա ապագայում, նրանց երկիրը պետք է միշտ մի հետաքրքրական երկիր լինի»<sup>1</sup>:

Սակայն օտարի կրնկի տակ գտնվող հայ ժողովուրդը երբեք չի հուսահատվել, երբեք չի կորցրել հավատը իր պայծառ ապագայի նկատմամբ, զարմանալի կերպով դիմանալով օտար հարստահարիչների դժոխսային խոշտանգումներին, միաժամանակ հերոսական պայքար է մղել իր ազատագրության համար: Պատմական անցյալի դառն փորձը, հայ ժողովրդի առաջավցր ներկայացուցիչներին բերում է այն համոզմանը, որ իրենց սեփական միջոցներով անկարող են ազատագրվել Թյուրքիայի և Պարսկաստանի լծից՝ առանց եվրոպական քրիստոնյա պետությունների օգնության:

Եվրոպական արքունիքների դռները բազմիցս բախելուց և, բացի ունայն խոստումներից ու ցավահեղան խոսքերից ոչ մի օգնություն չստանալով, ի վերջո նրանք իրենց հայացքը ուղղում են դեպի «Հյուսիսի արժիվը», դեպի Ռուսական կայսրությունը: Գնալով աճում է հայ ժողովրդի համակրանքը դեպի Ռուսաստանը, որովհետև հանձին ուս մեծ ժողովրդի, հայ ժողովուրդը տեսնում էր այն միակ ուժը, որի օգնությամբ նա կարող է ազատագրվել պարսկական և թյուրքական արյունալի լծից: Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու հայերի հույսերը չեքոմ ընդունելություն են գտնում ռուսական արքունիքում, քանի որ այն համապատասխանում էր ցարիզմի արտաքին նվաճողական քաղաքականությունը:

Երախուսելով հայ գործիչների ազատագրական ցանկություններն ու հույսերը, ցարիզմը դեկավարվում էր ոչ թե ինչ-որ մարդասիրական ձգտումներով, այլ հետապնդում էր իր սեփական շահերը:

18-րդ դարից սկսած՝ Անդրկովկասը Ռուսական կայսրության համար չափազանց կարևոր նշանակություն է ստանում՝ Արևելքում իր նվաճողական պլաններն իրագործելու համար: Անդրկովկասը իր ուղիմաստրատեգիական նպատակով դիրքով մի պայքարմ է հանդիսանում Մերձավոր Արևելքում՝ մենաշնորհ կերպով իշխելու համար մղվող պայքարում: Նա մի կամուրջ էր Ռուսաստանի համար դեպի ասիական շուկաները թափանցելու և Մերձավոր Արևելքում ազդեցություն ձեռք բերելու համար: Ահա թե ինչու ռուսական ցարիզմը ամեն կերպ աշխատում էր իր կողմը գրավել ինչպես վրացիներին, այնպես էլ հայերին, որոնք կարող էին մեծ աջակցություն ցույց տալ անդրկովկասյան երկրների նվաճման գործում: Չնայած ցարիզմի հետապնդած նվաճողական նպատակներին, այնուամենայնիվ, տվյալ պատմական ժամանակաշրջանում դա ձեռնառու էր հայերին օսմանյան և պարսկական լծից ազատագրվելու, իրենց վաղեմի իղձերն իրականացնելու համար: Ուստի հայերը բոլոր միջոցներով օգնում են ռուսական բանակին Թյուրքիայի և Պարսկաստանի դեմ նրա մղած պատերազմների ընթացքում:

\* \* \*

Չնայած հայերը վաղուց անտեսական հարաբերությունների մեջ են եղել Ռուսաստանի հետ, սակայն քաղաքական մերձեցման տեսակետից առաջին գործնական քայլերը կատարվում են Պյոտր Առաջինի ժամանակ, և աչդ շրջանից հաստատուն հիմքերի վրա են դրվում հայ-ռուս քաղաքական հարաբերությունները:

Հայաստանը և հայերը ռուսական ցարիզմի արևելյան արտաքին քաղաքականության համար առանձնակի նշանակություն են ստանում 19-րդ դարի սկզբում, մասնավորապես Վրաստանի միացումից հետո (1801 թ.): Վրաստանին տիրելուց հետո բնականաբար ռուսական ցարիզմը պետք է ձգտեր հետզհետե տարածելու իր ազդեցությունը և ընդլայնելու իր սահմանները ի հաշիվ անդրկովկասյան երկրների, որտեղ ռուսական քաղաքականությանը նպաստող առաջին և գլխավոր հենարանը ներկայացնում էին հայերը: Ահա թե ինչու կովկասյան՝ զորքերի հրամանատարությանն ուղղած հրովարտական Ալեքսանդր I-ը պատվիրում է՝ «Զեր առանձին ուշադրության ենք հանձնարարում գրավել հայոց

<sup>1</sup> М. Г. Ролени Жекмен, Армения, армяне и трактаты, 1896, М., стр. 5

ազգին ամեն տեսակ փառաստանքով... որովհետև,—ասված է, այնտեղ,—Պարսկաստանում հարստահարության ենթակա լինելով անտարակույս շատերը այս ազգից կհաստատվեն Վրաստանում, երբ նրանք համոզվեն, որ մի բարեկարգ անբուխուն է ապահովում նրանց»<sup>1</sup>:

Ասենք, առանձնապես մեծ ջանքեր չէին պահանջվում ցարական զենեքալներից հայերին համոզելու և Վրաստանի սահմանները գաղթեցնելու ուղղությամբ:

Ասանց դրան էլ հայերը վաղուց ի վեր ցանկանում էին ազատվել պարսկական լծից և անհամբեր սպասում էին ռուսական զորքերի մոտենալուն: Վրաստանը Ռուսաստանին միացնելու լուրը հայերը մեծ հրճվանքով ընդունեցին, քանի որ դրանով մոտենում էր նաև իրենց ազատադրման ժամը:

Վրաստանի միացումից հետո հայերի համակրանքը դեպի ռուսները դնալով ուժեղանում է: Երևանի հայերը, իրենց կյանքը խիստ վտանգի ենթարկելով, հարչուրավոր դերաստաններով փախչում են Լոռվա և Վրաստանի սահմանները՝ նյութական մեծ զրկանքներ կրելով:

Հայերը ռուսական հրամանատարությանն են հայրնում Երևանի կաշազորի, նրա քանակի և նյութական հնարավորությունների մասին շարժական կարևոր ռազմական գաղտնիքներ, միաժամանակ խնդրում նրանից շտապեցնելու Երևանի գրավումը, փրկելու այնտեղ գտնվող հազարավոր թշվառ հայ բնտանիքներին<sup>2</sup>:

Ռուսական բանակը Հայաստանի սահմաններին մոտենալու և դեպի Երևանի բերդը շարժվելու ճանապարհին աժենուրեր հանդիպում է հայերի ջերմ ընդունելությանը, ստանալով նրանցից ամեն կարգի աջակցություն: Հայերը, որպես կամավորներ կռվում են ռուսական բանակի շարքերում, նրանք առաջնորդում են նրան՝ ցույց տալով ճանապարհները: Երևանի բերդի գրավման առաջին փորձի ժամանակ, չնայած տեղական հայերի նկատմամբ պարսիկների կողմից սահմանված խիստ հսկողությանը, այնուամենայնիվ, բազմաթիվ հայ կարիճներ, զոհարելով իրենց և յուրաքանչեքի կյանքը, փախչելով բերդից՝ կարևոր տեղեկություններ են հա-

ղորդում ռուսական հրամանատարությանը: Այդպիսի խիզախներից մեկն էր Երևանցի Մեծագան Գալստյանը, որին իր հոր հետ միասին Մանսեղ-խան անասելի տանջանքներով մահապատի է ենթարկում<sup>3</sup>:

Երևանի բերդի գրավման առաջին անհաջող փորձից հետո, հայերը մնալով պարսկական լծի տակ, անասելի հալածանքների են ենթարկվում ռուսներին ցույց տված օգնության համար: Հայերի ապրած այդ մոռյլ օրերի դասն նկարագրիչ շարժական գունեղ կերպով պատկերված է հայ մեծ լուսավորիչ զբոսը Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» աշխատության մեջ: «Ասաված ոչ շահնց տա, անօրենի ձեռք զուշմանս չի՛ ընկնի: Մարդ ո՛ր հողը տա դիսին. ինչ ուզում են, է՛ն են անում: Գատաստան չկա, իրավունք չկա, ու հայ ազգն էլ՝ էնքան էսպես ցավեր տեսել էր, մեկ որ խոսքը մին չէ՛ր ըլում, որ իր գլուխն ազատի: Աղջիկն ասես՝ քաշում էին, աղին ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ զլուխը կտրում, էրում, նահատակում: Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մայր, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանքը, ո՛չ օղիուշաղը»<sup>4</sup>: Այդ ծանր լծից դուրս դալու միակ փրկությունը Աբովյանը տեսնում է ռուսական տիրապետության տակ անցնելու մեջ: «Ասոված աշխարքիս խաղաղություն, թագավորաց հաշտություն, քրիստոնեից ազատություն տա:

Ընշանկ մեռնինք ո՛չ, որ մեկ օր էլ էսպես էլով, գլուխով ռուսի ձեռի տակին նստինք, [ե.թ. անենք]»<sup>5</sup>: Այդ համոզմանն էր հենց ինքը հայ ժողովուրդը, որը ոչինչ չէր խնայում ռուսական զենքի հաղթանակն ապահովելու գործում:

Ռուսական ցարիզմը իր արևելյան նվաճողական քաղաքականությամբ բախվում է Անգլիայի և Ֆրանսիայի շահերին, որոնք, վախենալով Ռուսաստանի ազդեցության ուժեղացումից, ամեն կերպ օգնում են թյուրքիային և Պարսկաստանին ռուսների դեմ: Ֆրանսիական սպաների ղեկավարությամբ Ֆաթ-Ալի-շահի ղեկավարները անսպասելի կերպով շատ լուրջ հակառակորդներ գտնվեցին: Գուղովիին հաջորդող Տորմասովը նույնպես անօգուտ դրոշում է նա-

<sup>1</sup> Акты, собр. Кавказ. археографич. комиссею, т. II, Тифлис, 1868-стр. 91.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 604.

<sup>3</sup> Հայկական ՄՍԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. 50.— Գ. 1, էջ 151—154:

<sup>4</sup> Խ. Աբովյան. Վերք Հայաստանի, էջ 49:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 43 (ընդգծումը մերն է: Ա. Ն.):

պողևոնյան ինժեներների կողմից ամրացված երևանը: Տիլզիտյան հաշտությունը, ռուսական և ֆրանսիական կայսրներին դարձնելով դաշնակիցներ, ոչ միայն չի օգնում գործին, այլ անգամ վատացնում է այն:

1809 թ. սկսած Պարսկաստանում ուժեղանում է անգլիական ազդեցությունը: Ռուսաստանի նկատմամբ խիստ թշնամաբար տրամադրված անգլիական դիվանագիտությունը բոլոր միջոցներով օգնում է Թյուրքիային և Պարսկաստանին Ռուսաստանի դեմ: Անգլիական սպաները, գրավելով ֆրանսիացիների տեղը, կազմակերպում և ռաուցանում են պարսկական բանակը: Անգլիական ճարտարապետները օգնում են ամրություններ կառուցելու գործում, Անգլիան մեծ գումարով վարկեր է տրամադրում Պարսկաստանին: Սակայն ոչ Ֆրանսիայի և ոչ էլ Անգլիայի օգնությունը չի փրկում Պարսկաստանին: Ռուսաստանին հաջողվում է 1812 թ. մայիսի 16-ին Բուխարեստում հաշտություն կնքել Թյուրքիայի հետ և իր ամբողջ ուժերը կենտրոնացնել Պարսկաստանի դեմ:

Անգլիական սպաների կողմից շուտափույթ կազմակերպված պարսկական կանոնավոր բանակը չի դիմանում ռուսների շեշտակի հարվածին: Արբաս-Միրզան, գլխավոր շախմատիստ, հաշտություն է խնդրում, որը կնքվում է Ղարաբաղի Գյուլիստան ամրոցում (1813 թ.): Այդ հաշտության համաձայն, Անգլիավիասում մի շարք խանություններ անցնում են Ռուսաստանին:

Գյուլիստանի հաշտությունը տեական լինել չէր կարող: Պարսկաստանը Անգլիայի զրդմամբ ամեն կերպ աշխատում է վերագարձնել կորուստը: 1826 թ. պարսկական զորքերը, Հասան-խանի և Արբաս-Միրզայի ղեկավարությամբ հանկարծակի հարձակման անցնելով, ժամանակավոր հաջողություն են ձեռք բերում: Պարսկական բանակի հանկարծակի հարձակումը և նրա ժամանակավոր հաջողությունները ոտքի են հանում տեղական մահմեդական խաներին և բեգերին, որոնք սկսում են վրեժ լուծել անպաշտպան հայերից—ռուսներին ցույց տված օգնության համար: Ռուսական բանակի այս նեղ մոմենտին հայերը դարձյալ, բոլոր հնարավոր միջոցներով օգնում էին նրան: «Ղարաբաղի այս ազրստամբության ժամանակ,—գրում է Երմոլովը,—տերություն հույսը մնացել էր միայն Հայոց վրա, որպես կրոնակիցների»<sup>1</sup>:

Պարսկաստանի դեմ մղած կռիվներում ռուսական բանակին օգնելու և հայ-ռուսական քաղաքական մերձեցման գործին մեծապես նպաստում է Ներսես Աշտարակեցին իր գործակից գեղարդագիր Հովհաննես արքեպիսկոպոսի հետ միասին: Երևանի գրավման նախօրյակին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի 1827 թ. մայիսի 24-ի կոչի համաձայն, Ներսեսի գլխավորությամբ կազմակերպվում են հայկական մի քանի հետևակ գումարտակներ, յուրաքանչյուրը մտավորապես 1000 հոգուց բաղկացած, իսկ Գրիգոր Մանուչարյանի գլխավորությամբ Ղարաբաղի հայերից կազմակերպվում է 500 հոգուց բաղկացած հեծելազոր, որոնք Երևանի գրավման ժամանակ անդնահատելի ծառայություն են մատուցում ռուսական բանակին: Այդ մասին Խաչատուր Աբովյանը իր «Վերջում» գրում է. «Ինչ որ պարսից կռիվ ժամանակին հայք արին, ասածուն է հայանի: Թե մարդ չիմանա, բարերը վկայություն կտան: Հայրաթ որ մեկ արդար մարդ, անաշառ մարդ Վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակը կերեի, թե հայք ինչ արին, ինչ հավատարմություն են ցույց տվել տերությունը, ինչ արին են վեր ածել... Միմիայն ներսես ու Գրիգոր եպիսկոպոսաց, Մաղաթովի և Բեհրուժովի արածը բավական է, որ աշխարհ իմանա, թե ինչ հոգի սներ էն ժամանակը մեր ազգը»<sup>1</sup>: Հայերի հետ միասին ռուսական բանակի շարքերում պարսիկների դեմ կռվում են նաև ադրբեջանական և վրացական կամավորական զնդերը:

Հայերը ռուսներին ցույց տված օգնության և կամավորական զնդեր կազմակերպելու համար ենթարկվեցին պարսիկների սուկալի վրեժինդությունը: Գազազած պարսիկներն իրենց ամբողջ զայրույթն ու կատաղությունը անպաշտպան և անզեն հայերի վրա թափեցին: Ամենասոսկալի կերպով աուժեցին Արարատյան դաշտի հայկական գյուղերը, որոնց բնակիչների մեծ մասը բռնի կերպով Պարսկաստանի խորքերը քշեցին, իսկ մնացածին փակեցին Երևանի բերդում: Երևանի բերդի գրավման ժամանակ ռուսներին ցուցաբերած օգնության փառուն նմուշներից պետք է համարել էջմիածնի շրջանի Նուռնի գյուղացի Հակոբ Հարությունյանի անձնագոն վարմունքը, որը, գտնվելով պարսկական բանակում որպես հրետանավոր, 1827 թ. օգոստոսի 17-ի ճակատամարտի ժամանակ, հրետանու փողը դարձնում է պարսիկների կողմը:

<sup>1</sup> Ե. Կեղամյան, Հայերի ազատագրական շարժումները ժԹ դարում, էջ 125:

<sup>1</sup> Խ. Աբովյան, Վերջ հայաստանի, էջ 143—144:



Տեսնելով, որ իր գործողությամբ նկատվել է պաշտիկների կողմից, փորձում է փախչել ռուսների կողմը, սակայն բռնվում է և Սարգսր Հուսեյին խանի երամանով հավիտենական հաշմանդամ դարձվում: Պարսիկները կտրում են նրա բիթը, շրթունքները, սաքերի թաթերը և հանում աչքերը: Այդ մասին հիշում է զեն. մաշտր իշխան Ճավճավաձեն գրաֆ Պասկևիչին ուղարկած զեկուցագրում, խնդրելով՝ ապահովել նրան նյութական միջոցներով<sup>1</sup>: Հայերի՝ ռուսների նրկատմամբ ցուցաբերած համակրանքի և ցույց տված օգնության մասին վկայում է նաև զնդապետ Լազարևի գրաֆ Պասկևիչին ուղարկած զեկուցագիրը, որտեղ ասված է. «Պարսկական սահմանը մտնելիս ռուսական զորքերին զիմալորում են հայերը որպես իրենց հայրենակիցների: Այս ազգը ամենազղալի մասնակցություն է ունեցել մեր զենքի հաջողությանը»<sup>2</sup>: Ռուսական բանակը, հայկական զնգերի անմիջական օգնությամբ 1827 թ. եռամսյա պաշարումից հետո, գրավում է Երևանի բերդը և 1828 թ. փետրվարի 10-ին կնքվում է Քյուրթմենչայի հաշտությունը, որով Անգրկովկասում պարսկական տիրապետության տակ եղած խանութները մեկընդմիջտ անցնում են Ռուսաստանի տիրապետության տակ և դրանով կատարվում է հայերի դարավոր իղձը՝ պարսկական լծից ազատագրումը: Այժմ ռուսական ցարիզը ձգտում է այս ամառի ու անմարդարնակ տերիտորիան շենացնել, իսկ այդ հնարավոր է միայն Պարսկաստանի խորքերը բշված հայերին նորից իրենց երկիրը վերագործնելու միջոցով:

«Այդ աշխատասեր, հուր և մեղ կրոնակից ժողովրդով անհրաժեշտ է լցնել այս ամառացած երկիրը»,—գրում է Պասկևիչը Քիբիչին<sup>3</sup>: Ենթահիվ ձեռք առած միջոցների, նյութական մեծ զորականքների պայմաններում, նորանվաճ երկիրն են գաղթում մոտ 45 000 հայեր, որոնք տեղավորվում են Երևանում, Նախիջևանում, Պրդուբաղում և Արարատյան դաշտի գյուղերում:

\* \* \*

1828—29 թթ. տեղի է ունենում ռուս-թյուրքական պատերազմը, որի ընթացքում դարձյալ հայերը մեծ օգնություն են ցույց տալիս

<sup>1</sup> Акты, т. VII, Тифлис, 1878, стр. 492.

<sup>2</sup> Акты, т. VII, Тифлис, 1878, стр. 595.

<sup>3</sup> Собрание актов относящихся к обозрению истории арм. народа, ч. II, Москва, 1833, стр. 166.

ռուսական բանակին: Կարսի հայերի օգնության շնորհիվ էր, որ ռուսական բանակը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում տիրացավ այդ անտոիկ բերդին: Ռուսական բանակին մեծ օգնություն են ցույց տալիս Բասենի, Ալաշկերտի, Հասան-Կալայի և էրզրումի հայերը: 1828—1829 թթ. ռուս-թյուրքական պատերազմի ընթացքում Կ. Պոլսում և Անատոլիայի տարբեր վայրերում գտնվող իր բազմաթիվ մարդկանց միջոցով Լազարևը շափազանց կարևոր տեղեկություններ է հաղորդում արտաքին գործերի մինիստրությանը: Մասնավորապես մեծ ծառայություն է մատուցում դարաբաղցի Ասլանբեկ Արաբեկյանը, որը, հաղթահարելով այդ ճանապարհին եղած բոլոր զժվարությունները, բովանդակալից տեղեկություն է հաղորդում Քյուրթիայի ռազմական ուժերի և ազգաբնակչության տրամադրությունների մասին: Լազարևը գրաֆ Քիբիչին ուղարկած իր գաղտնի զեկուցագրում (1829 թ. 18—3—№ 791) առանձնապես մատնանշում է հայերի Ռուսական կայսրությանը նվիրվածության մասին<sup>1</sup>:

Հայերը, որոնք մեծ սպասելիքներ ունեն այդ պատերազմից, հուսախաբվեցին, լսելով Ազրիանապոլի հաշտության մասին (1829—9—2): Այդ հաշտության համաձայն ռուսները պետք է թողնեին գրաված տերիտորիան, իրենց ձեռքին պահելով Ախալքալաքը, Ախլցխան և Սև ծովի արևելյան ափերը՝ Անապայից—Փոթի:

Թե որքան ծանր էր հայերի համար լսել այդ լուրը, երևում է 1829 թ. հոկտ. 10-ին գրաֆ Պասկևիչի կայսրին ուղարկած զեկուցագրից: Պասկևիչը գրում է «Այն խաղաղությունը, որ Զ. Կ. Մեծութունը բարեհաճել էք շնորհել Բարձրագույն Դուանը՝ Ձեր Օգոստոսփառ անվանը օրհնություն բերեց այսքան միլիոնավոր մարդկանց կողմից: Բայց այստեղ, Ասիայում, ընդհանուր ուրախության մեջ այդ բերկրության լուրը իրավացի տրամության մեջ գցեց ժողովրդի այն մասը, որ արժանի է մեր կարեկցությունը թե շարունակ կրած տառապանքներով ու ռուսական զենքի հաջողությանը ցույց տված համակրանքով և թե այն թշվառ ազազայով, որ նրան սպասում է, եթե Զ. Կ. Մ. հզոր բազկի հովանավորության ներքո նա չգտնի ապահով ապաստան ընդդեմ այն հալածանքների, որ նրան սպասում են...»<sup>2</sup>: Այնուհետև Պասկևիչը շարադրում է պատերազմի

<sup>1</sup> ЦГВИА ф. ВУА, д. 4719, стр. 93.

<sup>2</sup> Акты, т. VII, стр. 830.

ընթացքում հայերի ցույց տված օգնության փաստերը, այն գեր-  
զատանների թիվը, որոնց անմիջապես վտանգ է սպասում ու-  
սական զորքերի հեռանալուց հետո, միաժամանակ թույլտվություն  
խնդրում հայերի գաղթը կազմակերպելու համար: Ընչպես պարս-  
կահայերը, նույնպես և արևմտահայերը, թյուրքերի վրեժխնդու-  
թյունից խուսափելու համար բռնում են գաղթի ճանապարհը:  
1829 թ. Թյուրքիայի տարբեր վիլայեթներից մեծ զրկանքներով  
ուսական տերիտորիան են գաղթում շուրջ 90 000 հայեր: Ռուսա-  
կան ցարիզմի և նրա աստիճանավորների կողմից հայերի նկատ-  
մամբ ցուցաբերած «կարեկցությունն» ամենից առաջ բխում էր  
հենց իրեն՝ ցարիզմի շահերից: Հայաստանն ու հայերը անհրա-  
ճեշտ էին ուսական ցարիզմին Մերձավոր Արևելքում և ապա Մի-  
ջին Ասիայում իր հետապնդած նվաճողական պլաններն իրակա-  
նացնելու համար: Ցարիզմը մեծ շահ ուներ նաև հայերի գաղթից,  
որոնք որպես աշխատասեր ժողովուրդ պետք է շենացնեին նոր  
նվաճած երկրները և բնդհանրապես Ռուսաստանի հարավային  
մարզերը՝ առևտրի և արդյունաբերության տեսակետից: Խոսելով  
Ռուսաստան գաղթած հայերի մասին Գր. Ա. Գիկեր գրում է. «Վեր-  
ջին տարիների պատմությունը ցույց տվեց, որ Ռուսաստան ներ-  
գաղթած հայերը արդարացրին ուսական կառավարության հույ-  
սերը, որ սպասում էր նրանցից հարավային մարզերի տնտեսա-  
կան մակարդակի բարձրացման, առևտրի և արդյունաբերության  
զարգացման գործում»: Անմտություն կլինի կարծել, որ հայերը,  
Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով, ազատվում են  
ամեն կարգի տնտեսական շահագործումից և նրանց համաք  
ստեղծվում են աշխատանքի ու կյանքի անհրաժեշտ պայմանները:  
Քաղաքական հոստառությունից զուրկ պետք է լինել նման տնտեսա-  
կան պաշտպանելու համար: Եթե այդպես լիներ, ապա ավելորդ ան-  
անհասկանալի կղաղաբ ուսական ցարիզմի տիրապետության  
տակ գտնվող բազմաթիվ մանր ազգությունների, ուսա մեծ ժո-  
ղովրդի պլավորությունները կալվածատերերի ու բուրժուազիայի շա-  
հերի արտահայտիչ ցարիզմի դեմ մղվող զարավոր ազատագրա-  
կան պայքարի իմաստը և դրանով նսեմացրած կլինենք Հոկտեմ-

<sup>1</sup> Гр. А. Днев, Армянский вопрос в Турции, Москва, 1896.  
стр. 390.

բերյան սոցիալիստական Մեծ ռեզոլուցիայի համամարդկային դերն-  
ու պատմական նշանակությունը: Մենք վերը նշեցինք, որ ուսա-  
կան ցարիզմի կողմից հայերի նկատմամբ ցուցաբերած «հոգատա-  
րությունը» բխում էր հենց իրեն ցարիզմի շահերից և ոչ թե հայե-  
րին սիրելուց, կամ ինչ-որ կրոնական մոտիվներից:

Հայ աշխատավորության շահագործումը շարունակվում է նաև  
ուսական ցարիզմի տիրապետության տակ: Սակայն, չնայած ցա-  
րիզմի նվաճողական քաղաքականությանը, այնուամենայնիվ,  
ավյալ պատմական ժամանակաշրջանում դա օրեկտիվորեն ձեռն-  
տու էր հայերին, և հայերը իրավացի կերպով Ռուսաստանի օգնու-  
թյամբ էին սպասում իրենց ազատագրումը պարսկական և օսմանյան  
արյունալի լծից: Ռուսի հայերի մի փոքր հատվածի ազատագրումը  
օսմանյան և պարսկական լծից և Հայաստանի մի մասի՝ Արևելյան  
Հայաստանի միացումը Ռուսաստանին պատմականորեն հարաբե-  
րական իմաստով մի առաջադիմական երևույթ պետք է համարել  
հայ ժողովրդի կյանքում: Ռուսաստանը իր արտագրողական ուժե-  
րի զարգացումով անհամեմատ ավելի բարձր էր կանգնած, քան  
Պարսկաստանը և Թյուրքիան, որտեղ իշխում էր ֆեոդալական  
մասնատվածությունը և քաղաքական անարխիան, որտեղ բացա-  
կալում էր կյանքի և գույքի նկատմամբ որևէ ապահովություն:

«Ռուսաստանը, — ասում է Էնգելսը, — ընդհակառակը Արևելքի  
վերաբերմամբ իրոք առաջադիմական է եղել»: Ռուսաստանի տիրա-  
պետության տակն անցնելով՝ հայ ժողովուրդը փրկվում է ֆիզի-  
կական վերջնական բնաջնջումից, հայ ժողովրդի տնտեսական, քա-  
ղաքական և կուլտուրական կյանքը զրկում է նոր պայմանների  
մեջ, սկսում է զարգանալ բոլորովին նոր ուղիներով: Հայ և ուս  
ժողովուրդների միջև քաղաքական, տնտեսական և կուլտուրական  
սերտ կապ է ստեղծվում: Հայ ժողովրդի հետագա զարգացման  
համար ավելի հուսատու և պայծառ հեռանկարներ են բացվում:  
Հայ ժողովուրդը իր բախտը կապում է ուս մեծ ժողովրդի հետ և  
նրա գլխավորությամբ պայքարում է իր պայծառ ապագայի հա-  
մար: Վերջապես, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու  
հետևանքով ստեղծվում է մի ապահով օջախ, որտեղ կենտրոնա-  
նալով հայ ժողովրդի մի ստվար հատվածը, պայմաններ են  
ստեղծվում նաև նրա ազգային ձևավորման համար:

Մարտ — էնգելս, Ընտիր նամակներ, 5. 1, 1936, էջ 68:

Այսպես ուրեմն, Քյուրֆմենչայի հաշտութեամբ լուծվում է հայերի մի փոքր հատվածի հարցը, սակայն՝ Հայաստանի մեծագույն մասը իր ժողովրդով հանդերձ շարունակում է մնալ Քյուրֆիայի տիրապետության տակ, ենթարկվելով ամենազոխային հալածանքների ու զրկանքների: Հայ ժողովրդի հույսերը ուսանների օգնությամբ ազատվելու ուղղությամբ գնալով արևելքի քան աճում են, և ամեն անգամ, երբ Ռուսաստանը պատերազմ է հայտարարում Քյուրքիային, նորից բորբոքվում են հայերի ազատագրական իղձերը ուսանների օգնությամբ ազատագրվելու, և նորից մեծ եռանդով ու նվիրվածությամբ աշակցում, օգնում են նրա զենքի հաղթանակին:



Ակալում է 1853—1856 թթ. Արևելյան պատերազմը, որի ընթացքում ծանր փորձությունների ենթարկվեցին ինչպես Ռուսաստանը, այնպես էլ անդրկովկասյան ժողովուրդները:

Պատերազմական գործողությունները միաժամանակ տարվում են երկու հիմնական ռազմաճակատներում՝ Բալխանյան և Կովկասյան:

Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական բանակը, ինչպես նախորդ պատերազմի շրջանում, այս անգամ ևս հանդիպում է արևմտահայերի ջերմ ընդունելությանը, որոնք նորից հանդիսանում էին ռուսական բանակի ամենահուսալի դաշնակիցը, զենելով նրան թե նյութական միջոցներով և թե կամավորներով:

Կովկասյան ռազմաճակատում գործող կորպուսի վրա շափազանց ծանր և պատասխանատու խնդիր էր դրված. նա պետք է պաշտպաներ Անդրկովկասի սահմանները թշնամու ներխուժումներից և, միաժամանակ հարձակողական գործողություններ կատարելով, իր կողմը դրավեր թշնամու մեծ քանակությամբ ուժեր և դրանով օգներ հիմնական ռազմաբեմում գործող ռուսական բանակին: Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը իր տրամադրությունն տակ եղած փոքրաթիվ ուժերով գուցե զժվարանար ապահովել այդ պատասխանատու խնդրի կատարումը, առանց տեղական ազգաբնակչության գործուն մասնակցության: Այդ նկատի ունենալով, գործող կորպուսի հրամանատար զեն. Բեհրուժովը տեղական

ազգաբնակչությունից կազմակերպում է միլիցիա (կամավորական գունդ) Հայաստանի սահմանամերձ շրջանները պաշտպանելու համար, որտեղ քրդական զինված հրոսակախմբերը իրենց մշտական հարձակումներով տազնապի մեջ էին պահում տեղական ազգաբնակչությանը: Բացի դրանից, միլիցիայի հատուկ հարչուրակներ են կազմակերպվում, որոնք անմիջական մասնակցություն են ունենում ռազմաբեմի մի շարք նշանավոր ճակատամարտերին:

Միլիցիայի զորամասեր են կազմակերպվում Ալեքսանդրապոլում, Շորագյալում, Էջմիածնում, Շամախիում և Սարգարաբաղում: Պետական արխիվում եղած փաստաթղթերից պարզվում է, որ Երևանյան ջոկատը համալրելու համար Սարգարաբաղի գավառակում կազմակերպված հեծյալ-ազրբեջանական զնդում լինում են 150-ից ավելի հայեր, որոնք մասնակցում են 1853—1856 թթ. պատերազմին: Պատերազմական գործողություններին ակտիվ մասնակցություն են ունենում Շամախիի հայերից կազմված միլիցիայի երկու հարչուրակ՝ ենթագնդապետ Եղիզարովի գլխավորությամբ և Շորագյալի հայ կամավորները՝ Քարխանովի գլխավորությամբ. վերջինս առանձնապես աչքի է ընկնում Բայազետի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ընթացքում:

Ռուսական բանակը մի շարք փաշտուն հաղթանակներ է տանում Բալխանդուրի, Բաշ-Կաղեկլարի, Քյուրուկդարայի ճակատամարտերում, որոնց ակտիվ մասնակցություն են ցուցաբերում հայ կամավորները: Հայերից առանձնապես աչքի են ընկնում՝ շտաբակապիտան Սահակյանը, ենթագնդապետ Եղիզարովը, շտաբակապիտան Արարատսկին, պոզպորուչիկ Քարխանովը, «ոտոմիստր Կոնստանդին—որդի Ռոստոմի Փիրոջան Արղուիջանց»<sup>2</sup>, Գաբրիել Գեղամյանը և ուրիշները: Չինգիլի կոչված բարձունքում տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ առանձնապես աչքի են ընկնում հայ կամավորներից Էջմիածնեցի Գրիգոր Մանուկյանը և Ավետիք Նավասարդյանը, որոնք պարգևատրվում են զինվորական պատվանշանով<sup>3</sup>: Այդ նույն ճակատամարտում մասնակցած հեծյալ-ազրբեջանական զնդից պարգևատրվում են 37 հայ կամավորներ: Բացի ռուսական բանակի շարքերում կոլող հայ կամավոր-

<sup>2</sup> Հայկական ՍՍՌ ՊԱ, ֆ. 57—9, 159, էջ 3, 33, 44—63:  
<sup>3</sup> Նույն տեղում, ֆ. 155, էջ 170:  
<sup>4</sup> Նույն տեղում, ֆ. 17—9, 159, էջ 75—76:

ներից, թյուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերից և մյուս բրիտանյա ժողովուրդներից հատուկ գնդեր էին կազմակերպված երկրի խորքերում, որոնք սպասում էին ռուսների մոտենալուն՝ նրան գործուն աջակցություն ցույց տալու համար: Այդպիսի գինաված ուժեր էին գտնվում ասորական պատրիարք Արրահամի արամադրության տակ, որը գնդապետ Խրեշտափցիուն 1855 թ. մարտի 30-ին գրած նամակում խոստանում է ռուսական բանակը Վանին մոտենալու դեպքում իր արամադրության տակ եղած ուժերով գրավել Մուսուլից մինչև Վան ընկած տարածությունը<sup>1</sup>:

Հայերը մեծ աջակցություն են ցույց տալիս ռուսական բանակին Կաղզվանի և մասնավորապես Կարսի պաշարման և գրավման ժամանակ:

Կարսի երկարատև պաշարման ընթացքում հայերը սխտեմատիկ կերպով տեղեկություններ են հաղորդում ռուսական բանակի հրամանատարությունը հակառակորդի ուժերի, նրանց տեղի ու նպատակների մասին: Առանձնապես աչքի բնկնող գործ է կատարում պրապորշչիկ Գանիել Հարսիսյունյանը<sup>2</sup>, որն իր մարդկանց միջոցով կարևոր տեղեկություններ է հաղորդում հրամանատարությանը, որի գործունեությունը, ինչպես կտեսնենք մեր աշխատության երրորդ գլխում, ավելի քան ծավալվում է 1877—1878 թթ. պատերազմի ընթացքում: Հիշատակության արժանի է նաև ալեքսանդրապոլցի Բարալ Լալայանի գործունեությունը, որը Կարսի պաշարման ժամանակ հատուկ հանձնարարությամբ Կարս է ուղարկվում, որտեղից վերադառնում է կարևոր տեղեկություններով՝ խոյի և Վանի թյուրքական ուժերի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Հովսեփ Թաղևոսյանը<sup>3</sup>: Ռուսական բանակի օդատին թռչնամու թիկունքում մեծ գործ են կատարում նաև խաչքիլիսա վանքի սարկավազ Հովհաննեսը, Մուլա-Մուլեյման գյուղի քահանա տեր-Հակոբը և շատ ուրիշներ, որոնք թյուրքերի կողմից ենթարկվում են դաժան սպառնալիքների: Այսպես, օրինակ, Երևանյան ջոկատի հրամանատար գեներալ-մայոր Սուլուվի զեկուցագրից

<sup>1</sup> Акты, т. XI, Тифлис, 1885, стр. 350.

<sup>2</sup> Հայկական ՍՍԹ Պետ. արխիվ, Фонд Выписк, ч. II, д. 339, стр. 41.

<sup>3</sup> Նույն տեղում, стр. 50.

<sup>4</sup> Նույն տեղում, фонд 57, д. 159, стр. 26.

պարզվում է, որ Ալաշկերտի մի շարք պատվավոր հայերի, որոնց թվում տեր-Հակոբին, թյուրքերը, կասկածելով ռուսներին ցույց տված օգնության մեջ, ձերբակալում և էրզրում են ուղարկում, որտեղ նրանց մահապատժի են ենթարկում<sup>1</sup>: Էրզրումում լսելով ռուսների հարձակման մասին, թյուրքական իշխանությունների կողմից կարգադրություն է արվում քաղաքի պաշտպանությունը ավելի ուժեղացնելու մասին, սակայն հայերը պայմանավորվում են թույլ շատը թյուրքերին քաղաքում և շրջակա ամրություններում պաշտպանվելու<sup>2</sup>: Հայերը միաժամանակ նյութական մեծ օգնություն են ցույց տալիս ռուսական բանակին: Հրամանատարությունը մատչելի գներով և թղթադրամով (այն, ինչ հնարավոր չէր բաշխանյան ռազմարեմոն) բանակի համար ձեռք է բերում անհրաժեշտ սարքեր, տեղական հայերը մեծ նվիրատվություն են կազմակերպում իրենց գյուղերով անցած ռուսական զինվորներին: Էջմիածնի հոգևորականությունը տեղում գտնվող Ռյաժսկի հեռակազմի զինվորներին ծննդյան օրը նվիրում է 50 թ. օղի, 150 թ. գինի, 16 փուֆ ցորեն, 150 փուֆ ալյուր, 10 խոզ, 3 եղ և այլն...<sup>3</sup>:

Դժվար է մեկ ան մեկ թվարկել այն ամենը, ինչ արել են հայերը ռուսական զինքի հաղթանակն ապահովելու համար, որովհետև դրա մեջ էին տեսնում իրենց ազատագրման միակ հույսն ու ապավինը:

\* \* \*

1853—1856 թթ. պատերազմը վերջացավ ռուսական ցարիզմի ծանր պարտությունով: Կովկասյան ռազմաճակատում ռուս զորքերի տարած փայլուն հաղթանակը չէր կարող բուժել ռազմաճակատի մյուս հասվածներում, մասնավորապես Ղրիմում, ցարիզմի ստացած խորը վերքերը: 1856 թ. փարսիական հաշտության համաձայն Փոքր Ասիայի ռազմաբեմում դործող ռուսական զորքերը պետք է թողնեին իրենց գրաված տերիտորիան: Մինչ այդ մեծ հույսերով ապրող հայերը նորից հուսախաբվեցին. նրանց համար սկսվում են ծանր ու մղձավանջային օրեր: Նրանց սպասում էր մոլեռանդ

<sup>1</sup> Акты, т. XI, стр. 264.

<sup>2</sup> Նույն տեղում, стр. 115.

<sup>3</sup> Հայկական ՍՍԹ ՊԱ, ֆ. 57, ք. 257, էջ 71 (Գանսկոյի զեկուցագրերը և՛ Երևանի թղթադրամ):

քրդերի և մահմեդականների կատաղի զայրուքն ու վրեժխնդրությունը: Հայերը, ինչպես միշտ, այս անգամ ևս մահմեդականների վրեժխնդրությունից ազատվելու համար բռնում են գաղթի՝ ճանապարհը: Հայաստանի տարբեր վայրերից հարյուրավոր հազ գերդաստաններ, լքելով իրենց հայրենի օջախը, շափազանց ծանր պայմաններում գաղթում են Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող շրջանները: Սակայն խնդիրը դրանով չի լուծվում. դեռ հարյուր-հազարավոր հայ ընտանիքներ շարունակում են մնալ Քյուրքիայի տիրապետության տակ, կրելով թյուրք փաշաների և քուրդ բեգերի բռնություններն ու վիրավորանքները, չկորցնելով երբեք իրենց հավատը ապագայի նկատմամբ:

Հայ ժողովրդի մեջ ուսանելի օգնությունը Քյուրքիայի լծից ազատագրվելու հույսերը նոր թափով վերակենդանանում են բալկանյան ճգնաժամի և 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի ժամանակաշրջանում: Այդ պատերազմի ընթացքում ռուսական բանակին հաջերի ցույց տված օգնությանն ու մասնակցության մասին, որը մեր աշխատության հիմնական խնդիրն է կազմում, կխոսենք երրորդ գլխում: Այժմ կաշխատենք համառոտակի ցույց տալ, թե միջազգային նոր իրադրություններում Արևելյան հարցի այս նոր փուլում, բալկանյան ճգնաժամի և ռուս-թյուրքական հարաբերությունների սրման պայմաններում հայ ժողովուրդը ինչ վերաբերմունք է ցույց տալիս և ինչ հույսերով է ապրում:

Գ. ԱՌԵՆ 11

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Արևելյան պատերազմը լուրջ հարված հասցրեց ցարական Ռուսաստանին. նա կորցրեց իր ղեկավար զինը Եվրոպայում:

Միաժամանակ պատերազմը ամբողջապես դրսևորեց ռուսական ցարիզմի ներքին խոցելի կողմերը, ցույց տալով ցարիզմի տնտեսական և ռազմական հետամնացությունը, անխուսափելի դարձնելով երկրի ներսում մի շարք ըուրժուական սեֆորմների իրականացումը:

«Ղրիմի պատերազմը ցույց տվեց ճորտատիրական Ռուսաստանի փտածությունն ու թուլությունը»<sup>1</sup> — գրել է Լենինը:

<sup>1</sup> Ленин, Соч., т. XV, Ленинград, 1930, стр. 143.

«Ցարական կառավարությունը, որը թուլացել էր Ղրիմի կամպանիայի ժամանակ իր կրած ռազմական պարտությունից և երկուսը կրելով կալվածատերերի դեմ ուղղված գյուղացիական «բուլետերից», ստիպված եղավ 1861 թվականին վերացնելու ճորտատիրական իրավունքը»<sup>1</sup>:

Ջրաղվելով պատերազմից առաջացած վերքերը բուժելու խնդրով, ռուսական ցարիզմը երբեք չի հրաժարվում Մերձավոր Արևելքի և Բալկանների նկատմամբ իր նվաճողական պլաններից: Այդ պլաններն իրականացնելու համար, ցարիզմը աշխատում է օգտագործել եվրոպական պետությունների միջև եղած հակասությունները և պատերազմից հետո ստեղծված միջազգային նոր իրադրությունները (Ֆրանս-պրուսական պատերազմը, Փարիզյան կոնվենան, վերամիավորման համար մղվող պայքարը Իտալիայում և այլն), որոնք գնալով հօգուտ Ռուսաստանի էին դասավորվում:

19-րդ դարի 60-ական թվականներին եվրոպական պետությունների ուժերի նոր վերախմբավորում է կատարվում:

Ուժեղանում է Գերմանիայի և Իտալիայի վերամիավորման համար մղվող պայքարը: Շարունակվում է բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը Քյուրքիայի դեմ: Գնալով ուժեղանում է Պրուսիայի դիրքը, որի գլուխ կանգնած Բիսմարկը ձեռք առնում է երկաթով և արյունով վերամիավորել Գերմանիան: Նպատակին հասնելու համար Բիսմարկը վարպետորեն օգտագործում է 1863 թ. լեհական ապստամբությունը, պաշտպանելով Ալեքսանդր II-ին այդ հարցում, դրանով նա ապահովում է իրեն Ռուսաստանի բարյացակամ շեղորությունը, ջախջախելով սկզբում Ավստրիային, ապա նաև Ֆրանսիային: Հակառակ Ալեքսանդր II-ի կամքի, որը ցանկանում էր ձգձգվող պատերազմի հետևանքով թուլացած տեսնել պատերազմող կողմերին և ապա իր կամքը թելադրել Եվրոպային, պատերազմը ավարտվում է շափազանց կարճատև ժամանակամիջոցում, Պրուսիայի լիակատար հաղթանակով և Ֆրանսիայի ջախջախմամբ: Այդ մասին Էնդելսը գրում է. «Սակայն այնպես, ինչպես Լուի Բոնապարտը 1866 թվին, այնպես և Ալեքսանդրը 1870 թվին հիմար վիճակի մեջ ընկան գերմանական զենքի արագ

<sup>1</sup> Համկ(բ)Պ պատմություն: Համառոտ գաղտնիաց, Հայպեստոս, էջ 5, 1950:

հաջողության պատճառով: Մինչև համերձության շափ կողմերին հյուժող, ձգձգվող պատերազմի փոխարեն, հետևում են արագ հարվածներ, հինգ շաբաթվա ընթացքում Բոննապարտչան կայսրությանը ջախջախվում է, իսկ նրա բանակները գերվում և Գերմանիա են տարվում<sup>1</sup>: Ֆրանս-պրուսական պատերազմի հետևանքով ավարտվում է Գերմանիայի վերամիավորման պրոցեսը, որը տեղի է ունենում «երկաթով և արյունով»: Մտեղծվում է Գերմանական կայսրությունը, որը հետագա 70 տարիների ընթացքում հանդիսանում է համաշխարհային երկու պատերազմների հրձիգն ու նախաձեռնողը: Գերմանիայի հաղթանակից հետո Ռուսաստանը շեղյալ է հայտարարում փարիզյան պայմանագիրը: Չնայած Անգլիայի կատաղի դիմադրությանը, Ռուսաստանին հաջողվում է դիվանագիտական ճանապարհով ազատվել Փարիզի պայմանագրի Սև ծովին վերաբերող ամենաստորացուցիչ կետից: Ամրապնդելով իր դիրքերը Սև ծովում, ռուսական ցարիզմը Բալկաններում նորից ակտիվ քաղաքականության է անցնում, օգտագործելով բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը ընդդեմ Թյուրքիայի Ռուսական ցարիզմի քաղաքականությունը հանդիպում է եվրոպական մի շարք պետությունների՝ մասնավորապես Անգլիայի կատաղի դիմադրությանը: Այս հողի վրա սկսվում է դիվանագիտական սուր պայքար Ռուսաստանի և նրա հակառակորդների միջև: Միջազգային դիվանագիտության այս լարված պայմաններում սկսվում է արևելյան ճգնաժամը, որը հետևանք էր Բալկաններում նոր թափով սկսված ազատագրական շարժումների:

\* \* \*

1875 թ. ամռանը՝ սկզբում Հերցեգովինայում, ապա Բոսնիայում բռնկվում է քրիստոնյա սլավոնների ապստամբությունը ընդդեմ Թյուրքիայի ֆեոդալական բռնապետության: Ապստամբությունը ջերմ արձագանք է գտնում Չեռնոգորիայում և Սերբիայում, որոնք ձգտում էին ավարտել հարավային սլավոնների ազգային միավորումը: Ապստամբությունը ուղղված լինելով Թյուրքիայի դեմ, միաժամանակ վտանգ էր սպառնում նաև Ավստրո-Հունգարիային: Հարսուրդների գինաստիայի տիրապետության

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. II, Москва, 1936, стр 31.

անկ գտնվում էին միլիոնավոր հարավային սլավոններ: Թյուրքիայի դեմ տարած չուրաքանչյուր հաղթանակ մոտեցնում էր նաև Ավստրիայի տիրապետության տակ գտնվող սլավոնների ազատագրման ժամը<sup>1</sup>: Ահա թե ինչու Ավստրիան ամեն կերպ աշխատում է խանդարել հարավային սլավոնների ազատագրական շարժումները:

Հակառակ Ավստրիայի, Ռուսաստանը հանդես է գալիս բալկանյան սլավոնների ազգային ազատագրական շարժումների պաշտպանի դերում: Չնայած ցարիզմը իր սեփական պլանները նկատի ուներ, սակայն ցարիզմի աչք քաղաքականությունը ինքնըստինքյան պետք է հասցնեք բալկանյան սլավոնների ազատագրմանը Թյուրքիայի լծից: Ահա թե ինչու հայերը, առավել ևս բալկանյան սլավոնները, Թյուրքիայի դեմ մղած իրենց պայքարում միակ ռեսուրսը ունեցնում էին սպասել Ռուսաստանից: Այդ մասին Մարքսը գրում է. «Մերը, բուլղարը, բոսնիացի ուսյան, մակեդոնացի և թրակիացի սլավոն գյուղացին ազգային ավելի մեծ համակրանք են տալիս դեպի ռուսներ և դրանց հետ շփման ավելի շատ կետեր, հոգեկան հարաբերության ավելի շատ միջոցներ ունեն, քան միեկույն լեզվով խոսող հռոմեական-կաթոլիկ հարավսլավոնների հետ: Ինչ էլ որ լինի, նրանք Պետերբուրգից են սպասում իրենց միսիային, որը կփրկի նրանց բոլոր շարիքներից»<sup>2</sup>: (Ընդգծումը մերն է: Ա. Ն.):

Ավստրիական կանցլեր Անդրաշին, չնայած Ռուսաստանի նրկատմամբ ունեցած իր բացահայտ թշնամանքին, այնուամենայնիվ, բանակցությունների մեջ է մտնում Ռուսաստանի հետ բալկանյան կոնֆլիկտի հարցով, ձգտելով օկուպացիայի ենթարկել Բոսնիան և Հերցեգովինան: Ռուսական կառավարությունը, չցանկանալով կոնֆլիկտի մեջ մտնել Ավստրիայի հետ, ստիպված զիջում է: Քաղաքական նման պայմաններում ժառանգում է նաև Թյուրքիայի դրուժյունը: Երկրի ֆինանսների քաջբայումը, վարչական սխառեմի ողջ ապականությունը մեծ դժգոհություններ են առաջացնում երկրում: Դրուժյունը ժառանգում է նաև մահմեդականների՝ քրիստոնյաների նկատմամբ ունեցած թշնամական

<sup>1</sup> История дипломатии, т. второй, Москва, 1945, стр. 22.

<sup>2</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, Москва, 1932, стр. 377.

վերաբերմունքի հետևանքով: Թյուրքական թերթերը շտեմնված-  
ֆանատիկոսությամբ և վրեժխնդրությամբ են լցվում դեպի քրիս-  
տոնյաները և սպառնում նրանց ֆիզիկական գոյությանը:

Սուլթան Աբդուլ Ազիզին և իր շինովնիկներին մեղադրում են շուայումների և հափշտակումների մեջ: Լուրեր են տարածում, որ իբր Սուլթան Ազիզը և նրա վեզիր Մահմեդ Նեզիմ փաշան օժանդակում են ռուսներին: Այդ ուղղությամբ եռանդուն աշխատանք է ծավալում անգլիական դեսպան Հենրի Էլիոտը, որը ձգտում է ամեն զնով թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը Թյուրքիայում: Այդ բո-  
լորի վերջնական արդյունքը լինում է դավադրության կազմա-  
կերպումը Սուլթան Ազիզի դեմ և նրա գահազրկումը, որի կազմա-  
կերպման և իրականացման ողջ «պատիվը» պատկանում է ան-  
գլիական դեսպանին, որը ձգտում էր գահ բարձրացնել իր կամա-  
կատար «արշունյալի սուլթան» Աբդուլ Համիդին և նրա միջոցով  
խեղդել բալխանյան ժողովուրդների ազատագրական շարժումը:

Սակայն ո՛չ դավադրությունները, ո՛չ Սուլթան Ազիզի գահա-  
զրկումը և նրա մահը չեն փրկում Թյուրքիան հետագա կատաստ-  
րոֆներից: Գնալով ճգնաժամը ավելի է խորանում, սրվում են հա-  
կասությունները, և բալխանյան ժողովուրդների ազատագրական  
պայքարը նոր թափ է ստանում, սպառնալով ողջ Բալխաններն առ-  
նելու իր բոցերի մեջ: Անգլիական դեսպան Հենրի Էլիոտը, վախե-  
նալով բուլղարական ապստամբության վտանգավոր բարդույու-  
նից, խորհուրդ է տալիս Թյուրքիային «խեղդելու խռովությունը,  
միջոցների մեջ խտրություն չգնելով»: Թյուրքիան Անգլիայի անմի-  
ջակա՞ն պաշտպանությամբ դաժանորեն նեղում է բուլղարների  
ապստամբությունը, սրի մատենելով 25 հազար բուլղարների, այդ  
րվում բազմաթիվ կանանց ու երեխաների:

Բալխանյան ժողովուրդների նկատմամբ կատարած գազանու-  
թյունները զայրույթ են առաջացնում Եվրոպայի ողջ առաջավոր  
մարդկության շրջանում. անգամ անգլիական որոշ շրջաններ  
Գլադստոնի գլխավորությամբ խաչակրաց արշավանք են բարդում  
այդ «անբուժելի բարբարոսների դեմ, որի գոյությունն անգամ  
խայտառակություն է ողջ Եվրոպայի համար»: Բուլղարների նկատ-  
մամբ Թյուրքիայի գազանությունները ամենից առաջ զայրույթ են  
առաջացնում բալխանյան սլավոնների շրջանում: 1876 թ. Թյուր-

քիայի դեմ պատերազմ են հայտարարում Սերբիան, ապա Չեռնո-  
գորիան: Ռուսական մամուլում մեծ կամպանիա է ծավալվում հօ-  
գուտ բալխանյան սլավոնների: Մասնավորապես սլավոնաֆիլ լրա-  
դրերը կոչ են անում ռուս հասարակությանը ամեն ինչով օգնելու  
եղբայր սլավոններին: Սլավոնաֆիլերի ժողովներից մեկում  
Ս. Ս. Ակսակովը իր ամբողջ ճարտասանությունը օգտագործում է  
Թյուրքիայի դեմ և իր ճառը եզրափակում է հետևյալ կերպ.  
«Թյուրքիայի մեր եղբայրները պետք է ազատագրվեն, Թյուրքիան  
պետք է դադարի գոյություն ունենալուց. Ռուսաստանը իրավունք  
ունի գրավել Կ. Պոլսը, այնպես որ նեղուցների ազատությունը  
նրա համար կենսականորեն անհրաժեշտ է»<sup>1</sup>: Ռուսաստանի հա-  
սարակական բոլոր շրջանները հանդես են գալիս Թյուրքիայի դեմ  
Դրենց ազատագրման համար պայքարող սլավոնների պաշտպանու-  
թյամբ, շնայած այս հարցում տարբեր էին հասարակական տարբեր  
հոսանքների մտախմբերը:

Այսպես թե այնպես Ռուսաստանի հասարակական կարծիքը  
նպաստավոր էր ցարիզմի համար բալխանյան սլավոններին օգ-  
նելու անվան տակ պատերազմ հայտարարելու Թյուրքիային:  
1876 թ. վերջերին Եվրոպական պետությունները Կ. Պոլսի  
կոնֆերանսում վերջին փորձն են անում կոնֆլիկտը լուծելու խաղաղ  
ձանապարհով: Այս անգամ ևս Թյուրքիան Անգլիայի զորմամբ  
հրաժարվում է պահանջներն ընդունելուց: «Մի կողմից մասնակ-  
ցելով կոնֆերանսի աշխատանքներին, մյուս կողմից Անգլիայի  
արտաքին գործոց պաշտոնյա լորդ Դերբին Թյուրքիայի դեսպան  
Մյուսյուրի փաշային հայտարարում է. «Անգլիան բնավ չի միանար  
ուրիշ պետությունների Թյուրքիայի վրա ճնշում գործադրելու, ոչ էլ  
հաճություն կտա, որ ուրիշը գործածեն»<sup>2</sup>: Այսպիսով արևելյան  
ճգնաժամը զնալով խորանում է և պատերազմը Ռուսաստանի  
և Թյուրքիայի միջև դառնում անխուսափելի: Այժմ տեսնենք, թե  
բալխանյան ճգնաժամի օրերին, երբ զիվանագիտական սուր պայ-  
քար է զնում Ռուսաստանի և իր հակառակորդների միջև, ինչ  
վերաբերմունք են ցուցաբերում հայ հասարակական առանձին  
շրջանները և ինչ սպասելիքներ ու հույսեր է կապում գալիք պատե-  
րազմի հետ հայ ժողովուրդը:

<sup>1</sup> «Русская старина» 1896 г., июль.

<sup>2</sup> Պրոֆ. Թումանյան, Պատմություն Արևելյան խնդրի և առաջնորդ  
հայկական հարցի, 1905 թ., Լոնդոն, էջ 514:



Բարեկանյան ժողովուրդների արդարացի պայքարը թյուրքիայի բռնակալական լծի դեմ իրենց ազգային անկախության և ազատագրության համար և նրանց պաշտպանի դերում հանդես եկած ռուսական ցարիզմի միջամտությունը այդ գործում՝ նորից վերակենդանացնում են հայ ժողովրդի և նրա առաջավոր գործիչների հույսերը՝ Ռուսաստանի օգնությունը ազատագրվելու թյուրքիայի լծից: Ժամանակակից հայ մտավորականության կենտրոնը հանդիսացող Թիֆլիսում այդ ուղղությամբ եռանդուն գործունեություն է ծավալում նշանավոր հայ հրապարակախոս Գրիգոր Արծրունին, որը «Մշակի» բաղմամբով համարներում դետեղած իր մի շարք հոդվածներում կոչ է անում արևմտահայերին հետևելու բաղկանյան քրիստոնյաների լավագույն օրինակին: Հորդորում է նրանց՝ ձայն բարձրացնել իրենց իրավունքների պաշտպանության համար: «Ամոթ կլինի հայերիս, — գրում է Արծրունին, — եթե նրանք իրենց իրավունքները պաշտպանելու և նոր իրավունքներ սեփականացնելու համար ձայն չեն բարձրացնի, մինչդեռ թյուրքիայի հպատակ այլ ազգություններ իրենց անձն են զոհում, իրենց արյունն են թափում ազատություն ձեռք բերելու համար»:

Միաժամանակ Արծրունին հորդորում է հայերին Ռուսաստանի օգնությունը դիմելու. «Միայն Ռուսաստանը կարող է հասկանալ, — գրում է Արծրունին, — որքան օգտավետ է թե ընդհանուր մարդկային քաղաքակրթության տեսակետից, թե իրեն ռուսաց պետության օգուտների համար, որքան նշանավոր է շահել, գրավել՝ կորած, ընկած հուսահատված քրիստոնյա տարրը Փոքր-Ասիայում»: Արծրունին ուղղակի քարոզում է, որ Հայաստանն անցնի Ռուսաստանի ձեռքը, որովհետև «Ռուսաստանի ձեռքում, որի կոչումն է տարածել Արևելքում համաշխարհային քաղաքակրթությունը, այդ տոկոսն, աշխատանքը, քրիստոնեության դադարախախտումը իրեն զոհած ազգությունը՝ հայերը կարող էին որպես միջոց ծառայել Փոքր-Ասիայում Ռուսաստանի նպատակը իրագործելու համար»<sup>2</sup>:

Հետագայում, երբ արդեն պատերազմը սկսված էր, Գր. Ա.-ին

<sup>1</sup> «Մշակ», 1876 թ. հուլիսի 1:

<sup>2</sup> նույն տեղում:

«Հայաստանն ինչ պետք է դառնա» վերնագիրը կրող առաջնորդողում գրում է. «Հայաստանի առաջին նպատակը պատերազմից հետո պետք է լինի ամեն միջոցներով աշխատել Ռուսաստանին, Անգլիոյ վիստին միանալու, իսկ եթե այդ իրագործելու չէ, — Հայաստանի հույսը դարձյալ և միմիայն Ռուսաստանի վրա է, որ նա իր հղոր ձեռքով կօգնե հայերին կրետե կղզու բնակիչների, բոսնիացիների և բուլղարների պես ստանալու ինքնավարություն»:

Հետևյալ համարի մի ուրիշ առաջնորդողում «Միակ ելք» վերնագրով «Մշակը» նույն միտքն է կրկնում, այսինքն, որ Ռուսաստանը կամ միացնի Հայաստանը իր երկրների հետ, կամ ինքնավարություն տա նրան:

Այնուհետև Արծրունին զգուշացնում է արևմտահայերին աշխատել ամեն կերպ Անգլիայի ձեռքը չընկնել և զգույշ լինել անգլիական խորամանկ դիվանագիտությունից:

Արծրունին նկատի ունի անգլիական կառավարության բռնած զիրքը բաղկանյան ժողովուրդների ապստամբության նկատմամբ, մյուս կողմից՝ նրա դիվանագետների բաղաբական մանևրները արևմտահայերին իրենց կողմը գրավելու և նրանց Ռուսաստանի դեմ դուրս բերելու: Չնայած Անգլիայում հարյուրավոր բողոքի միտինգներ էին գումարվում և հասարակական կարծիքը իր զայրույթն էր հայտնում թյուրքիայի դեմ բուլղարական կոտորածների առթիվ, սակայն անգլիական կառավարությունը և նրա կ. Պուլսի դեսպանը բացահայտ կերպով պաշտպանում էին թյուրքիային և խորհուրդ տալիս նրան բաղկանյան ապստամբությունները ճնշելու համար կանգ չառնել ոչ մի միջոցի առաջ:

Ահա թե ինչու Արծրունին զգուշացնում է արևմտահայերին՝ չհավատալ անգլիական դիվանագետների խորամանկ խոստումներին և իրենց ձայնը բարձրացնել, իրենց իրավունքները պահանջել, գրանով իսկ իրենց վրա դարձնել Եվրոպայի հասարակական կարծիքը:

Արծրունին իր մի շարք հոդվածներով աշխատում է ապացուցել, որ Արևելյան հարցը միայն եվրոպական հողի վրա ապրող սլավոնների և այլ ազգությունների հարցը չէ, այլև Ասիայում թյուրքիայի լծի տակ տառապող բազմաթիվ կուլտուրական ժողովուրդների՝ հայերի, հույների, հրեաների հարցն է և պետք է լուծվի

<sup>1</sup> «Մշակ», 1876 թ. № 33, «Հայաստանն ինչ պետք է դառնա»:



հենց այժմ: 1876 թ. Արևելյան հարցին նվիրած, սուսերեն լեզվով հրատարակված, իր մի բրուշուրում Արծրունին գրում է. «Թեև եթե նա (Նվրոպյան) ուզում է ազատել միայն եվրոպական նահանգները թյուրքական լծից և դրանով կարծում է լուծել Արևելյան հարցը, այդ դեպքում նա կարող է համոզված լինել, որ հինգ, շատ-շատ տասր տարուց հետո նա նորից կունենա Արևելյան հարց և գուցե ավելի հուսահատական, ավելի սարսափելի կռիվ: Կարող է Նվրոպյան նրաշխարհը, որ այն ժամանակ նա կարողություն կունենա խցել յուր ականջները և չլսել միլիոնավոր մարդկանց հեծեծանքները միայն այն պատճառով, որ հուսահատական գուցե և օրհասական կռիվը տեղի կունենա ոչ թե Նվրոպայում, այլ Փոքր-Ասիայում»:

Այսպիսով, Գրիգոր Արծրունին Արևելյան հարցին նվիրած իր բազմաթիվ հոդվածներով, հրապարակային դասախոսություններով աշխատում է հայերի նկատմամբ նպաստավոր հասարակական կարծիք ստեղծել:

Այդ բոլորից բացի, դարձյալ Գր. Արծրունու ջանքերով և նրա նախաձեռնությամբ էր, որ 1876 թ. Թիֆլիսի հայերի ստորագրությամբ մի ուղերձ է գրվում Ալեքսանդր II կայսրին, խնդրելով նրա աջակցությունը Թյուրքիայի լծից հայերին ազատագրելու գործում: Ուղերձում ասված է. «Ձերդ կայսերական բարձրություն: Բնակվելով ուսաց կառավարության հովանու ներքո և վաղուց արդեն վայելելով մեզ համար թանկագին պետության հովանավորության տակ՝ հանդատության և խաղաղության բոլոր պարգևները, մենք Թիֆլիս քաղաքի բնակիչ հայերս, գրգված բրիտանական մարդասիրական զգացմունքից, շենք կարող անտարբեր մնալ դեպի այն անբեռնակալի տանջանքները, որ կրում են ասիական Թյուրքիայի սահմաններում բնակվող մեր ցեղակիցները և համադավաններն, որ ոչ անհատը, ոչ սեփականությունը, ոչ կրոնը, ոչ բրիտանական կյանքը և ոչ նրանց ընտանիքի կանանց և աղջիկների պատիվն ոչնչով չի ապահոված ... Բրիտանական արդարասիրության խոր ցավակցության զգացմունքը դեպի մեր եղբայրները, զրդեց մեզ դիմել Ձերդ կայսերական բարձրության օգոստափառ միջնորդության և ամենահավատարմատար խնդրել Ձերդ բարձրության արկանել թագավոր կայսեր ոտների մոտ մեր ամենահպատակ խնդիրը պաշտպանել իր հղոր ձեռքով, Թյուրքիայի այլ

<sup>1</sup> Գր. Ариуни, Восточный вопрос, 1876, Тифлис, стр. 6.

բրիտանյաներին հավանար կերպով մահճեղականությունից միշտ ճնշված հայոց ազգն, այն միջոցներով, որ նախախնամությունը հանձնել է նորին մեծությունը և որ նա ավելի հարմար կհամարի»<sup>1</sup>: Ուղերձը հանձնվում է մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչին, որը անմիջապես հարցրեց է կատարում իր կայսր եղբորից, ընդունել այն, թե մերժել<sup>2</sup>:

1876 թ. նոյեմբերի 11-ին վերոհիշյալ ուղերձը հանձնվում է կայսրին, որը սիրով ընդունելով այն, միաժամանակ շնորհակալություն է հայտնում Թիֆլիսի հայ հասարակությանը<sup>3</sup>:

Երբ սկսվում է պատերազմը, «Մշակը» հորդորում է հայերին ամեն կերպ օգնել ուսաներին ներկա պատերազմում, որովհետև այդ պատերազմի հաջող ելքից է կախված հայերի ապագան. «Ներկա սուս-թյուրքական պատերազմի մեջ մենք՝ Ռուսաստանի հայերս, ոչ թե միայն պարտավոր ենք պետության մնացած հպատակներին հավասար նվիրել մեր ամբողջ ուժերը պետությանն օգնելու պատերազմը հեշտացնելու համար, բայց ավելի էլ պետք է զոհենք մեր թե ֆիզիկական ուժերը և թե դրամական միջոցները, աչքի առաջ ունենալով, որ այդ պատերազմի աջող վերջանալուց կախված է մեր ցեղակից և կրոնակից եղբայրների, թյուրքահպատակ հայերի վիճակի վճռելը»<sup>4</sup>:

Արծրունին մեծ հույսեր էր կապում նաև ուս-հասարակական կարծիքի, ուս լավագույն ինտելիգենցիայի հայերի նկատմամբ ունեցած բարյացակամ վերաբերմունքի հետ: «Այն օրից,—գրում է Արծրունին,—երբ մեզ պաշտպան հանդիսացավ ուսաց հասարակական կարծիքը, ուսաց ինտելիգենցիան, այն օրից, ասում ենք, մենք սկսեցինք հավատալ, որ Հայաստանն էլ, սլավյան մյուս երկրների պես կստանա վաղ թե ուշ իր քաղաքական անկախությունը, կունենա իր ապագան»<sup>5</sup>: Այսպես ուրեմն, Գրիգոր Արծրունին և իր կողմնակիցները արեմտահայ ժողովրդի ազատագրման հույսերը միմիայն Ռուսաստանի վրա էին դրել և ներկա պատերազմում ուսաց զենքի հաղթանակն էին ցանկանում: Դժգոհ էր Արծրունին նաև «ազգային սահմանադրությունից», որի մասին Ռուլեն

<sup>1</sup> Վր. Պեա. արխիվ, ֆ. 5, գ. 3223 116, էջ 4—5:

<sup>2</sup> ЦГВИА ф. В. 4. А. д. 187, стр. 100.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 102.

<sup>4</sup> «Մշակ», 1877, № 46, «Պատերազմի խորհուրդները»:

<sup>5</sup> «Մշակ», 1877, № 30, «Ռուսաց մամուլը հայերի մասին»—Գ. Ա.:

ժեկմենը ասել է. «Այստեղ կա ամեն ինչ, բացի մի հոգվածից, որի վրա հայր կարողանար հիմնվել՝ արգելելու համար, որ քուրզը չլիք նրա ոչխարները, բեյը շանպատվի նրա աղջկան և շավերի նրա կալվածը, որ հարկահավաքը երկու և կրեք անգամ շտաճանից նրանից միևնույն հարկը, մի խոսքով ամեն ինչ կա, բացի մի անպիսի կարգադրությունից, որ նրան, հային, իբրև երաշխավորություն ծառայեր ընդդեմ թյուրք կառավարության կամաշահանության և սախի սրան գործունեություն ցույց տալու»<sup>1</sup>։ Առկեն ժեկմենը զարմանում է անգամ նրա անվան վրա, թե ինչու նա սահմանադրություն է անվանվել, երբ գուրի է այդ բովանդակությունից։ Ահա թե ինչու Գր. Արծրունին այդ «սահմանադրության» մասին իրավացիորեն գրում է. «Այժմ, երբ թյուրքիան գտնվում է սարսափելի քաղաքական մի կրիզիսի մեջ... հայտնվեց, որ այդ երեկի սահմանադրությունը անզոր է պաշտպանել հայերին՝ տերության կամայականության և բարբարոսության դեմ, անզոր է պաշտպանել թուրքարևակ հայի ամենաանհրաժեշտ, անբռնարարելի մարդկային իրավունքը... Հային կողոպտում են, հարստահարում են, շարչարում են, ծեծում են, անպատվում են, ուր է սահմանադրությունը»<sup>2</sup>։

«Մշակը» և նրա համախոհները շափազանց խիստ քննադատության են ենթարկում արևմտահայ այն հոսանքի գիրքը, որոնք հանդես էին գալիս թյուրքիայի պաշտպանության և օտար պետությունների կողմից նրա ներքին գործերին միջամտելու դեմ։ Մասնավորապես խիստ քննադատության է ենթարկում «Մշակը» ներսես Վարժապետյանին՝ նրա՝ հայերին ուղղած 1876 թ. հուլիսի հայտնի շրջաբերականի համար, որով վերջինս կոչ էր անում հայ ժողովրդին «պաշտպանելու թյուրքիային բաղկանյան ժողովուրդների դեմ, նրա մղած պատերազմում»<sup>3</sup>։

«Մշակի» 1877 թ. № 5-ում «ներսես պատրիարքը և թուրքահայերը» վերնագրով անստորագիր մի հոդվածում զայրույթ է հայտնում վրինենայի «Presse» լրագրում տպված ներսես Վարժապետյանի Պոլսի կոնֆերանսում տրված պատասխանի առթիվ, որտեղ

<sup>1</sup> М. Г. Ролн Жекмен, Армения, армяне и трактаты, 1896, М., стр. 19.

<sup>2</sup> «Մշակ», 1876, հուլիսի 1, № 24:

<sup>3</sup> Նույն տեղում, № 33:

գեսպանները նրանից հարցում են կատարում հայերի վիճակի մասին։ Ահա թե ինչ է պատասխանում. «Ճշմարիտ է,—ասել է ներսեսը,—պատահել են մի քանի անախորժ դիպվածքներ, որոնց դեմ մենք կարող ենք դանդաղվել, բայց մենք կամենում ենք դիմել դանդաղով միայն մեր տերությունը։ Մենք ուրիշ միջոցների դիմել չենք ցանկանում և եթե մենք կուզենայինք կոնֆերանցիայից մի որևէ բանի մասին խնդրել, նախ և առաջ պետք է խնդրենք, որ նա բարեհաճեր հրավիրել Ռուսաստանը իրան հպատակ հայերին նույնքան ազատ (և բախտավոր) անել, որքան ազատ և բախտավոր են թյուրքիայի հայերը»<sup>1</sup>։ Հոդվածի հեղինակը դա համարում է սոսկալի կեղծավորություն ու զղվելի վարմունք հոգևոր հովի կողմից։

Հայտնի է, որ թյուրքիան իր քաղաքական ճղնածամից դուրս գալու և եվրոպական պետությունների իր ներքին գործերին միջամտելուց ու նրանց հսկողությունից խուսափելու համար, անընդհատ սահմանադրական խոստումներ էր կատարում։ Անգամ այն պահին, երբ եվրոպական մեծ պետությունների գեսպանները կ. Պոլիս հավաքված փորձում էին դիվանագիտական ճանապարհով կարգավորելու թյուրքիայի հպատակության տակ գտնվող քրիստոնյաների վիճակը, թյուրքական կառավարությունը դարձյալ Անգլիայի դրամամբ, հանդիսավոր կերպով հայտարարում է, որ սահմանադրություն է տրվում, որպեսզի կոնֆերանցիային այլևս ոչ մի անելիք չմնա։ Գրիգոր Արծրունին, խոսելով թյուրքիայի «սահմանադրության» մասին, գրում է. «Մենք միշտ ասել ենք և դարձյալ կկրկնենք, որ այդ ծաղրական սահմանադրությունից ոչինչ սպասել չի կարելի։ Որքան զեղեցիկ դրած էլ լինեք թուրքաց սահմանադրությունը, նա միշտ կմնա մեռած տառ... սահմանադրական կառավարությունը հարեմի, մահմեդական դուրանի և անսահման իշխանության հետ երբեք հարմարվել չի կարող»<sup>2</sup>։

Հաջորդ համարներից մեկում դարձյալ նույն հարցի մասին Գ. Արծրունին գրում է. «Մեզ անհնարին է երևում հիմնավոր կերպով հաստատել սահմանադրությունը այն պետության մեջ, որ դեռ երեկ կարող էր գոյություն ունենալ միայն իր ծայրահեղ բռնա-

<sup>1</sup> Մշակ, 1877, № 5:

<sup>2</sup> Նույն տեղում, № 6:

վոր, անսահման կամայական տերութեան ձեռն շնորհիւ: Մեր դարում հրաշքների չեն հասկատում, իսկ հավատալ, թե երեկվա բռնավոր, բարբարոս, վայրենի, մոլեռանդ թյուրքիան՝ միանգամից, սուլթանի հրամանով այսօր եվրոպական, ազատ, սահմանադրական պետություն է դարձել, այդ նշանակում է հավատալ հրաշքներին»<sup>1</sup>:

Մշակի և արժրունականների բռնած ընթացքին հակառակ էր պահպանողական օրգան «Մեղու Հայաստանին»: Սրանք բոլորովին համաձայն չէին, որ արևմտահայերի ազատությունը Ռուսաստանի ձեռքումն է, և ավելի շատ հույսեր էին կապում Անգլիայի հետ, քան Ռուսաստանի: Պարզ է, որ «Մեղու Հայաստանին» այս դեպքում արձագանքում էր Պոլսի փոքրաթիվ հայ գործիչների կարծիքին, որոնք քիչ հետո կտեսնենք, իրենց անտեսական շահերով կապված էին, մի կողմից, Բ. Գոան, իսկ մյուս կողմից, Անգլիայի հետ: «Մեղուն» խիստ քննադատության է ենթարկում «Մշակի» դիրքը արևմտահայերին ապստամբության կոչ անելու խնդրում: «Կրթակի հետ խաղ չի կարելի անել, կրակը վտանգավոր է, նրան պետք է հանգցնել հրդեհից խուսափելու համար,—գրում է «Մեղուն».— այնուհետև գրում է, որ կարիք չկա միջամտելու օտար պետության ներքին գործերին, գրգռել հայերին թյուրքերի դեմ, ապստամբության կոչ անել նրան և այլն... «Ինչ իրավունք ունենք մենք,—գրում է «Մեղուն»,— արևմտահայերից արյուն պահանջելու, նրանց ներկանու ապագան խաղաթղթի վրա դնելու,—և նստած մեր տանը կարգադրելու նրանց»<sup>2</sup>:

Մեղադրելով այն մարդկանց, որոնք Արևմտահայաստանում ապստամբության պրոպագանդա են մղում հայերին թյուրքիայի դեմ գրգռելով, խորհուրդ է տալիս արևմտահայերին լինել խոհեմ, շտաբվել կեղծ «պուրլիցիստների» խոսքերով, համբերությամբ սպասել թյուրքական կառավարության խոստացած սահմանադրական բարենորոգումներին: «Մեր խորհուրդն է,—գրում է «Մեղուն»,— նախ մեր քաջ և քաղաքագետ պուրլիցիստներին, որ նորա փոխանակ խեղճ և թշվառ եղբարց կյանքի հետ խաղ անելու, լսկ իրանց ազատասեր ցույց տալու համար, մարդոց աչքին փոշի փչելու կամ կուրությունը օտարների գործիքը (խոսքը Ռուսաստանի մասին է—

<sup>1</sup> «Մշակ», 1877 թ., № 18, «Թյուրքիայի սպագան», Գր. Ա.:

<sup>2</sup> «Մեղու Հայաստանի», 1876, №

«Ա. Ն.») լինելու, փոխանակ քաջությամբ թղթեր մրտելու, եթե ձանձրացել են իրանց կյանքից՝ թող իրանք ժողովեն և կազմեն անհաղթելի սրբազան գունդ «Մշակի» քաջ խմբագրի առաջնորդությամբ և երթան պատերազմ, տեսնենք թե առաջին թնդանոթի ձայնը որ ծակը կփախցնի նրանց»: Այնուհետև հույս է հայտնում, որ «Տաճկաբնակ հայ եղբարց խոհեմ և խորհող մասը հաստատուն կլինի խոհեմության ուղիղ ճանապարհին վերա և չի հափշտակվի մի քանի անհեռատես պուրլիցիստների երազներից»<sup>1</sup>:

«Մեղու Հայաստանին» ամեն կերպ աշխատում է արգարացնել ներսևս վարժապետյան բռնած դիրքը՝ թյուրքիայի պաշտպանության համար՝ հայերին ուղղած նրա կոչը և մի շարք էֆենդիների «թյուրքասիրությունը», որոնց կանաչք ընկերություններ են կազմում՝ թյուրքական բանակի վիրավորներին օգնելու համար: Այն ժամանակ, երբ ուսահայ մամուլը իր գաչույթն էր հայտնում վերը հիշած երեւոյթի մասին, «Մեղու Հայաստան»-ի խմբագիրը փորձում է արգարացնել, գտնելով, որ՝ «հայերը իրենց հպատակության հավատարմությունն են ցույց տվել պետության նկատմամբ և առանձին հանցանք չէ նրանց արածը»<sup>2</sup>: Հակառակ իր կամքի «Մեղու Հայաստանին», այնուամենայնիվ, ստիպված էր իր էջերից մեկում տեղավորել իր թղթակիցներից մեկի՝ Նորայրի հոդվածը, որը նույնպես չի հանդուրժում «հայ էֆենդիների» կանանց վարմունքը և իր չերմ համակրանքն է արտահայտում թյուրքիայի լծի դեմ պայքարող բաղկանյան սլավոնների մասին: Տեսնենք թե ինչ է գրում Նորայրը. «Թարձրագույն Դրան պաշտոնյա հայ էֆենդիներու տիկիներն ալ ընկերություն կազմած են օսմանյան բանակին վիրավորյալ զորաց դարման անելու համար պետք եղած բաները հայթայթելու նպատակով»: «... Ներվի ինձ ասելու,—շարունակում է Նորայրը,—որ հայ տիկիներին այս գործը որչափ ալ անմեղադրելի լինի մարդասիրական նկատառումներով, ես չեմ հավնիր և չեմ համակրեր զոցա այդ շարժման, ինչպես նաև թյուրքիայի փաշտպանություն հայոց զինվորագրության, իսկ երբ կխորհիմ թե այդ բարբարոս թուրքերն են, որ Հայաստանին մեջ մեր թշվառ եղբայրները կհարստահարեն, մեր հրեշտականման անմեղ քույ-

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1876, № 27:

<sup>2</sup> Նույն տեղում, № 30:

<sup>3</sup> Նույն տեղ, 1876, № 27:

րերն յուրաց զազանային կրից կզոհեն, մեր եկեղեցիները և մեր հայրենի սուրբ երկիրը բարութանդ կզարձենն, ալ սիրտս սաստիկ կհոնդի և շեմ կրնար շղատապարտել հայոց կամավոր զինվորագրութեանն և տիկիներուն ալ այդ շարժումը շեմ կրնար հավանել, որ Բրիտանիան արշունը ի պաշտպանություն բուրժին քափվին և այնպիսի մի կովի մեջ, որ հարստահարվողը հային նման մի Բրիտանայ ժողովուրդ է, որ յուր արշան գնով կուզե գնել ազատությունը: Փառ՛ այդպիսի ժողովուրդներուն որք մահը գերությունեն նախապատիվ կհամարեն»<sup>1</sup> (ընդգծումը մերն է:—Ա. Ն.):

Հակառակ «Մշակի» բռնած ընթացքին, որը իր թղթակիցներից ստացած բազմաթիվ տեղեկությունների հիման վրա աշխատում է ցույց տալ ամբողջ աշխարհին արևմտահայերի թշվառ ու դառը վիճակը, «Մեղու Հայաստանին» փորձում է մեղմացնել արևմտահայերի վիճակը, ցույց տալով, որ նրանք այնքան էլ վատ դրության մեջ չեն, ինչպես որ այն պատկերացնում է «Մշակը» և այլն: Սակայն, երբ հարկադրված է լինում ղետեղելու իր թղթակիցներից ստացած այնպիսի տեղեկություններ, որոնք ցույց են տալիս արևմտահայերի ողբալի վիճակը, մահմեդականների մոլեռանդությունները, թյուրք փաշաների և բուրդ բեզերի հարստահարումներն ու շարաշահումները, նման ղեպքում խորհուրդ է տալիս իր աշխատակիցներին, որ նրանք խուսափեն նման հողվածներ գրելուց, քանի որ դրանք ավելի կվատացնեն արևմտահայերի դրությունը: Գիմենը փաստերի թղթակից Ա-ն Պոլսից գրած իր հողվածներում նկարագրում է թյուրքերի մոլեռանդությունը հայերի նկատմամբ, նրանց դազանությունները և այլն...

«...գրեթե եվրոպական բոլոր դահլիճները,—գրում է Ա-ն,— աչսօր իրենց վիճարանությանց նյութ ըրած են Պոլկարիտ մեջ գործված անգթությունները, որոնց վերա ինք եվրոպա կզայրանա առանց գիտնալու, որ այս անողոր անգթությունը ղեռ նոր չեն, որ կգործվեն, շատունց ու ընդ միշտ հայը խեղճուկ հայը Ասիո հովտացն ու խորհերուն մեջ մոռցված, շատ ու շատ ճաշակած է այս անլուր բարբարոսությունները և աչսօր Պոլկարիայի մեջ այդ սուկալի վայրագությունը գործողը Ասիային գնացին և կրնան կշռել՝ քե ինչեք չեն գործած այս վայրենիները, որք ոչ աշխատանք գիտեն և ոչ ֆիտ քափել, որք հափշտակությամբ սնում են, որք հայ

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1876, № 27:

«Ի մորթած ժամանակին կարծես հավ մը կմորթեն... որք կսեմ ընտանեկան պատիվ և սրբություն չեն հանչեար և միշտ իրանց գործած ոները կհավվի կառավարության կողմեն, զի պաշտոնյան հափշտակությունեն կամ գողունեն մի մեծ բաժին ունի, առանց որի իր արտաքին կարգի շոյալ ծախսերը չի կարող գոցել կամ կաշտելով ավելի բարձր պաշտոնի հասնել»<sup>1</sup> (ընդգծումը մերն է:—Ա. Ն.):

Հարկադրված այս և նման, իրենց համար անհաճո հողվածներ տպելուց հետո, խմբագրությունն շտապում է ղգուշացնել իր աշխատակիցին խուսափելու նման հողվածներից, որոնք կվնասեն արևմտահայերի դործերին. «Մուտի,—գրում է «Մեղու Հայաստանի»-ի խմբագիրը,—կարծում ենք, որ լավ կլիներ և ավելի օգտավետ, եթե այդպիսի իրողությունք վարչական ճանապարհով հանձնեին ուր հարկն էր և աշխատվեր ապագայում դոցա կրկնության առաջն առնելու կառավարչական կարգադրությամբ, քան նրանց այնպիսի ձև տալ, որ նորա առիթ լինեին գրգռման թե հայերի և թե տաճիկների»<sup>2</sup>:

Այս երկու պայքարող հոսանքների նկատմամբ աշխատում է միջին դիրք գրավել «Փորձը»: Սա, մի կողմից՝ նկարագրում է արևմտահայերի դառն վիճակը... ցույց է տալիս թյուրք փաշաների և բրդերի ու շերբեզների կողմից նրանց հարստահարությունն ու կողոպտումը, մյուս կողմից՝ աշխատում է մեղմացնել թյուրքական կառավարության պատասխանատվությունը և հանցանքը գցել միայն զավառուկան պաշտոնյաների վրա:

«Շատ է խոսվել և իրավացի թյուրքերի հարստահարությունների մասին. բայց անարդարություն կլինեք անել, քե ամբողջ տերությունը մասնակցել է նրանց»<sup>3</sup> (ընդգծումը մերն է:—Ա. Ն.): «Փորձը» մի կողմից, հորդորում է արևմտահայերին կովող ձեռք բերել իրենց ազատությունը, միաժամանակ շտապում է ավելացնել, որ «կոխվ ասելով չենք ուղում հասկանալ հեղափոխական միջոցառումներ, ապատամբություն և այլն... Հայերի դրությունը թյուրքիայում, նրանց իրավունքներն ու արտոնություններն ղեռ

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1876, № 38:

<sup>2</sup> Նույն տեղում, 1876, № 38, խմբագրության կողմից:

<sup>3</sup> «Փորձը», 1877, № 4, Երկրորդ տարի, «Ազգային տեղություն»:

այնքան են, որ առանց ապստամբության դիմելու, կարող են բար-  
վորել իրենց դրությունը»<sup>1</sup>:

Միաժամանակ «Փորձը» աշխատում է հավատացնել իր ընթեր-  
ցողներին, որ իբր թե ապստամբության գաղափարն առհասարակ  
հայ ժողովրդի ոգուն խորթ է. նա երբեք զենք չի բարձրացրել:  
Թյուրքիայի դեմ և «առհասարակ նա խորշում է ամեն տեսակ բուռն  
գործողությունների»... «նոցա միակ ցանկությունն է տերության  
կազմակերպությունը փոխված տեսնել այն սկզբունքների համե-  
մատ, որոնք միջոց կտային իրենց նյութական և բարոյական վի-  
ճակները ապահովացնել»<sup>2</sup>:

Այսպես ուրեմն, «Փորձը» հայերի փրկությունը գտնում է  
Թյուրքիայում կոնստիտուցիայի իրականացման մեջ և դեմ է  
արևմտահայերի կողմից որևէ ակտիվ միջոցների դիմելու, խոր-  
հուրդ տալով իրենց դրությունը բարվարել բարենորոգումների ճա-  
նապարհով<sup>3</sup>:

Մենք խոսեցինք միայն ռուսահայերի և ռուսահայ մամուլի,  
արևմտահայերի ազատագրման հնարավորությունների և այն վե-  
րաբերմունքի մասին, որն ունենին արևմտահայերը արտաքին պե-  
տությունների միջամտության մասին: Այժմ տեսնենք, թե բուն  
Արևմտահայաստանում և Պոլսում ինչ էր կատարվում և թե ինչպես  
էին պատկերացնում իրենց ազատագրման հնարավոր ուղիները  
իրենք արևմտահայերը:

\* \* \*

Բուն Արևմտահայաստանում նույնպես հայ հասարակական  
տարրեր հոսանքները տարրեր մոտեցում են ցուցաբերում վերոհիշ-  
յալ հարցերին՝ նայած թե ո՞ր խմբի շահերը ինչ էր պահանջում:  
Թուրքովին տարրեր էր բուն ժողովրդի և այդ ժողովուրդը ներկա-  
յացնող կամ, ավելի ճիշտ կլինի ասել, այդպիսին ձևացնող պատ-  
րիարքի և Բ. Դոսան հետ իրենց շահերով կապված Պոլսի հայ էֆեն-  
դիների, սառաֆների՝ սեղանավորների կարծիքը: Սրանք, մոտիկ  
հարաբերություններ ունենալով թյուրքական կառավարության:

<sup>1</sup> Լեո. Գր. Արժրուհի, հ. Բ., էջ 441:

<sup>2</sup> «Փորձ», 1876, 2-րդ դիմի, էջ 408—411:

<sup>3</sup> «Փորձ», 1877, 1-ին տարի, № 3, էջ 390—391:

բարձրաստիճան անձանց հետ, շահավետ պաշտոններ ստանալով,  
մեծ ազդեցություն են ձեռք բերում ազգային ժողովի և պատրիարք-  
ների վրա:

Հասկանալի է, որ այս խումբը չէր կարող ազգի շահերի  
պաշտպանը, նրա իղձերի արտահայտիչը լինել: Սրանք իրենց քա-  
ղաքականությամբ դեմ էին գնում ազգային շահերին և գործիք  
դառնում թյուրքական բռնապետության ձեռքին: Շահագրգռված լի-  
նելով Թյուրքիայի ամբողջականությունը պաշտպանելու հարցում,  
սրանք դեմ էին դրսի պետությունների, մասնավորապես Ռուսաս-  
տանի, միջամտությանը Թյուրքիայի ներքին գործերին և գտնում  
էին, որ ներկա պարագաներում հարկ չկա գծովելու կառավարու-  
թյան հետ, և ամեն կերպ աշխատում էին սիրաշահել նրանց, ցույց  
տալ իրենց հավատարմությունը: «Իսկ ի՞նչ է նշանակում հավա-  
տարմություն պաշտոնի մեջ դեպի մի անկարգ կառավարություն,  
որ արտաքին խարուհիկ ձեռքի տակ միշտ իր հպատակների ար-  
յունն է ծծում,—գրում է Մելիքզադեն (Բաֆֆին):—Մի այսպիսի  
հավատարմություն նույն նշանակությունն ունի, որպես մի խումբ  
ավազակների հավատարմությունը դեպի իրանց պետը կամ ղլխա-  
վորը»<sup>1</sup>:

Այս «մեծամեծները» թյուրքասեր և հակառուսական քաղաքակա-  
նությունը պաշտպանում էին արևմտահայ խոշոր վաճառականներն  
ու արդյունաբերողները, որոնք իրենց տնտեսական գործարքներով  
կապված էին արևմտաեւրոպական երկրների, ամենից առաջ Անգ-  
լիայի հետ, որոնց համար երբեք ձեռնառու չէր Ռուսաստանի միջա-  
մտությունը արևմտահայերի ազգային գործերին և վերջինիս ազդե-  
ցության ուժեղացումը Թյուրքիայում: Այս հոսանքի առջևից էր  
դնում Զմյուռնիայի հայ առևտրական գաղութը, որը սերտորեն  
կապված էր Անգլիայի տեքստիլ արդյունաբերության կենտրոն  
Մանչեստրի հետ, որտեղ ժամանակի ընթացքում կազմվեց հայկա-  
կան գաղութը գլխավորապես Զմյուռնիայի վաճառականներից:

Թյուրքիայի ներքին գործերին արտաքին պետությունների՝  
մասնավորապես Ռուսաստանի շմիջամտելու վերոհիշյալ հոսանքի  
տեսակետները լիովին բաժանում էր Զմյուռնիայում հրատարակ-  
վող «Արևելյան մամուլը» (խմբագիր Մամուրյան):

<sup>1</sup> «Մշակ», 1878, № 41, «Կեսու ուշ չէ»:

«Արևելյան մամուլը» խիստ պայքար է մղում Ռուսաստանի՝ Թյուրքիայի ներքին գործերին միջամտելու և Ռուսաստանի ազդեցության դեմ: Իր «Համադեհի» մի շարք համարների առաջնորդողներում Մամուրյանը հարձակումներ է գործում այն գործիչների դեմ, որոնք հայ ժողովրդի փրկությունը ուսաց օգնության մեջ էին տեսնում: Այդպիսիներին անվանում է «Հյուսիսային հսկային ոտք լցող» և այլն... Այն ժամանակ, երբ բալկանյան ժողովուրդները ազատագրական պայքարի գրոշ էին բարձրացրել և հերոսաբար կռվում էին թյուրքական բռնակալական լծի դեմ, «Արևելյան մամուլը» իր առաջնորդողներից մեկում գրում է. «Թյուրքիո սլավոններն իրենց հայրական կառավարության դեմ ապստամբած են (ընդգծումը մերն է):—Ա. Ն.) և եթե պետք է հավատալ լրագրիներուն, Ռուսաստանն հաշտ աչոք կնայի այս ապստամբությանը: Այս մասին պարտ է իրավունք տալ սուս կառավարությանը, բայց մարդակամա կհիշե որ իր հպատակները սուլթանին հպատակներեն լավագույն վիճակի մեջ չեն դառնվեր»<sup>2</sup>:

Նրբ պատերազմը արդեն սկսվել էր Ռուսաստանի և Թյուրքիայի միջև և պարզ էր արևմտահայ ժողովրդի սպասելիքները այդ պատերազմից և դեպի Ռուսաստանն ունեցած նրա վերաբերմունքը, «Արևելյան մամուլը» վերջին ճիգերն է գործադրում ժողովրդին «անխուսափելի կործանումից»՝ Ռուսաստանի գիրկը նեղվելուց փրկելու համար: «Ռուսիա Թուրքիո Բրիտանիոյ կամաց հակառակ Բրիտանիոյ ախոյան կկանգնի. բայց որ իրավամբ չգիտենք: Եթե պատերազմ անհրաժեշտ էր, Ռուսիա իրավունք ուներ հրատարակելու, միթե քրիստոնեից վիճակեն գատ ուրիշ շարժառիթներ մը չունի...»: «Մահու և կենաց խնդիր մե հայության համար արդի պատերազմին ելքը,—շարունակում է Մամուրյանը,—և եթե անվնաս անցնեն այս ճգնաժամը՝ հավանական է, որ այսուհետև ստափի և իր բոլոր բարոյական և նյութական կարողությունները զարգացնելու փուլա տանի: Արդ ուր կգտնվի արդարության դատը՝ երե ոչ Թյուրքիա, ու մեր հայրենիքն է, ուր մեր շահերը, ուր հայությունը զարգանալու միջոցներ ունի առանց կորսվելու: Հայը շատ սև ու ողբալի օրեր տեսած է, և տարակույս չկա, որ իր բարոյական

<sup>2</sup> «Արևելյան մամուլ», 1875, հոկտեմբ., Առաջնորդող:  
<sup>3</sup> Նույն տեղում, փետրվար, էջ 90:

արիությանը այս ներկա նյութական տառապանց ալ պիտի տոկանք անմիտ քաղաքականությամբ, ինքզինքն բջնամու ձեռք չմատնե և իր ազգական մեղությունը շղատապարտե»<sup>1</sup>: (ընդգծումներն ամենուրեք մերն են:—Ա. Ն.): Այսպիսով, «Արևելյան մամուլի» կարծիքով, հայերը, Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով, մեղություն են դատապարտում իրենց ապագան:

«Արևելյան մամուլը», հաղորդելով պատերազմի՝ սուլթանին կատարած այցելությունը, վարդապետին կերպով է նկարագրում ընդունելության ծիսակատարությունը, միաժամանակ անվերապահորեն խոշոր տառերով հաղորդում է «հայակեր» սուլթանի կեղծավոր և դեմագոգիկ ճառը հայոց ազգի հասցեին, անվանելով այն «կայսերական շնորհ»<sup>2</sup>:

Եթե «կայսերական շնորհ» կարելի էր համարել ասիական այդ բռնապետի շինծու և կեղծավոր խոսքերը, ապա հետևողական լինելու համար պ. խմբագիրը կարող էր համոզված հայտարարել, որ հայ ժողովուրդը մեծապես երախտապարտ է Թյուրքիային և անձամբ Սուլթան Համիդին, որը հայոց երկիրը վարարեց միլիոնավոր անմեղ հայերի արյունով: «Արևելյան մամուլը», պայքարելով ուսական օրինետացիայի կողմնակիցների դեմ, դեմ լինելով Ռուսաստանի միջամտությանը արևմտահայերի ներքին գործերին, սակայն բոլորովին չի առարկում, երբ այդ «բարեգործի» դերը Անգլիան է ստանձնում, միաժամանակ նա մեծ հույսեր է կապում Թյուրքիայի ներքին վարչական ռեֆորմների, այսինքն Սուլթան Համիդի կեղծավոր ու դեմագոգիկ խոստումների՝ «կայսերական շնորհ»-ի հետ: Միանգամայն պարզ է, որ «Արևելյան մամուլը» այս հարցում հանդես է գալիս Անգլիայի հետ տնտեսական շահերով կապված արևմտահայ խոշոր բուրժուազիայի շահերի պաշտպանության պիրքերից և կամա թե ակամա ջուր լցնում և «Թյուրքոֆիլներին», և «անդլոֆիլներին» շրաղացին: Քաղաքական նման պայմաններում, երբ մամուլի և դրչի գործիչներից պահանջվում էր ազգին ճիշտ ճանապարհ ցույց տալ, նրան դերձ պահել զանազան մոլորություններից, բնական է, որ «Արևելյան մամուլի» և Մամուրյանի ու նմանների բռնած հակառուսական քաղաքականությունը ազգին՝

<sup>1</sup> «Արևելյան մամուլ», 1877, ապրիլ, էջ 155, «Քաղ. տես.»:  
<sup>2</sup> Նույն տեղում, օգոստոս, էջ 305:

բացի վնասից՝ օգուտ բերել չէին կարող: Այսպիսով, «Արևելյան մամուլը» և նրա կողմնակիցները չեն հասկանում հայկական հարցի բուն էությունը և, կտրելով այն պատմա-հաղափական կոնկրետ պայմաններից, չըմբռնելով հայ ժողովրդի առաջ դրված երկրճառանքը, չեն կարողանում երշտ ուղիներ նշել նրա լուծման համար: Բոլոր նրանք, ովքեր հայ ժողովրդի ազատագրության հույսերը կապում էին Ռուսաստանի արտաքին քաղաքականության հաջողութունների հետ, նրանք, ովքեր հայերի ֆիզիկական փրկությունը Ռուսաստանի օգնության մեջ էին փնտրում, երբեք էլ ցարական կարգերի ջատագովներ չեն եղել: նրանցից շատերը ցարիզմի կատաղի թշնամիներ են եղել: Սակայն, ելնելով պատմական կոնկրետ պայմաններից, նրանք (այսինքն ուսական օրիենտցիայի կողմնակիցները) Ռուսաստանի և Թյուրքիայի միջև ճիշտ ընտրություն են կատարել, ելնելով հայ ժողովրդի հետագա զարգացման հուսաատու հեռանկարներից:

Այսպես, օրինակ, հայ նշանավոր ռեյուցիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որ իր ամբողջ կյանքում պայքարել է ցարիզմի դեմ, որը հայ ժողովրդի ազատագրման գործը կապել է Ռուսաստանում դեմոկրատական ռեյուցիայի հաղթանակի հետ, սակայն, որքան էլ դա տարօրինակ թվա որոշ մարդկանց համար, արևմտահայերի ազատագրման հարցում, երբ խնդիրը վերաբերում էր Թյուրքիայի և Ռուսաստանի միջև ընտրություն կատարելուն, կամ արևմտահայերի ներքին գործերին Ռուսաստանի կամ Անգլիայի միջամտության հարցին, որոշակի կերպով իր հայացքը դեպի Ռուսաստանն է դարձնում:

Այս տեսակետից շափաղանց հետաքրքրական է նշանավոր ռեյուցիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանի «Պոլսահայ լուսավորչական համայնքը» հոդվածը կամ տեղեկագիրը, որն, ինչպես հայտնի է, կազմել է 1861 թ. դեկտեմբերին, Պոլսում եղած ժամանակ, ուսական դեսպանին հանձնելու համար: «Հայերի վրա,— գրում է Նալբանդյանը,— վաղուց ի վեր Թյուրքիայում ծանրացած աղաղակող անկարգությունները արևելյան պատերազմից հետո ծայրահեղության հասան: Սրա գլխավոր սկզբնապատճառը եղան ազգային-կրոնական մի քանի անձինք, որոնք անուն են հանել միայն շնորհիվ իրենց հարստության: Այս մարդիկ,— շարունակում է Նալբանդյանը,— հասնելով պետական պաշտոնների և հետևա-

րա՝ մտիկ հարաբերություններ ունենալով բյուրեղ կառավարության ազդեցիկ զեմլեերի հետ, յուրացրել են իրավունք խառնվելու հայկական բոլոր գործերին, վարելու այդ գործերն ուղղակի, կամ Կ. Պոլսի հայ պատրիարհների միջոցով և վերջապես դրան առաջ իսկ խաղալու հայ ժողովուրդը ներկայացնողների դերը»<sup>1</sup> (ընդգրծումն իմն է— Ա. Ն.):

Այնուհետև Նալբանդյանը, խոսելով արևմտահայ ժողովրդի դեպի Ռուսաստանն ունեցած համակրանքի մասին, աշխատում է շահագրգռել ուսական կառավարությանը միջամտելու «Թյուրքահայերի ազգային գործերին», հիշեցնելով այդ ուղղությամբ Անգլիայի և Ֆրանսիայի մաներները հայերին իրենց կողմը դրավելու ուղղությամբ: «Մինչ դեռ հայերը,— գրում է Նալբանդյանը,— ամբողջ Թյուրքիայում տրամադրված են Ռուսաստանի օգտին և եթե ուսական կառավարության կողմից ցույց տրվի նրանց թեկուզ և ամենափոքր օգնությունը, այն ժամանակ ֆրանսիական և անգլիական կառավարությունները կզրկվեն նրանց վրա ներգործելու հնարավորությունից, հետևաբար և կանգ կառնի նրանց կրոնի և ազդեցության պրոպագանդը»<sup>2</sup>:

Այսպես ուրեմն, Նալբանդյանը, օգտադործելով առիթը, արտահայտել է իր տեսակետը ժամանակի ամենահուզող հարցերից մեկի, արևմտահայ ժողովրդի ազատագրման հնարավոր ուղիների մասին: Այս տեսակետին են եղել հայ նշանավոր լուսավորիչներ Խաչատուր Աբովյանը, Ս. Նազարյանը որպես ժամանակի հայ մտավորականության հեռատես և առաջագեմ գործիչներ, որոնք Թյուրքական բռնապետության լծից հայերի ազատագրման միակ ելքը Ռուսաստանի միջամտության և օգնության մեջ էին տեսնում, որը, պատմական ավյալ ժամանակաշրջանի համար հայ, ժողովրդի ապագա հուսայի հեռանկարների տեսակետից, հարցի միակ ճիշտ լուծումն էր:

Վերը ասածներից պարզվեց, որ արևմտահայերի մի աննշան, սակայն իրենց հարստության և Բ. Դոան հետ իրենց ունեցած կապերի շնորհիվ «ազգային գործերի» վրա մեծ ազդեցություն ունե-

<sup>1</sup> Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, «Պոլսահայ լուսավորչական համայնքը», 1935, էջ 54:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 60:

ցող հատվածը ղեմ էր արևմտահայերի ամեն տեսակի ակախիվելույթներին՝ ուղղված թյուրքական կառավարութեան ղեմ, ղեմ էր նաև Ռուսաստանի և Թյուրքիայի ներքին գործերին միջամտելուն: Ահա սրանք էին, որ ռուսահայերի վիճակի մասին թյուր կարծիք էին ստեղծել արևմտահայ աշխատավորութեան շրջանում՝ վերջինիս մոլորութեան մեջ գցելու համար: Սրանց կարծիքով ռուսահայերը դուրկ են որևէ ապագայից և մատնված են անխուսափելի կորստան: Սրանց հետ կապված էր նաև պատրիարք Ներսես Վարժապետյանը, որն, ինչպես հիշեցինք վերևում, Բաղկանյան պատերազմի ժամանակ թյուրքական կառավարութեանը պաշտպանելու նպատակով մի շրջաբերականով դիմեց հայ ժողովրդին: Այնտեղ ասված է. «Սերդ հայ ազգն, որս ճակատագիրն այսչափ դարեր ի վեր նվիրագործյալ կատերով միացած է օսմանյան ճակատագրին հետ, չի կրնար անտարբեր մնալ օսմանյան տերութեան դանված արդի ծանրակշիռ պարագայոց մեջ, այլ պարտավոր է ինչպես ամեն ժամանակ, նույնպես և առավել ևս ներկա ժամանակին մեջ անկեղծ օժանդակութուն մատուցանել: Այս օժանդակութունը ընկելով հայրենասեր հայր նույնիսկ իր ազգային շահը պաշտպանած կըլլա, վասնզի օսմանյան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է: Նույնիսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, արուը, ընտանիքը և պատիվն ու կյանքը պաշտպանել ըսել է»... վերջապես ամենքս ի մի բերան և մի սիրտ շինայենք մեր վեհապետին և մեր հայրենյաց պաշտպանութեան համար որևէ դժոխութուն և ծառայութուն, որոնք ներկայիս և ապագային մեջ մեր ազգին համար փառք և օգուտ կրերեն»<sup>1</sup>:

Այս շրջաբերականը մեծ գայրույթ առաջ բերեց հայ աշխատավորական մասսաների շրջանում, որոնք դարեր շարունակ իրենց ուսերի վրա էին տարել սուլթանական Թյուրքիայի բռնակալական լուծը: Ինչպես սպասելի էր, սրանից շատ դո՛ւ մնաց սուլթանը, գո՛հ էին նաև հայ էֆենդիները, որոնց կանաչք, ինչպես ասացինք, ընկերություն կազմեցին թյուրքական բանակի վիրավորներին օգնելու համար: Արևմտահայ այս հատվածի քաղաքականությունից չափազանց գո՛հ էր նաև Անգլիան, Ռուսաստանի ամենամոլլի հակաակորդը Բաղկանյանների և Մերձավոր Արևելքի հարցերում, որին

<sup>1</sup> Սարուխան «Հայկական խնդիրն և ազգային սամանագրութունը Թյուրքիայում», էջ 116—117:

ցանկալի չէր Ռուսաստանի ազդեցութեան ուժեղացումը հիշյալ երկրներում:

Անգլիան շահագրգռված էր Թյուրքիայի ամբողջականությունը պաշտպանելու մեջ և ղեմ էր Ռուսաստանի միջամտութեանը Թյուրքիայի ներքին գործերին: Արևմտահայ գործիչների որոշ մասը՝ Խրիմյան Հայրիկ, Օտյան և ուրիշները, հայերի ազատագրման հույսերը կապում էին Անգլիայի միջամտութեան հետ. սրանց էին պաշտպանում նաև Անգլիայի և Հնդկաստանի ազդեցիկ հայերը: Սակայն պատերազմի նախօրյակին և պատերազմի ընթացքում զնալով ուժեղանում և մեծ ազդեցություն է ձեռք բերում արևմտահայերի այն հոսանքը, որը հայերի ազատագրությունը ռուսական օգնութեան մեջ էր տեսնում: Այս հոսանքի աչքի ընկնող ներկայացուցիչներից էին՝ Խորեն Նարպեյ և Իզմիրլյան կախկոպուսները:

Արևմտահայ բուն ժողովուրդը, որն իր անձնական կաշվի վրա զգացել էր թյուրք փաշաների և ավազակաբարո ջրղերի և շերքեղների հարստահարիչ լուծը, նույնպես համոզված կերպով իր հայացքը դեպի Ռուսաստանն էր դարձրել և նրանից էր սպասում իր փրկությունը: Հայերի դեպի Ռուսաստանն ունեցած աճող համակրանքը և Թյուրքիայի ղեմ ծայր առած հուզումները անհանգրստացնում են Անգլիային, որի գործակալները Թյուրքիայում հետևում են և սխտեմատիկ կերպով հաղորդում իրենց կառավարութեանը Փոքր Ասիայում կատարվող քաղաքական իրադարձությունների մասին: 1876 թ. սեպտեմբերի 11-ին Լոնդոն ուղարկած իր դեկլարացիայում Պալսի անգլիական դեսպանը գրում է.

«Հայերի մեջ արտահայտվեց դժգոհութեան շարժում, որը կարող է լուրջ կերպարանք ստանալ: Նրանք իրենց գանգատները ներկայացրել են Բ. Դոան, և լսում եմ, որ **ճառագիթ են նույնիսկ սուլթանին դիմելը**»:

Այս գանգատների արդար լինելը հաստատելուց հետո դեսպանը շարունակում է. «Մի բարձրաստիճան հայ անձնավորություն, որ անմիջապես կապ չունի կառավարութեան հետ, ինձ հայտնեց այսօր, որ թեպետ Բ. Դոանն է սկզբնական պատճառն իր ազգակիցների (հայերի: Ա. Ն.) այժմյան դժգոհությունների, բայց տարակույս չկա, որ ներկա հուզումը ռուսական գրգռումների արդյունք է: Նա կրկնեց, ինչ որ ես արդեն լսել էի, այն է, որ հայոց ուսյալ դասակար-



գի՛ մեծամասնությունը խիստ կերպով հակառակ է Ռուսիային, քայց ժողովուրդը, բազմությունը, որոնք իսկապես տանջվում են այդ հարստահարություններից, այդպես չեն և հավատացնում են, որ եթե փոփոխություն լինի (այսինքն ուսական տիրապետություն գա) ավելի լավ կլինի»<sup>2</sup>:

Այնուհետև զեկուցագրում մանրամասնորեն նկարագրվում է հայերի աճող համակրանքը ռուսների նկատմամբ, դժգոհությունները թյուրքիայի դեմ ուղղված և զգուշացնում է իր կառավարությանը դրա վտանգավոր հետևանքներից: Ահա թե ինչու անդլիական ղեկավանք ամեն կերպ աշխատում է իր կողմը դրավել արևմտահայ գործիչներին, նրանց զանազան խոստովանքներ և հույսեր ներշնչելով: Ինչպես ռուսահայ, նույնպես և արևմտահայ հոսանքների միջև առանձնապես սուր պայքար է սկսվում 1877 թվին արևմտահայերի զինվորագրության հարցի շուրջը: Հայտնի է, որ մինչև 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմը թյուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյաները ազատվում էին զինվորական ծառայությունից, որի դիմաց հատուկ հարկ էին վճարում: Պատերազմի տաք շրջանում հայերի զինվորագրության պահանջը մեծ հուզում է առաջացնում արևմտահայ ժողովրդական մասսաների մեջ, որին արձագանքում է թե արևմտահայ և թե ռուսահայ ժամանակակից պարբերական մամուլը: Պոլսի հայ լրագրերը, որքան այդ թույլ կուսյին գրաքննական հարավորությունները, խիստ քննադատության են ենթարկում սուլթանի հրամանը: Ավելի խիստ ոճով է արտահայտվում «Նոր դարը», որի հրատարակումը այդ պատճառով էլ փակվում է:

«Մշակը» «Կ. Պոլսի հայերի շարժումը» վերնագրով հոդվածում, խոսելով հայերի զինվորագրության հրամանի և հայերի բռնած դիրքի մասին, գրում է. «Թյուրք կառավարությունը, որ պարտավորություն է դնում հայերի և առհասարակ քրիստոնյա հպատակների վրա, օսմանյան քաղաքացու անունով պաշտպանել թյուրքիան, իրենց բնական երկիրը, թյուրք կառավարությունը, որ պահանջում

<sup>1</sup> Երեկ ուսյալ տեղով՝ անդլիացին հասկանում է հայ էֆենդիներին, քանի որ թյուրքահայ ինտելիգենցիայի մեծագույն մասը ռուսական օրինաացիայի կողմակից է եղել (ժամոթ.—Ա. Ն.):

<sup>2</sup> Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանազրույթունը թյուրքիայու», էջ 145:

է հայերից կատարել քաղաքացու ամենաժանր պարտավորությունը, զո՛հ բերել իրա կյանքը թյուրքիայի համար, միթե տված է նրան փոխադարձ իրավունքներ, որ ապրի օսմանյան քաղաքացիների նման»<sup>1</sup>: Այնուհետև, հոդվածում խոսելով հայերի թշվառ դրության մասին, մեջբերում կատարելով Կ. Պոլսում հրատարակվող շափագանց զգուշավոր «Մասիս» լրագրում տպված մի թղթակցությունից, որը մի փոքր էպիգոդ է հայերի ողջ տխուր կյանքի, հիշելով Ալաշկերտի դավառների հայերի նկատմամբ կատարած բռնությունները, հարց է տալիս,—այդ բոլորից հետո հայերը պարտավո՞ր են զորք տալ, իհարկե, ո՛չ, պատասխանում է «Մշակը»: Թյուրքական կառավարությունը, տեսնելով ընդհանուր դժգոհությունները, փորձում է իր նախնական որոշմանը մի այլ ձև տալ, առանց նրա բովանդակությունը փոխելու: Հորինվում է մի նոր կանոնադրություն, ըստ որի հայերը պետք է պահակազոր կազմեն հատկապես մայրաքաղաքի պաշտպանության համար: Սակայն այդ մաներները գործին չեն օգնում: Հայերը ոչ մի կերպ չեն համաձայնվում զինվորագրվելու և արշուն թափելու թյուրքիայի համար և այն էլ Ռուսաստանի դեմ, որից նրանք այնքան սպասելիքներ ունենին ներկա պատերազմում: Հարցը քննարկվում է ազգային և եկեղեցական ժողովներում: Ժողովրդական մասսաների ճնշման տակ ժողովը մերժողական պատասխան է տալիս: Այդ մասին «Մշակի», թղթակցը Կ. Պոլսից գրում է. «Այս կետերը շատ քննադատությունների ենթակա եղան և վերջապես սա համոզում ունեցան թե ինչ ալ լինեն թ. կառավարության դիտավորություններն, մեզ համար վնասակար է այժմ զինվորագրությունը: Մեր ազգային շահ կպահանջե Ռուսիայի դեմ զենք չբարձրացնել: Ուստի եկեղեցական համագումար ժողովն միաձայն որոշեց, թե այս պատերազմի ժամանակ հայերեն զորք առնուլ «տարածամ է»<sup>2</sup> (ընդգծումն մերն է:—Ա. Ա.):

Հարցի լուծման նման եղանակից դժգոհ էր նաև «Մեզու Հայաստանին», որն անդրադառնալով այդ հարցին,—գրում է. «Երեվում է, որ Կ. Պոլսի հայ հանձնաժողովը զինվորագրության վերաբերյալ մերժող պատասխան է պատրաստել ուղղելու Բարձրագույն դրոսն: Չնայելով, որ Ս. պատրիարքն աշխատում է խոհեմ պատաս-

<sup>1</sup> «Մշակ», 1878, № 9, «Կ. Պոլսի հայերի շարժումը»:

<sup>2</sup> Նույն տեղում, № 4:

խանութ բավականացնել դրան, մի քանի եկեղեցականներ, որոնց մեջ զխաւոր դերը խաղում է Խորեն եպիսկոպոս Նարբեյը, գրգռում են ժողովուրդը դեպի դիմադրության կառավարության դեմ<sup>1</sup>։ Հայերի մերժողական պատասխանից սաստիկ դժգոհ մնաց ոչ միայն Քյուրքիան, այլև նրա տրադիցիոն «պաշտպան» Անգլիան։ Չափազանց հետաքրքիր է այդ տեսակետից Պոլսում հրատարակվող «Stambol» թերթում (խմբագիր մի անգլիացի ոմն—Լաֆան Հանլի) հայերի դեմ ուղղված մի հոդվածը, որը լիքն է կշտամբանքներով և վիրավորանքներով։ Տեսնենք ինչ է գրում պարոն անգլիացին. «Այսօր հայրենիքը դժբախտության վտանգի մեջ լինելով, ամեն ատելություն, ամեն գանգատներ, մինչև անգամ շատ հիմնավոր էլ լինեն, հարկավոր է մի կողմ թողուլ և միմիայն հայրենիքի փրկության վրա մտածել։ Ուրեմն հայերի եկեղեցական ժողովին վճիռը, որ բացարձակ և որոշ կերպով մերժում է գինվորագրությունը, շատ զարմանալի և ցավալի է»։ «Էկեղեցիս, հայերի այս արածը սուլթանի դեմ ապստամբություն է և կառավարությունը իրավունք և պարտավորություն ունի խստիվ պատժել այդ ապստամբությունը... Անք ավելորդ ենք համարում պնդել սա կետի վրա թե որչափ զարշիլի ասերախտություն է հայերի կողմից պաշտպանել շուգիլ իրանց հայրենիքը...»։ Հայերի դեմ ուղղված պարսավանքներից ու սպառնալիքներից հետո, խորհուրդ է տալիս և հույս հայտնում, որ հայերը հետ կդառնան այդ որոշումից և «խոհեմաբար կընդունեն գինվորագրության սկզբունքը»<sup>2</sup>։

Անգլիացիները իրենց բազմաթիվ գործակալների միջոցով ամեն կերպ աշխատում էին, հայերի միտքը պղտորելով, շեղել իրենց բուն ազգային շահերից, հակադրել նրանց ուսական պետությունը։

Քյուրքիան լեզվով և հայերեն տառերով հրատարակվող «Մանգումեի էֆքեար» լրագիրը հարկ եղած ձևով պատասխանում է «Stambol»-ին։ «Մանգումեին» շափազանց դիպուկ կերպով գրում է. «Նրանի թե «Stambol»-ը փոխանակ խրատներ կարդալու մեր ազգին որ գառնուկի պես հանդարտ և հլու, շարունակ հինգ հարյուր տարի իրա պարտավորությունները կատարել է հավատարմությամբ»։

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1878, № 3։

<sup>2</sup> «Մշակ», 1878 թ., հունվար 24, № 7—8։

ինքը, որ անգլիացի է, թող իր անգլիական ազգին հիշեցնի իրա պարտավորությունները, որ մինչև այժմ բարոյապես մեղ տված հույսերը շարդունավորեց, թող անգլիական ազգին արհամարհանք և պատիժ որոշե, որ իրա պարտավորությունները չկատարեց»։ Այնուհետև «Մանգումեին» գտնում է, որ Անգլիան է Քյուրքիայի բարեկամը, թող նա օգնե նրան, որի օգնությունն իրոք սեռել նշանակություն կարող է ունենալ Քյուրքիայի համար, իսկ հայերը ոչինչ անել չեն կարող։ «Ինչ զարմանալի բան է,—շարունակում է «Մանգումեին»,—որ մի ժամանակ անգլիական ոսկիները մեծ բաղձովությունով լցվեցան մեր մայրաքաղաքը և օսմանյան ոսկիներին շատ սիրելով, նրանց տոկոս անուն դրին և իրանց որդի արին։ Այժմ անգլիացի մայրերը իրենց օսմանցի ձագերով քաշվել գնացել են Անգլիա»<sup>1</sup>։

Այսպես ուրեմն, Քյուրքիան և Անգլիան կարող էին զայրանալ կատաղության աստիճան, թրքասերները և անգլիասերները կարող էին դժգոհ լինել, սակայն հայերը, ելնելով իրենց ազգային շահերից, շքանկացան արյուն թափել Քյուրքիայի համար, որը բռնակալ կերպով հարստահարում էր իր հպատակ միլիոնավոր ժողովուրդներին։ Ինչ վերաբերում է «հայրենիքի» պաշտպանությանը, որի մասին հիշեցնում էին Քյուրքիայի պաշտպանները, դրա համար հայերը պետ է զենք բարձրացնելն հենց իրեն՝ Քյուրքիայի դեմ, որը, բռնի կերպով զավթելով իրենց հայրենիքը, ստեղծեցել էր իրենց և մինչև այսօր էլ դեռ շարունակում է նույն օտար ուժերի աջակցությամբ. ապօրինի կերպով իր ձեռքին պահել Հայաստանի մեծագույն մասը։

Գնալով հայ ժողովրդի համակրանքը Ռուսաստանի նկատմամբ աճում է, մասնավորապես պատերազմի ժամանակ, որի հետ մեծ հույսեր էին կապել։

Թե ինչպիսի օգնություն են ցույց տալիս հայերը ուսական բանակին, այդ մասին կիսուսներ հաջորդ գլխում, որը մեր աշխատության հիմնական նյութն է կազմում։

<sup>1</sup> «Մշակ», 1878, № 7, հունվար 24։

ՀԱՅՅՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1877-1878 ԹԹ.  
ՌՈՒՍ-ԹՅՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԳՄԻՆ

Ինչպես ասացինք նախորդ գլխում, արևելյան ճգնաժամը գնալով խորանում է: Եվրոպական պետություններին չի հաջողվում դիմանադիտական ճանապարհով լուծել կոնֆլիկտը: Թյուրքիան, օգտվելով եվրոպական մեծ պետությունների միջև եղած շահերի ներհակությունից և հակառուսական ուժերի, մասնավորապես Անգլիայի պաշտպանությունից, համառ կերպով հրաժարվում է որևէ դիջում անելուց՝ հօգուտ բալկանյան սլավոնների և մերժում է Ռուսաստանի այդ նպատակով արված բազմաթիվ առաջարկները: Ռուսական ցարիզմը, որը բալկանների և նեղուցների հարցով Թյուրքիայի դեմ վաղուց պատերազմի էր պատրաստվում, այժմ օգտագործելով առիթը և իր կողմն ունենալով պատերազմի համար երկրի ներսում ստեղծված նպաստավոր հասարակական կարծիքը, Թյուրքիային պատերազմ է հայտարարում:

\* \* \*

Պատերազմը սկսվում է 1877 թ. ապրիլի 12-ին միաժամանակ երկու ռազմաճակատում՝ բալկանյան և կովկասյան: Ինչպես միշտ, այս անգամ նույնպես գլխավորը Արևմտյան՝ Բալկանյան ռազմաճակատն էր, որը պատերազմի ելքի համար հետադաշում իրոք վճռական նշանակություն ունեցավ: Սակայն զրանով երբեք չի նսեմանում կովկասյան ռազմաճակատի դերը պատերազմի հաջող ելքի համար, հատկապես 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ: Առաջին, որ կովկասյան ռազմաճակատում ռուսների դեմ գործող թյուրքական բանակը արժատապես տարբերվում է նախկին պատերազմների բնագրում եղած բանակներից, որոնց հետ գործ են ունեցել Պասկևիչը, Բեհբուջիբեկը և Մուրադլույը:

Եվրոպական պետությունների (Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի) օժանդակությամբ թյուրքական բանակը այս պատերազմում հանդես է գալիս որպես տեխնիկապես լավ սպառազինված և լավ վարժեցրած բանակ, որի գլուխ էին կանգնած ժամա-

նակակից պատերազմը վարելու գործում ունակ զորավարներ, այդ թվում անգլիական սպաներ և գեներալներ:

Երկրորդ՝ Թյուրքիան զգալով Բալկաններում իր գրուբյան անկախությունը և համոզված լինելով, որ վաղ թե ուշ կորցնելու է իր տիրապետությունները Բալկաններում, ամեն կերպ աշխատում է ամուր պահել իր ստիակական տիրապետությունները: Եթե բալկաններում թյուրքերը կոչվում են իրենց պատիվը պաշտպանելու, ապա այստեղ, այսինքն՝ Ասիայում, նրանք պայքարում են իրենց գոյությունը պաշտպանելու համար ... համոզված լինելով Բալկանյան թերակղզում իրենց տիրապետությունների անկախությունից մեշ, նրանք (թյուրքերը:—Ա. Ն.) հասկանում են, որ իրենց վերջին ապաստարանը դառնալու է Ասիան: Ուստի իրենց ստիակական տիրապետությունների պաշտպանության համար այժմ շնն խնայում ոչ միջոցներ և ոչ զրամո՞, գրում է գեն. Քիշմիշյանը:

Ահա թե ինչու 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ կովկասյան ռազմաճակատը, շնայած իր ստանձնած երկրորդական դերին, այնուամենայնիվ, մեծ նշանակություն է ստանում պատերազմի հաջող ելքի համար:

Համաձայն գլխավոր հրամանատարության՝ ապրիլի 11-ին խշեցրած զադանի հրամանի, գործող կորպուսի հրամանատար գեներալ ազուտանսկ Լորիս Մելիքովը մշակում է գործողությունների օպերատիվ պլանը, որի հիմնական նպատակն էր՝ արագ և հարձակողական գործողություններով հակառակորդի տեղադրության խորքը մտնել և որբան հնարավոր է, իր կողմը գրավելով թշնամու մեծ բանակությամբ ուժեր, օգնել Բալկանյան ռազմաճակատում գործող ռուսական բանակին: Պլանի համաձայն գլխավոր հարվածը նախատեսվում էր կենտրոնից հասցնել Ալեքսանդրապոլ—Կարս ուղղությամբ, որի պատասխանատվությունն անմիջապես դրվում է գործող կորպուսի հրամանատար Լորիս Մելիքովի վրա: Աջ թևում պետք է գործեր Երևանյան ջոկատը Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ, իսկ ձախ թևում՝ Ախալցխայի ջոկատը գեներալ Լ. Գեվեյի գլխավորությամբ:

Հրամանատարության ձեռք առած միջոցները, հարձակման օրվա և նրա հետ կապված խնդիրների մասին արված կարգադրու-

1 Кизимов С. Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб 1884, стр. XII.

Կարևորագույն էր այս կողմը

Գլխավորը կարգադրություն է

թյունները չի հաջողվում գաղտնի պահել: Պատերազմական գործողությունների նախորդ օրը այդ լուրը արագորեն տարածվում է ինչպես ողջ ռազմաճակատում, այնպես էլ սահմանից այն կողմը: Ապրիլի 11-ին երեկոյան ժամը 11-ին Կարսից եկած մի հայ լրարբեր հայտնում է, որ թյուրքական բոլոր գյուղերը խոսում են առաջիկա զինվորական հարձակման մասին: Զարմանալին միայն այն էր, որ այդ լուրը թյուրքական սահմանապահներին չէր հասել, կամ թե լսել և կարևորություն չէին տվել դրան, որոնք հանգիստ քնել էին և չէին նկատել ռուսական զորքերի անցումը Արփաշայից:

Մշակված դիսպոզիցիայի համաձայն, դեռևս առաջինը անցնում է հեծելազորը, որին հետևում է հետևակը և ապա ամենաանհրաժեշտ գումակը: Հեծյալները առանց կրակոցի շրջապատում և գերին վերցնում թյուրքական բոլոր սահմանապահներին, բացառությամբ մեկ պահակակետի, որտեղից կրակ են բաց անում ռուսների վրա, որի ընթացքում սպանվում է մի կազակ: Ապրիլի 11-ի լույս 12-ի զինվորը թյուրքական պահակակետերը գրոհելու ընթացքում ռուսները գերի են վերցնում 9 սպա և 96 շարքային զինվոր, որոնց անմիջապես ուղարկում են Ալեքսանդրապոլ:

ներսոց  
շուսոց

Ռուսական բանակի սահմանն անցնելու մասին Կարսում իմանում են ապրիլի 13-ին միայն: Այդ լուրը հասցնում է մի թյուրք հեծյալ, որին հաջողվում է փախչել ռուսական զորքերի՝ թյուրքական սահմանապահներին հանգիստելու ժամանակ:

Թյուրքերը ձեռք էին առել բոլոր հնարավոր միջոցները ռուսներին հակահարված տալու համար. եվրոպական, մասնավորապես անգլիական ճարտարապետների և սպանների օգնությամբ, կարգի էին բերել գոյություն ունեցող ամրությունները, կառուցել նորերը, ստեղծել էին ռազմամթերքի և պարենի անհրաժեշտ պաշարներ: Զորքերի բանակն ավելացնելու համար բանակ էին կանչվել բոլոր նրանք, ովքեր պետք է կանչվեին 1877—1878 թթ. ընթացքում, այսինքն՝ ժամկետից երկու տարի շուտ (հաշվի չառնելով նույնիսկ նրանց պիտանիությունը զինվորական ծառայության համար):

Պատերազմի ընթացքում փորձեր կատարվեցին նաև հայերի զինվորագրության ուղղությամբ, սակայն հաջողություն չունեցան: Փորրասիական ռազմաճակատում ռուսական զործող կորպուսի գեմ թյուրքական բանակը բաղկացած էր 67 հետևակային գումարտակից, սակրավորների 5 վաշտից, հեծյալների 23 էսկադրոնից և 3:

բարձր  
մ 2 4

հազար բաշիրոզուկներից՝ 109 հրանոթով: Այդ բանակը զլխավորում էր թյուրքական նշանավոր զորավարներից Մուխթար Ահմեդ-փաշան, որը Կարս էր եկել 1877 թ. ապրիլի 8-ին:

Մեջլիսի, հոգևորականության և քաղաքի պատվավոր ներկայացուցիչների առաջ իր արտասանած ճառում Մուխթար-փաշան հույս է հայտնում, որ համերաշխ ու համատեղ գործողությամբ կհաջողվի հաղթել ռուսներին սպասվող դժուր պայմանում: Միաժամանակ հայտնում է, որ ինքը այստեղ է ուղարկված Մուխթարի կողմից՝ պաշտպանելու իսլամը և բոլոր հավատացյալների ընտանիքների պատիվը ռուսների վտանգից: Այդ ճառը ավելի քան բարձրացնում է մահմեդական ազգաբնակչության կրոնամոլ արամադրությունը: Այդ ուղղությամբ եռանդուն աշխատանք է ծավալում նաև Կարսի նոր պարետ, ռուսների կատաղի թշնամի Հուսեյն-փաշան:

Չնայած այդ բոլորին, ռուսական բանակի սահմանն անցնելու լուրը տազնապ է առաջացնում քաղաքում: Նախկին մարտական տրամադրությունն անմիջապես տեղի է տալիս բարոյական անկման: Փակվում է շուկան, դադարում ամեն տեսակի առևտուրը: Ունեոր մահմեդական ազգաբնակչության զգալի մասը, վախենալով ռուսների կողմից քաղաքի պաշարումից, տեղափոխվում է դեպի Էրզրում, Օլթի և երկրի խորքում գտնվող մյուս քաղաքները: Մահմանն անցնելու լուրը լուրջ անհանդուրժանություն է պատճառում նաև Մուխթար-փաշային, որն ըստ երևույթի ռուսների հարձակմանը չէր սպասում:

Մուխթար-փաշայի անհանգստությունն ավելի քան աճում է, երբ լրաբերներից տեղեկանում է, որ ռուսների թիվը 50 հազարի է հասնում՝ 200 թնդանոթներով: Ելնելով այս բոլորից, Մուխթար-փաշան վճռում է փոխել իր նախնական պլանը և հարձակողական գործողություններից պաշտպանողականին անցնել: Նման որոշում ընդունելով՝ Մուխթար-փաշան հրաման է տալիս իր տրամադրության տակ եղած ուժերին կենտրոնանալ Կարսում:

Նկատի ունենալով անցյալ՝ 1853—1856 թթ. պատերազմի փորձը, երբ Կարսը՝ բոլոր կողմերից շրջապատված՝ ծանր դրության մեջ ընկավ և յոթ ամսվա պաշարումից հետո հանձնվեց, — Մուխթար-փաշան, ապրիլի 15-ին իր բանակի մեծ մասը Կարսում թողնելով, ինքը բանակի մյուս մասով գրավում է Սողանլուղի բար-

նուսնի  
թիվ 50 հա

ձուրքները, նպատակ ունենալով՝ արգելելու ուսաներին գրավելու Կարսը, էրզրումի և Փոքր Ասիայի մյուս կենտրոնների հետ կապող ճանապարհները: Այդ դիրքը նպատակալից էր նաև հետագայում հարձակողական գործողությունների անցնելու համար:

\* \* \*

Սահմանն անցնելու հենց առաջին մոմենտից՝ ռուսական բանակը հանդիպում է հայերի ջերմ ու խանդավառ բնորոններին, որոնք, ինչպես նշեցինք նախորդ գլխում, վաղուց անհամբեր քապատում էին ռուսական զորքին, նրա հողթանակի հետ կապելով թյուրքական լծից ազատագրվելու իրենց վերջին հույսերը: Հայերը ամենուրեք ուսաներին դիմավորում են «աղ ու հացով», «խաչով-խաչվառով», նվերներով, շտապելով իրենց շնորհակալական խոսքն ասելու, իրենց երախտագիտական գագեցմունքները հայտնելու իրենց ազատարար բանակին: Մոլլա-Մուսունից Ղզ-շախ-շախ տանող ճանապարհին ռուսական զորքերին դիմավորում են հայ հովիվները՝ բերելով իրենց նվերները: Այդ մասին պատերազմի մասնակից գեներալ Ս. Քիշմիշեր հետևյալն է գրում. «Երանք (այսինքն հովիվները: — Ա. Ն.) արևելյան սովորությունների համաձայն, բերել էին մի քանի ոչխարներ ռուսական զենքի հաջողության համար նախատեսված զոհարարությունը կատարելու: Գեներալ աղյուսանու Լորիս Մելիքովը շնորհակալություն հայտնելով և պարգևատրելով հովիվներին՝ հրամայում է ոչխարները հանձնել, սակրավորներին ... Հայ բնակչության բարեկամական միջնորդար այնքան մեծ է լինում, որ գինավորները կարծում են, թե իրենք ոչ թե թշնամու հողումն են դանվում, այլ իրենց սեփական տանը»:

Ղզ-շախ-շախում և Ղզ-Քիլիսայում ռուսական զորքերին հանդիսավոր դիմավորում են տեղական հայերը՝ շրջանի հայ հողերահատուցության գլխավորությամբ: Հայ գյուղացիները իրենց շնչին ունեցվածքից շտապում են բաժին հանել ռուս քաջարի զինվորներին. օգնում են բուրբը, ուղիղ և ինչպես կարող էր: Ռուսական բանակին հայերի ցույց տված օգնությունը չի սահմանափակվում միայն հանդիսավոր դիմավորումներով, սիրալիք խոս-

<sup>1</sup> Кишмишев С. Бойна в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884, стр. 12.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 13.

բերով և մաղթանքներով կամ նյութական օգնությամբ: Ինչպես նախորդ պատերազմների, առավել ևս 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի ընթացքում, բազմաթիվ հայ կամավորներ կոչվում են ռուսական բանակի շարքերում. ծառայում են որպես պատվամենաշորներ, հետախույզներ, ուղեցույցներ, սուրհանդակներ, թարգմանիչներ և այլն...

Այսպես, օրինակ՝ կամպանիայի երրորդ օրը բանակի հրամանատարը, Կարսում գտնվող ռուսական դիվանագիտական անշխատողների մասին ոչ մի լուր չունենալով, անհրաժեշտ է համարում նամակով պատվամենաշոր ուղարկել Կարս: Այդ գործը հանձնարարվում է Կարսում մեծ կապեր ունեցող Ալեքսանդրապոլի հայերից՝ Ջիթոզցյան Պետրոսի որդի Ավետիսին, որը հաջողությամբ կատարում է հանձնարարությունը և վերադառնում կարևոր տեղեկություններով:

Երևանյան նահանգի սահմանամերձ գավառները, որտեղ կենտրոնացած էր գործող կորպուսի գլխավոր մասսան՝ թվով 60 000 մարդ, բնակչությունը նյութական մեծ օժանդակություն է կազմակերպում, տրամադրելով բնակարաններ, վառելիք, լուսավորություն, ալյուր, հաց և այլն...

Էջմիածնի գավառի հայ ազգաբնակչությունը իր սեփական միջոցներով թխում և Երևանյան ջոկատին է ուղարկում 3,851 փութ լավաշ հաց: Էջմիածնի նահանգի ազգաբնակչությունը պարհակալին կարգով 1877—1878 թթ. պատերազմի ընթացքում գործող կորպուսին է տրամադրում 44,444 սալ, 1637 ձի և 6496 ուղտ: Գլխավոր հրամանատարության կողմից Երևանի նահանգապետին ուղարկված հրահանգի համաձայն, տեղական ազգաբնակչությունից, մասնավորապես հայերից, իրենց սեփական միջոցներով կազմակերպվում են միլիցիայի (կամավորական) հեծյալ զորամասեր, որոնք պատերազմի ընթացքում մասնակցում են ամենազգվարին օպերացիաներին, իսկ նրանց որոշ մասը պաշտպանում է սահմանը քրդերի և բաշխեղուկների ներխուժումներից: Նման զորամասեր կազմակերպվում են ինչպես պատերազմի նախօրյակին, այնպես էլ պատերազմի ընթացքում: Մեզ չհաջողվեց պարզել պատերազմին մասնակցած միլիցիայի զորամասերում եղած հայերի ճիշտ քանա-

<sup>1</sup> Сборник материалов русско-турецкой войны 1877—1878 гг., выпуск 1, СПб., 1903, стр. 2.

կը, և զա հնարավոր չէր մեր կարծիքով, քանի որ նրանք խառն են եղել վրացիների և աղբրեջանցիների հետ, սակայն Մոսկվայի ռազմապատմական արխիվում մեր կողմից գտնված մի փաստաթղթից, որը որպես հավելված կցում ենք սույն աշխատությունը<sup>1</sup>, պարզվեց, որ պատերազմի նախօրյակին կազմակերպվել են ութ նման զորամասեր, որոնցից երեքը եղել են միայն հայկական, իսկ հինգը՝ հայեր և վրացիներ, կամ հայեր և աղբրեջանցիներ<sup>2</sup>:

Բացի այդ զորամասերից, պատերազմի ընթացքում նույնպես կազմակերպվում են միլիցիայի հատուկ հարյուրակներ: Այսպես օրինակ՝ հրամանատարությունը, ելնելով Երևանյան ջոկատի խիստ սահմանափակ ուժերից և այն բացառիկ պայմաններից, որի մեջ գտնվում էր Բայազետը՝ ջոկատի հիմնական ուժերը երկրի խորքը շարժելուց հետո, մայիսի 1-ին կարգադրություն վճանում տեղական ազգաբնակչությանից կազմակերպելու առանձին հեծյալ գունդ: Այդ գունդը կազմակերպվում է աղբրեջանցիներից և հայերից, օգնությամբ է հասնում Բայազետի կայազորին՝ գնդապետ Փրիգոր Աղամեյիվ Շահնազարյանցի և Համբարձում Հախումյանցի գլխավորությամբ: Այդ մասին հիշատակվում է նաև կաթողիկոսական դիվանի պատերազմական օրագրում, որտեղ 1877 թ. մայիսի 5-ի թվագրի տակ գրված է «միլիցիա» (ժողով ժմնկ-ը զօրաց) Հայոց և Պարսից Ղարաբաղայ, նուխայս Գանձակա՝ թուով 850 անձինք գիշերեցին Վրչշատ քնդ վերակացաբ Շուշեցի պ. Համբարձում Հախումեանց և միւս առաջուտ գնացին ի Պայազետ անցանելով քնդ գիրն Սուրմալաց»<sup>3</sup>: Նկատի ունենալով քրդերի մշտական հարձակումները Ալեքսանդրապոլի սահմանային հայաբնակ գյուղերի վրա, գլխավոր հրամանատարությունը հուլիսի 2-ին կարգադրություն է անում Ալեքսանդրապոլի գավառապետին տեղական հայերից հետևակ հարյուրակ կազմակերպելու մասին: Այդ հարյուրակը կազմակերպվում է հուլիսի 8-ին<sup>4</sup>:

Հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում հեծյալ հարյուրակներ են կազմակերպվում նաև Երևանում և Իգդիրի նահանգում:

<sup>1</sup> Տես հավելված, էջ 127:

<sup>2</sup> ЦГВИА, ф. ВУЛ, д. 39/405, стр. 1—2.

<sup>3</sup> Հայկական ՄԱԹ Պետ. արխիվ, Կաթողիկոսական դիվան, Պատերազմական օրագիր, ֆ. 57, գ. 309, էջ 10:

<sup>4</sup> Сборник материалов, русско-турецкой войны 1877-1878 гг., вып. I, СПб, стр. 17.

1877 թվի ապրիլի 2-ին միլիցիայի կազմակերպման մասին եղած հրահանգում ասված է «...Երևանի նահանգի աղբաբնակությունը ընդգրկվում է քաջառուպես միլիցիայի հեծյալ ծառայության, ընդ որում, պետք է կազմակերպվի երևանյան անկանոն հեծյալ գունդ չորս հեծյալ հարյուրակ կազմով»:

Այնուհետև հրահանգում հիշվում է, այդ գործով զբաղվող մարմիններին ցուցաբերել զգուշավորություն և նպատակին հասնել ամենաթիշ պահանջկոտության պայմաններում, պահպանելով կամավորական սկզբունքը: Այնուհետև ասված է հրահանգում, որ միլիցիայի կազմում աշխատել որքան հնարավոր է մեծ թվով հայերի ընդգրկել մասնակցականների համեմատությամբ, որոնք ավելի քիչ հուսալի են, բացի դրանից հայերն ավելի պատրաստված են զինվորական տեսակետից<sup>2</sup>:

\* \* \*

Կովկասյան ռազմաճակատում գործող կորպուսը իր առկա ուժերով չէր կարող շարունակել հարձակողական գործողությունները և զգալի շափով հեռանալ սահմաններից: Ռուսական բանակի առաջ դեռ կանգնած էր Կարսը իր ահեղ ամրություններով, որը հանդիսանում էր Անատոլիայի կենտրոնները տանող ճանապարհների բանալին: Կարսը զրավելու համար մեծ ուժեր էին պահանջվում, իսկ կորպուսի ներկա ուժերով անհնարին էր անգամ նրա ամրոցական շրջապատումը: Իր արտաքին ամրություններով Կարսը գրավում էր 40 կիլոմետրից ավելի շրջագիծ. նրա լիակատար պաշարման համար պահանջվում էր ոչ պակաս 40 գումարտակ: Սակայն նույնիսկ այդչափ ուժերով դարձյալ անհնարին էր այն լիակատար բլոկադայի ենթարկելը, քանի որ Կարսը իր արևմտյան լեռնային տեղանքով հնարավորություն կընձեռներ թյուրքերին Օլթիի և Պենչակի վրայով կապ պաշտպանելու էրդրումի և Բաթումի հետ: Նման պայմաններում կորպուսի հրամանատարությունը որոշում է ընդունում գրավել նպաստավոր դիրքեր և հետևել հակառակորդի շարժումներին: Այդպիսի հարմար դիրքեր կարող են ծառայել Կարսից 9½ կիլոմետրի վրա գտնվող Մեծ և Փոքր Յաղնի

<sup>1</sup> Сборник материалов, русско-турецкой войны 1877—1878 гг., вып. I, СПб, стр. 66.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 40.

բլուրները, որոնց փեշերում տեղավորված էին Վեդեն-քեյ և Կոլոնի-քեյ գյուղերը, և վերջինից հյուսիս, Կարս-չալի աջ ափին գտնվող Եղնի-քեյ գյուղը: Այդ վայրերից Կարսն իր բոլոր ամբարտաններով երևում էր ինչպես ափի մեջ, բացի զրանից, այդ գյուղերովն էին անցնում ինչպես Ալեքսանդրապոլից, նույնպես և հյուսիս-արևելք գտնվող բոլոր գյուղերի դեպի Կարս տանող ճանապարհները: Այդ նկատի ունենալով՝ հրամանատարությունը իր ուժերը դասավորում է Եղնի-քեյ, Կոլոնի-քեյ և Վեդեն-քեյ գյուղերի միջև: Թշուրքերը, հասկանալով ռուս հրամանատարության պլանները, ամեն կերպ աշխատում են խանդարել և թույլ շտալ ռուսներին զրավել այդ նպատակով դիրքերը: Այդ նպատակով Կարսից դուրս եկած թշուրքական հեծելազորը, որին պաշտպանում էր հետևակը և հրետանին, հանդիպելով ռուսական զորքերի առաջապահ ջոկատների վճռական դիմադրությանը, չախչախվում և ետ է շարժվում: Այս օպերացիայում մեծ ետանդ են ցուցաբերում երկրորդ վոլոյան զնդի կազակները՝ իշխան Օրբելյանի գլխավորությամբ և Ալեքսանդրապոլի միլիցիայի հեծյալ հարյուրակ դիվիզիոնը՝ բանակային ավագ Ենիկոլոպովի գլխավորությամբ: Այդ մասին կորպուսի հրամանատարը իր զեկուցագրում հետևյալն է գրում. «Մեր հեծելազորայինների — Կոլոնի-քեյ և Ազատ-քեյ գյուղերին մոտենալու ժամանակ, թշուրքական հեծելազորը դուրս եկավ Կարսից, իսկ նրա հետևից հետևակը: Թշուրքական հեծելազորը ոգևորված հետևակի պաշտպանությունից, բավականաչափ մոտեցավ մեր զորքերին: Վոլոյան երկրորդ զնդի կազակները, իշխան Օրբելյանու գլխավորությամբ, թշուրքերին զրոհեցին ճակատից, իսկ Ալեքսանդրապոլի հեծյալ անկանոն դիվիզիոնի մի հարյուրակ բանակային ավագ Ենիկոլոպովի գլխավորությամբ՝ զրոհեց թևից: Թշուրքերը փախան, տալով 4 սպանված»<sup>1</sup>:

Պատերազմի սկզբից զործող կորպուսի ռազմական օպերացիաներին սխառնատիկ օգնություն է ցույց տալիս ալեքսանդրապոլցի շտաբային կապիտան Գանիել Հարությունյանը, որը, ինչպես հիշել ենք առաջին գլխում, որպես միլիցիոններ ակտիվ մասնակցություն և մեծ օժանդակություն է ցույց տալիս ռուսական բանակին զեկուս 1853—1856 թթ. Արևելյան պատերազմի ժամանակ:

<sup>1</sup> ЦГВИА, ф. «Б», д. 213/34, стр. 3-4, 7-10.

Հարությունյանը 1877—1878 թթ. պատերազմի ընթացքում ոչ միայն գործոն մասնակցություն է ցուցաբերում գործող կորպուսի համարյա բոլոր և ամենաղվարիճ օպերացիաներում, այլև ղեկավարում է հետախուզական ծաեւ ու պատասխանատու գործը:

Թշնամու թիկունքում գտնվող իր բազմաթիվ մարդկանց միջոցով (որոնց մեջ բացի հայերից եղել են նաև քրդեր, որոնց մեջ առանձնապես աչքի են ընկնում Ռաշիդ Բեգը և իր եղբայր Հուսեյն Բեգը), սխառնատիկ կերպով հրամանատարությունը կարևոր տեղեկություններ է հաղորդում հակառակորդի ուժերի դասավորությանը և նրանց դիտավորությունների մասին: Վրաստանի պետական արխիվում աշխատելիս՝ մեզ հաջողվեց գտնել Հարությունյանի մարդկանց կողմից ուղարկված մի շարք կարևոր տեղեկություններ, որոնցից երկուսը՝ Ավագ Հակոբյանի և Գրիգոր Աշրաֆյանի կողմից ուղարկված, կցում ենք մեր սույն աշխատությանը որպես հավելված: Ինչպես երևում է արխիվային փաստաթղթերից, — Հարությունյանի միջոցով և նրա մարդկանց ձեռքով ստացված տեղեկություններին հրամանատարությունը վերաբերվել է լիակատար վստահությամբ: Անգամ այս կամ այն զեկուցագիրը կտզմելիս վերջում նշվում է, որ հիշյալ տեղեկությունները վստահելի են, որովհետև գրանք ստացվել են Հարությունյանի միջոցով. «Դեռևս ապրիլի 17-ին հետևակի և հեծելազորի միջև կապ պաշտպանելու և թշնամուն հսկելու համար, հայիլ-օղլի գյուղից ուղարկվել է ... շտաբային կապիտան Հարությունյանը, որից ես և զեներալ-մայոր իշխան Ճավճավաձեն ստանում ենք Կարսից դուրս եկող հակառակորդի տեղադրման և շարժումների մասին տեղեկություններ» — գրում է գործող կորպուսի հրամանատար զեներալ ագյուտանտ Լորիս Մելիքովը<sup>2</sup>:

Այսպես, ուրեմն, շնորհիվ հրամանատարության ձեռք առած միջոցներին, ռուսներին հաջողվում է գրավել Եղնի-քեյ, Կոլոնի-քեյ և Վեդեն-քեյ գյուղերի միջև ընկած նպատակավոր դիրքերը, որտեղից հնարավոր են դառնում հսկելու Կարսից Արդահան տանող ճանապարհները, ուր այդ ժամանակ մուտք էր գործել Ախալցխայի ջոկատը զեներալ Դեկելի հրամանատարությամբ: Չնայած այդ ժամանակ

<sup>1</sup> Վ.ր. Պետ. արխիվ, ֆ. 1219, գ. 311, էջ 97, 98, 107 — 108, տես հավելված, էջ

<sup>2</sup> ЦГВИА, ф. «Б», д. 213/34, стр. 3-4, 7-10.

Արդահանի գրավումը առաջնակարգ խնդիր էր համարվում, սակայն որոշ նկատառումներով, որի մասին կխոսենք քիչ հետո, հրամանատարությունը որոշում է առաջին հերթին գրավել Կաղզվանը:

\* \* \*

*Երևանը  
չմխար*

Գլխավոր ուժերի հետ միաժամանակ ապրիլի 12-ին Իգդիրից հարձակում է սկսում նաև երևանյան ջոկատը գեներալ-լեյտենանտ Ա. Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ, որը ամսի 17-ին արդեն գտնվում էր Արևմտյան Հայաստանի տերիտորիայում: Սահմանից զգալի շափով հեռանալու հետևանքով դժվարանում է նրա կապը գլխավոր ուժերի հետ: Կորպուսային շտաբից տրվող հրամանները ուղարկվում էին զիզզազ ճանապարհով՝ Ալեքսանդրապոլ—Մաստարա—Սարգարարաղ—Իգդիր և այլն... Երևանյան ջոկատի հետ ուղիղ կապ կարելի էր ստեղծել միմիայն Կաղզվանը գրավելով, որը դեռևս հակառակորդի ձեռքումն էր գտնվում: Բացի դրանից, Կաղզվանի գրավումով հնարատրություն կստեղծվեր զսպելու Ազրիզաղի փեղերում բնակվող քոչվոր ավազակարար քրդական ցեղերին, թույլ չտալով նրանց սահմանն անցնելու և ասպատակելու հայկական գյուղերը, ինչպես տեղի էր ունեցել 1853—1856 թթ. պատերազմի ընթացքում:

Այդ նպատակի համար ապրիլի 23-ին կազմակերպվում են երկու թուոցիկ ջոկատներ՝ մեկը գեներալ Տեր-Ղուկասովի զորաբաժնից գնդապետ Գրաֆ Գրաբեյի հրամանատարությամբ, մյուսը՝ կորպուսի գլխավոր ուժերից՝ գեներալ-մայոր Լորիս Մելիքովի հրամանատարությամբ: Առաջին ջոկատը Կաղզվան է շարժվում Կողբից, իսկ երկրորդը՝ Վեզեն-բեյից, որոնք Կաղզվան են հասնում ապրիլի 24-ի առավոտյան: Անապասելի կերպով երկու կողմից ուսական ջոկատների երևալը տագնապ է առաջացնում քաղաքում: Տեղական գայմագամը, իր հետ վերցնելով մեջլիսը, փախչում է, որին և հետևում է տեղական կայազորը<sup>1</sup>: Այս օպերացիայի ժամանակ հայերը աչքի են ընկնում իրենց գործուն մասնակցությամբ: Միլիցիայի կապիտան Հարությունյանի կողմից վաղօրոք կազմակերպված տեղական անվանի հայերի՝ բնակչության մեջ ծավալած

*Պատերազմ  
նոստր  
այժմ  
սրբուհի*

<sup>1</sup> ЦГВИА, ф. „Б“, л. 213/34, стр. 21-22.

աշխատանքի շնորհիվ, քաղաքը ուսներին է հանձնվում առանց կռվի և բնակչությունը ուսական զորքերին դիմավորում է «աղ ու հացով», հայանելով իր լիակատար հպատակությունը: Նույն հայերի աշխատանքի շնորհիվ հայտնաբերվում և ուսաներին են հանձնվում քաղաքի ղենքի և վառոդի պահեստները, որոնք ուղարկվել էին Կարսից տեղական մահմեդական բնակչությանը զինելու համար: Կաղզվանի գրավումից դեռ շատ առաջ, և այն գրավելու ժամանակ, տեղական հայերից ուսաներին ցույց տված օգնության գործում հատկապես աչքի են ընկնում Շորագյալի շրջանի Զիրնի գյուղացի Հարություն Մկրտչյանը և Կաղզվանի շրջանի Քարավանը գյուղացի Աստ Հակոբյանը:

Հարություն Մկրտչյանը, որը դեռևս 1853—1856 թթ. պատերազմի ժամանակ աչքի էր ընկել ուսաներին ցույց տված օգնությամբ և մեծ նեղինակության տեղ մի մարդ էր, Կաղզվանի գրավման ժամանակ համոզում է ազգաբնակչությանը դիմադրություն ցույց չտալ ուսաներին և օժանդակում է հրամանատարությանը քաղաքի զենքի և վառոդի պահեստները հայտնաբերելու գործում:

Աստ Հակոբյանը, որը Դանիել Հարությունյանի աչքի ընկնող գործակիցներից մեկն էր, Կաղզվանի գրավման ժամանակ հանդիսանում էր գրեթե ջոկատներից մեկի ուղեկցողը, որը առաջնորդում է ուսաներին՝ ցույց տալով նրանց ավելի ապահով հանապահներ: Ինչպես հայտնի է, ուսական բանակի ժամանակավոր անհաջողության շրջանում Կաղզվանը նորից թյուրքերի ձեռքն է անցնում: Թյուրքական իշխանությունները դաժան դատաստան են տեսնում հայերի նկատմամբ ուսաներին ցույց տված օգնության համար: Մասնավորապես հրեշտյին դատաստան են տեսնում թյուրքերը Հարություն Մկրտչյանի և Աստ Հակոբյանի նկատմամբ, որոնց սպանում են երկարատև լիկումներից և խոշտանգումներից հետո: Հիշելով երկու նշանավոր հայերի մասին կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար Միխայիլ Նիկոլաևիչը 1878 թ. հուլիսի 11-ին զինվորական մինիստրությունը ուղարկած մի գրությամբ միջնորդում է նրանց ընտանիքներին թողնելով ապահովելու համար<sup>2</sup>: Կաղզվանի հայերից ուսաներին մեծ օգնություն է ցույց տալիս Մատթեոս քահանան՝ Դանիել Հարությունյանի զինակիցներից մեկը<sup>2</sup>:

*Երևան  
պաշտպան*

*Սանտա  
Կատրիկ  
գլխավոր*

<sup>1</sup> ЦГВИА, ф. 400, л. 39, отд. 261/911, стр. 6—7.

<sup>2</sup> Վրաստանի Պետ. արխիվ, պար. 1219, գ. 31, էջ 96:



ՀԱՅԵՐ  
ԿԱՂՉՈՒՄ

Այսպես՝ տեղական հայերի գործուն մասնակցության և նրանց ցույց տված օժանդակության շնորհիվ է, որ ուսանելը 1877 թ. ապրիլի 24-ին առանց դիմադրության գրավում են Կաղզվանը: Քաղաքում կազմակերպվում է վարչություն, որի կազմի մեջ մտնում են տեղի նշանավոր հայերից Ղուկաս աղան, Քորոս աղան, Միրաչել աղան, Գասպար աղան և Ռաշիդ բեգը՝ Հարությունյանի մերձավոր մարդկանցից մեկը, որի մասին մենք արդեն հիշել ենք այլ կապակցությամբ: Վերև հիշած անձինք Հարությունյանին տված ստորագրությամբ խոստանում են լիակատար հանգստություն ու կարգ սահմանել գրաված տերիտորիայում<sup>1</sup>:

Գրավված նոր տերիտորիայի բազմաթիվ հայեր մտնում են միլիցիայի զորամասերը, աշխատում որպես թարգմանիչներ և ուղեցույցներ: Բացի հայերից, միլիցիայի զորամասեր են կազմակերպվում նաև կարափափախներից, որոնց պետեր են նշանակվում ահապահական հայերը, իսկ ընդհանուր հսկողությունը գրվում է գլխավոր շտաբի սպա գնդապետ Քիշմիշյանի վրա<sup>2</sup>:

Կաղզվանի գրավումով ուսական բանակը տիրպետող դիրք է ձեռք բերում Կարսի մարզում, Կարսից հարավ-արևելք ընկած շրջաններում և նրա ձեռքն է անցնում Սողանլուղ տանող բոլոր ճանապարհները:

Գրանից հետո հնարավոր է դառնում գլխավոր ուժերից մի զորասյուն առանձնացնել Ախալցխայի ջոկատին օգնություն ցույց տալու համար, որը ապրիլի 25-ին մոտեցել էր Արդահանին:

\* \* \*

Գտնվելով Քուս գետի երկու ափերին՝ Բաթումի և Ախալցխայի, Կարսի ու Էրզրումի ճանապարհների հանգույցում, Արդահանը շափաղանց մեծ ստրատեգիական նշանակություն ունեցող ամրոցներից մեկն էր: Թյուրքերը, հատուկ նշանակություն տալով Արդահանին, անգլիական ճարտարագետների օգնությամբ լրացուցիչ ամրություններ կառուցելով, դարձրել էին այն Փոքր Ասիայի ամենաուժեղ ամրություններից մեկը: Գրավելով Արդահանը, ուսանելը երկու մասի կրճատանքին հակառակորդի ուժերը և կապահովեին

<sup>1</sup> ЦГВИА, ф. „Б“, 213/34, стр. 31.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 21-22, 25.

իրենց թիկունքը Բաթումի կողմից հակառակորդի հարձակումներից իրենց հետագա առաջխաղացման դեպքում: Ապրիլի 12-ին, պատերազմի առաջին օրը, Ախալցխայի ջոկատը գեներալ Գեկի հրամանատարությամբ, զուրս գալով Ախալքալաքից, անցնելով սահմանը, ապրիլի 15-ին տեղավորվում է Չորղունում, իսկ հաջորդ օրը, շարժվելով առաջ, գրավում է Քերրյա-հաթունի արվարձանները: Թյուրքերի փորձերը կասեցնելու ուսանելի առաջխաղացումը անհաջող է անցնում: Շարունակելով առաջխաղացումը, ապրիլի 29-ին ուսանելը գրավում են Ուրբ, ամրանալով Քուր գետի ձախ ափին, սպասելով օժանդակ ուժերի:

Ախալցխայի ջոկատը ուժեղացնելու նպատակով, գործող կորպուսի առանձնացված զորասյունը, գեներալ Գեկմանի հրամանատարությամբ ապրիլի 28-ին զուրս գալով Ենիկ-բեյից, մայիսի 2-ին հասնում է Գյուրջիբեկ: Այստեղ է գալիս նաև գեներալ-ադյուտանտ Լորիս Մելիքովը՝ Արդահանի գրավման գործողություններն անձամբ ղեկավարելու համար:

Անհրաժեշտ նախապատրաստություններից հետո, որոշվում է գրոհը սկսել մայիսի 4-ին: Գրոհից առաջ Լորիս Մելիքովը մի նամակով դիմում է Արդահանի պարետին, առաջարկելով հանձնել բաղաբը:

«Մինչև առավոտյան ժամը 8-ը, — գրում է Քիշմիշյանը, — թշնամին ոչնչով չէր խանգարում Ալա-գյուլի բարձունքներում տարվող աշխատանքներին: Արդահանում կարծես կյանքը մեռած լինե՞ր. մարդկային շարժում չէր նկատվում ոչ մեր առաջ տարածվող ամրություններում և ոչ էլ կամրջի վրա:

Նման խորհրդավոր լուրջությունը շատերին ենթադրել տվեց, թե թյուրքերը թողել են Արդահանը, և արդեն ակնարկներ էին լսվում Օլթիի և Բաթումի ճանապարհին հսկող գնդապետ Մալամեի հասցեին, որ նա բաց է թողել թշնամուն<sup>3</sup>:

Ուղարկված գրության պատասխանի փոխարին հակառակորդը իր բոլոր ամրություններից կրակ է բաց անում: Սկսվում է ճակատամարտը: Ռուսական հրետանին կործանիչ կրակ է տեղում հակառակորդի ամրությունների վրա, ոչնչացնելով նրա կենդանի ուժը, քարուքանդ անելով ամրությունները: Հրետանու կործանիչ կրակի

<sup>3</sup> Кншмишев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб, 1884, стр. 82.

Արդաճանի  
Պրահայի  
Պրահայի  
Պրահայի

պաշտպանություն տակ առաջ են նետվում հետևակայինները՝ մեծ մասամբ մազլցիլով զատիվեր լանջերով: Քյուրքերը, շիմանալով ուսաների շեշտակի գրոհին, մեկը մյուսի հետևից թողնում են ամբացված դիրքերը, իսկ երեկոյան ժամը 7-ին սկսում են փախչել: Երեկոյան ժամը 9-ին ուսաները գրավում են քաղաքը: Արդաճանի համար մղած մարտերում ուսաները կորցնում են սպանված՝ մեկ սպա և՝ 68 շարքային զինվորներ, վիրավոր 10 սպա և 339 շարքային զինվորներ: Քյուրքերը կորցնում են 3000-ից ավելի սպա և զինվոր: Ռուսների ձեռք են անցնում պարենի և ուղղամթերքի մեծ պաշարներ: Արդաճանի համար մղվող մարտերին ակտիվ մասնակցում են ինչպես հայ կամավորները, այնպես էլ ուսանական բանակի ծառայության մեջ գտնվող հայ սպաներն ու զինեթաղները: 1877 թ. մայիսի 11-ին գլխավոր հրամանատարությանն ուղարկած զեկուցագրում զինեթաղ-աղյուսանա Լորիս Մելիքովը հիշում է Արդաճանի գրավման ժամանակ առանձնապես աչքի ընկած զինեթաղներին և սպաներին, որոնք արժանի են պարգևատրման:

Դրանց բվում են գտնվում հայ սպաներից պորուչիկ Միքայելյանը, մայոր Սուրենովը և ուրիշները<sup>1</sup>:

Արդաճանի գրավման լուրը կաշժակի արագությունը տարածվում է ողջ Անդրկովկասում: Բոլոր թերթերը արագորեն արձագանքում են այդ նշանակալից օպերացիային, փառաբանելով ուսաքաջարի զինվորների տարած փայլուն հաղթանակը:

Արդաճանի գրավման լուրը մեծ տպավորություն է գործում նաև հակառակորդի զորքերի բարոյական վիճակի վրա:

Այս մասին 1877 թ. մայիսի 17-ին Կարսից Գանիել Հարությունյանին ուղարկած մի անստորագիր նամակում գրված է. «Արդաճանը առնելու խնդիրը և ձայնը այն աստիճան տեղույս զորքերուն և մեծերուն թուլացուց, և հուսահատացուց, որ երբեք կարող եմ պատմել, և լսած ավուր գշերը 37 հատ զորք (այսինքն զինվոր:—Ա. Ն.) մեր զենու թափորեն փախան: Չորքերի բոլոր հրամանատարները ա՛հ ու զողի մեջ են ուրիշ երբեք տնօրինություն մը չունեն. միմիայն հուսահատ մտոք և սրտով պաշտպանողական դիրքեն կծառայեն. և որ տեղեն Ռուսիս զորքը երևի զորոց բոլոր կարողությունը անմիջապես հոն կթափեն ուրիշ տեղեր մասնավոր

<sup>1</sup> ЦГВИА, ф. «Б», л. 23/34, стр. 49-50.

թողով: Արդաճանի առնվելը լավելեն վերջ քաղաքացիք ալ... զենք առնելով պատերազմի շեն էլլեր»<sup>1</sup> (17 ի Կարս—77 ամբ): Դրանից բացի նամակում շատ կարևոր տեղեկություններ կան նաև թշնամու ուժերի բանակի, նրանց դասավորման և դիտավորությունների մասին:

Արդաճանի գրավումից հետո լիվիզացվում է նախկին Ախալցխայի շոկատը: Արդաճանի պաշտպանության համար կազմակերպվում է հատուկ շոկատ զնդապես Կամարովի հրամանատարությանը, իսկ մնացած զորքերը վերադառնում են Կարսի ուղղմանակալով՝ միանալով կորպուսի գլխավոր ուժերին:

\* \* \*

Գլխավոր ուժերից առանձնացված զորասյունը Արդաճան մեկնելուց հետո, այնպեղ մնացած փոքրաթիվ ուժերը, զինեթաղ-մայոր Կամարովի հրամանատարությանը, ոչ միայն Կարսի ղեմ որևէ լուրջ գործողության մասին մտածել չէին կարող, այլև նրանք ստիպված էին հող տանելու իրենց սեփական պաշտպանության մասին հակառակորդի հնարավոր հարձակումներից: Սակայն Կարսի պարետ Լուսին փաշան այդ շրջանում զբաղված էր այլ խնդիրներով և նա նույնպես հարձակողական գործողություններ սկսելու փորձեր չէր կատարում: Կարսի ազգարնակությունը, անցյալ պատերազմի փորձը նկատի ունենալով, որի ընթացքում երկարատե պաշարման հետևանքով մեծ զրկանքներ կրեց, պահանջում է Լուսին-փաշայից զորքերը դուրս բերել քաղաքից: Անհրաժեշտ էր ճնշել այդ կարգի տրամադրությունները և վերականգնել ազգարնակության բարոյական ոգին: Կարսում եղած թյուրքական ուժերի, նրանց դասավորման և ազգարնակության անկումային տրամադրությունների մասին ուստական հրամանատարությանը հատուկ նամակով հայտնում է Կարսի եպիսկոպոս Գրիգոր Ալվաղյանը, որը Գանիել Հարությունյանի միջոցով վաղուց գրավոր կապ էր պաշտպանում զինեթաղ-աղյուսանա Լորիս Մելիքովի հետ և նրան կարևոր տեղեկություններ հաղորդում: Վերը հիշած նամակի տակ ստորագրում է նաև Կարսում ուսական ղեկավարման աշխատակից Խաչատուր

<sup>1</sup> Արատանի Պետ. արխիվ, ֆ. 1219, գ. 40, էջ 15:

Կորիսմադրանք: Այդ նամակում ասված է. «Կարսի բնակչությունը դեմ է պաշարմանը: Ապրիլի 16-ին թյուրք կանայք հարձակվեցին Մուշիի տան վրա. ջարդեցին դռները, լուսամուտների ապակիները և բարձրաձայն հայհոյելով նրան, պահանջում էին, զուրս գալ քաղաքից և ուսների հետ ճակատամարտ տալ բաց դաշտում, այլապես, հակառակ դեպքում, պաշարման ժամանակ նրանք սովի կմատնվեն»<sup>1</sup>:

Քաղաքում կարգը պաշտպանելու և գոյություն ունեցող հուզումները ճնշելու համար, Հուսեին-փաշան շտեպնված տեղոր է կազմակերպում մասնավորապես հայերի դեմ, որոնք չեն թաքցնում իրենց համակրանքը ուսների նկատմամբ: Բազմաթիվ մարդկանց բերդի բարձր աշտարակներից ցած են պցում գետը, ավելի աչքի բնկնող բմբուսներին Հուսեին-փաշան հրամայում է կախել քաղաքի աչքի բնկած հրապարակներից մեկում: Հարյուրավոր անմեղ մարդիկ փակվում էին կազմաառնեում, որոնցից շատ քչերին է հաջողվում կենդանի ազատվել: «Այդ կարգի մարդկանց թվում էր գրտնվում նաև բիթլիսեցի հայ կաշատուր Դորիսմադրանցը, որը ծառայում էր Կարսում ուսական դեսպանատանը և որը միջնորդել էր մեջլիսին ուսահայատակների գործով: Միայն հայ եպիսկոպոսի եռանդուն պաշտպանության շնորհիվ էր, որ նա անմեղ ճանաչվեց և փրկվեց անխուսափելի մահապատժից»<sup>2</sup>, գրում է գեներալ Ա. Քիշմիշյանը:

Ապրիլի 15-ին, ինչպես սոսցիներ վերևում, Մուսթաֆա-փաշան, թողնելով Կարսը, իր բանակի մի մասով գրավում է Սողանլուզը: Այստեղ իր բանակին կարճատև դադար տալով և Ջիվինյան ամրությունների կառուցման վերաբերյալ անհրաժեշտ կարգադրություններ անելուց հետո՝ շարժվում է դեպի էրզրում, որտեղ նրա ներկայությունն անհրաժեշտ էր Անատոլիայի բազմաթիվ տեղերում կատարվող զորահավաքը կազմակերպելու համար: Նոր զորահավաքի հետևանքով Մուսթաֆա-փաշայի բանակը զգալի թվով ավելանում է՝ հասնելով շուրջ 47 000: Բացի այդ հիմնական բանակից, Մուսթաֆա-փաշան մի ջոկատ է կազմակերպում Մուսա-Կոնզուլսովի

<sup>1</sup> Կրասսանի Պետ. արխիվ, Ֆ-1219, գ. 25, էջ 3—4 (նամակի լրել տեքստը կցված է հավելվածում, էջ 130—131):

<sup>2</sup> Киммишев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб, 1884, стр. 103.

գլխավորությամբ<sup>1</sup>, ուսների թիկունքում պարտիզանական պատերազմ վարելու համար: Մայիսի 14-ին Մուսա-փաշան (այդպես էին անվանում Կոնզուլսովին:—Ա. Ն.) մեկնում է Կարս Հուսեին-փաշայի հետ տեսակցելու համար, որը Մուսթաֆա-փաշայի հրամանի համաձայն պետք է մատակարարեր Կոնզուլսովի ջոկատին ամեն անհրաժեշտ պետքերով, այդ թվում նաև հրետանիով:

Մուսա-փաշան մայիսի 17-ին գիրքեր վ գրավում Կարս-չաչի ձախ ափին՝ Բեզլի Ահմեդի և Վերին Թաթանլիի միջև: Չկարծելով, որ ուսները շատ մոտ են գտնվում, Կոնզուլսովը սպասում է Կարսից լրացուցիչ ուժերի, հաջորդ օրը լուսաբացին սահմանաչին գավառները ներխուժելու նպատակով:

Կոնզուլսովի Բեզլի Ահմեդում գիշերելու մասին ուսական հրամանատարությունը ստույգ տեղեկություն է հաղորդում Բերնից փախած մի հայ քահանա՝ ալեքսանդրապոլցի Հարությունը: Բեզլի Ահմեդում եղած թշնամու ուժերի առկայությունը ճշտելու համար դարձյալ ուղարկվում է միլիցիայի կապիտան Դանիել Հարությունյանը իր հետախույզներով, որը հաստատում է քահանայի հաղորդածը<sup>2</sup>: Այլևս չկասկածելով Բեզլի Ահմեդում թշնամու զգալի ուժերի առկայությանը, գեներալ-մայոր իշխան Ճավճավաձեն հաղորդում է այդ մասին կորպուսի հրամանատարությանը, իսկ ինքը ամբողջ հեծելազորով մոտենում Կարս-չաչին: Այստեղ նա հրաման է ստանում թշնամուն գրոհելու մասին: Որոշվում է գիշերը շրջապատել թշնամուն բոլոր կողմերից և լույսը բացվելուն պես հարձակում գործելով՝ ջախջախել նրան: Չնայած ճակատամարտը ավելի շուտ սկսվեց, քան այն նախատեսված էր նախնական պլանով, այնուամենայնիվ վերջացավ ուսների փայլուն հաղթանակով: Հակառակորդը, կորցնելով 300 սպանված և թողնելով երկու թնդանոթ, տալով 30 գերի, փախուստի է դիմում Սողանլուզի ուղղությամբ. ուսների կորուստները այդ համարձակ օպերացիայում կազմում էին սպանված 1 սպա, 11 շարքային զինվոր և 25 վիրավոր: Մուսա Կոնզուլսովի պարտության և փախուստի, ինչպես նաև Կարսում եղած թշնամու ուժերի մասին շափազանց կարևոր տեղեկություն է հաղորդում Ավազ Հակոբյանը Դանիել Հարությունյանին<sup>3</sup>:

<sup>1</sup> Մուսա-Կոնզուլսովը Կովկասյան լեռնային սաջնորդներից էր Դադրատանի ազատամարտիչների ճնշելուց հետո թյուրքերն է գնում և թյուրքական բանակում ծառայության մտնում ուսներից վրեժ լուծելու համար:

<sup>2</sup> ЦГВИА, ф. «Б», д. 213/34, л. 66.

<sup>3</sup> Կրասսանի Պետ. արխիվ, Ֆ. 1219, գ. 40, էջ 46—47:

Այդ օպերացիան խոշոր նշանակություն է ունենում ողջ կամպանիայի ընթացքի վրա: Կոնգրեսովը, թյուրքական հրամանատարության մոտ կորցնելով իր վստահությունը, հետագայում այլևս ոչ մի ինքնուրույն դեր չի կատարում: Ռուսական բանակը ազատվում է մի չափազանց վտանգավոր հակառակորդից, որի գործողությունները նախատեսված էին նրա թիկունքում: Ռուսական հրամանատարությունը, ինչպես իրավացի կերպով նշում է պատերազմի մասնակից գեներալ Ս. Քիշմիշևը, զրանով պարտական էր այն հայ հույզերականին, որը ստույգ տեղեկություն հաղորդեց Կոնգրեսովի ջոկատի մասին:

«Ձի կարելի չընդունել, որ այնպիսի ջարդ, որպիսին կրեց Կոնգրեսովը, ի միջի այլոց որի վրա մեծ հույս ուներ Մուխթար-փաշան, մենք պարտական էինք վեր հիշած Բահադադին մեզ տված նիշտ տեղեկություններին, որ ամբողջապես արդարացրեց այն հույսերը, որ մենք ունեինք Փոքր Ասիայի հայ ազգաբնակչության վրա:

Եվ իրոք, ներկա պատերազմի ընթացքում՝ արևմտահայերը այնքան և այնպիսի օգնություն ցույց տվին մեզ-կորցնելով իրենց կայքն ու զույգը, մինչև իսկ իրենց կյանքը և զարմանալի ու անհաշիվ կերպով մեր կողմը պաշտպանելով, որ մենք կատարելապես այն համոզմունքին եկանք, որ Փոքր Ասիայում մեր միակ դաշնակիցները հայերն են»:

Այնուհետև, բերելով մի շարք ճանապարհորդների հիշողություններ հայերի վերին աստիճանի աշխատասիրության, մաքուր ու պարզ բարբերի, ազնիվ ու քաջ բնավորության դժերի մասին, գտնում է, որ ուսանելը հանձինս հայերի ունեն իրենց հավատարիմ դաշնակիցը:

«Իրանում մենք համոզվեցինք ոչ մեկ անգամ,—գրում է Քիշմիշևը,—հարկավոր էր լինում հավատարիմ ուղեկցող, անհրաժեշտ էր լինում մի ինչ որ զաղտնի գրություն որևէ տեղ հասցնել, միշտ գտնվում էին հայեր, որոնք բաբելոնյան կատարում էին այդ հանձնարարությունները: Կարսի գրոհման զիշերը, գրոհող երեք զորասյունների առաջնորդները հայեր էին: Նրանք հազար զինվորական շինելներ՝ գրոհի ժամանակ գնում էին զորասյունների առջևից՝ (ընդգծումն իմն է:—Ա. Ն.):

<sup>1</sup> Кишмишев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884, стр. 127—128.

Սակայն հայերի, որպես ռուսական բանակի մերձավոր բարեկամի ու հուսալի դաշնակցի, դերն առավել քան երևում է Երևանյան ջոկատի գործողությունների վայրում, որը դերազանցապես տեղի էր ունենում թշնամու տերիտորիայի խորքում: Հայերի աջակցությունը վրա մեծ վստահություն ուներ Երևանյան ջոկատի հրամանատար գեներալ Ս. Տեր-Ղուկասովը, որին վիճակված էր անասելի ծանր պայմաններում կատարելու պատերազմների պատմության մեջ այդ բացառիկ նշանակություն ունեցող, չափազանց բարդ և դժվարին ռեյզը թշնամու խորը թիկունքում:

\* \* \*

Ապրիլի 12-ին, պատերազմի առաջին օրը, գլխավոր ուժերի հետ միաժամանակ Իզդիրի զորակազանից հարձակում է սկսում նաև Երևանյան ջոկատը երկու զորասյունով: Աջ զորասյունը մոտ 350 հոգի, երկու թնդանոթով գնդապետ Շիպչեի հրամանատարությամբ շարժվում է Քարվանսարայի լեռանցքի վրայով, իսկ ձախը՝ գեներալ Ա. Ա. Տեր-Ղուկասովի ղեկավարությամբ, բազկացած մոտ 7000 հոգուց, 28 թնդանոթներով ուղղություն է վերցնում Ադրի-դաղի վերելք՝ Օրգովի վրայով: Վատ ճանապարհների և անձրևային եղանակի պատճառով երկու զորասյունները հինգ օրից հազիվ հասնում են թյուրքական սահմանը: Աջ զորասյունը գրավում է թյուրքական Միսոն գյուղը, իսկ ձախը՝ շարժվում է ուղղակի Բալազետի վրա: Ռուսական զորքերի Բալազետի մոտերքում երևալը իրարանցում է առաջ բերում քաղաքում, փակում են շուկան, իսկ տեղական հարուստները թաքնվում են հայերի տներում: Բալազետի կառավարիչ Ալի-Քեմալ-փաշան փախչում է քաղաքից, պատճառարանելով, որ ինքը Մուխթար-փաշայից հրաման ունի կովի շքունվել ռուսների հետ: Ալի-Քեմալ-փաշան, հիվանդանոցում իրենց բախտին թողնելով վիրավոր և հիվանդ թյուրք զինվորներին, միաժամանակ մի նամակ է թողնում գեներալ Տեր-Ղուկասովի հասցեին՝ նրա մարդասիրությանը և հայեցողությանը թողնելով հիվանդներին: Ապրիլի 18-ին ռուսական զորքերի գլխավոր ուժերը մտնում են Բալազետ: Քաղաքի մուտքի մոտ Տեր-Ղուկասովին գիմավորում է պատվավոր քաղաքացիներից կազմված մի պատգա-

<sup>4</sup> ЦГВИА, ф. «Б», л. 213-34, л. л. 202—203

Այդ օպերացիան խոշոր նշանակություն է ունենում ողջ կամպանիայի ընթացքի վրա: Կոնզուլսովը, թյուրքական հրամանատարության մոտ կորցնելով իր վստահությունը, հետագայում այլևս ոչ մի ինքնուրույն դեր չի կատարում: Ռուսական բանակը ազատվում է մի շափազանց վտանգավոր հակառակորդից, որի գործողությունները նախատեսված էին նրա թիկունքում: Ռուսական հրամանատարությունը, ինչպես իրավացի կերպով նշում է պատերազմի մասնակից գեներալ Ս. Քիշմիշևը, զրանով պարտական էր այն հայ հոգևորականին, որը ստույգ տեղեկություն հաղորդեց Կոնզուլսովի ջոկատի մասին:

«Չի կարելի չընդունել, որ այնպիսի ջարդ, որպիսին կրեց Կոնզուլսովը, ի միջի այլոց որի վրա մեծ հույս ուներ Մուխթար-փաշան, մենք պարտական էինք վեր հիշած ֆահանային մեզ տված նիշտ տեղեկություններին, որ ամբողջապես արգարացրեց այն հույսերը, որ մենք ունեինք Փոքր Ասիայի հայ ազգաբնակչության վրա:

Եվ իրոք, ներկա պատերազմի ընթացքում՝ արևմտահայերը այնքան և այնպիսի օգնություն ցույց տվին մեզ-կորցնելով իրենց կայնն ու գույքը, մինչև իսկ իրենց կյանքը և զարմանալի ու անհաշիվ կերպով մեր կողմը պաշտպանելով, որ մենք կատարելապես այն համոզմունքին եկանք, որ Փոքր Ասիայում մեր միակ դաշնակիցները հայերն են»:

Այնուհետև, բերելով մի շարք ճանապարհորդների հիշողություններ հայերի վերին աստիճանի աշխատասիրության, մաքուր ու պարզ բարբերի, ազնիվ ու քաջ բնավորության գծերի մասին, գտնում է, որ ուսաները հանձինս հայերի ունեն իրենց հավատարիմ դաշնակիցը:

«Իրանում մենք համոզվեցինք ոչ մեկ անգամ, — գրում է Քիշմիշևը, — հակավոր էր լինում հավատարիմ ուղեկցող, անհրաժեշտ էր լինում մի ինչ որ գաղտնի գրություն որևէ տեղ հասցնել, միշտ գտնվում էին հայեր, որոնք բարեխղճորեն կատարում էին այդ հանձնարարությունները: Կարսի գրահման գիշերը, գրոհող երեք զորասյունների առաջնորդները հայեր էին: Նրանք հազամ զինվորական շինելներ՝ գրոհի ժամանակ գնում էին զորասյունների առջևից»<sup>1</sup> (ընդգծումն իմն է: — Ա. Ն.):

<sup>1</sup> Кишмишев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884, стр. 127—128.

Սակայն հայերի, որպես ռուսական բանակի մերձավոր բարեկամի ու հուսալի դաշնակցի, դերն առավել քան երևում է Երևանյան ջոկատի գործողությունների վայրում, որը գերազանցապես տեղի էր ունենում թշնամու տերիտորիայի խորքում: Հայերի աջակցության վրա մեծ վստահություն ուներ Երևանյան ջոկատի հրամանատար գեներալ Ս. Տեր-Ղուկասովը, որին վիճակված էր անասելի ծանր պայմաններում կատարելու պատերազմների պատմության մեջ այդ բացառիկ նշանակություն ունեցող, շափազանց բարդ և դժվարին ռեյզը թշնամու խորը թիկունքում:

\* \* \*

Ապրիլի 12-ին, պատերազմի առաջին օրը, գլխավոր ուժերի հետ միաժամանակ Իգդիրի զորակայանից հարձակում է սկսում նաև Երևանյան ջոկատը երկու զորասյունով: Աջ զորասյունը մոտ 350 հոգի, երկու թնդանոթով գնդապետ Շիպչևի հրամանատարությամբ շարժվում է Քարվանսարայի լեռնանցքի վրայով, իսկ ձախը՝ գեներալ Ս. Ս. Տեր-Ղուկասովի ղեկավարությամբ, բաղկացած մոտ 7000 հոգուց, 28 թնդանոթներով ուղղություն է վերցնում Ադրի-դաղի վերելքը՝ Օրգովի վրայով: Վատ ճանապարհների և անձրևային եղանակի պատճառով երկու զորասյունները հինգ օրից հազիվ հասնում են թյուրքական սահմանը: Աջ զորասյունը գրավում է թյուրքական Միսոն գյուղը, իսկ ձախը՝ շարժվում է ուղղակի Բայազետի վրա: Ռուսական զորքերի Բայազետի մոտերքում երևալը իրարանցում է առաջ բերում քաղաքում, փակում են շուկան, իսկ տեղական հարուստները թաքնվում են հայերի տներում: Բայազետի կառավարիչ Ալի-Քեմալ-փաշան փախչում է քաղաքից, պատճառաբանելով, որ ինքը Մուխթար-փաշայից հրաման ունի կռվի շրջանիլ ուսաների հետ: Ալի-Քեմալ-փաշան, հիվանդանոցում իրենց բախտին թողնելով վիրավոր և հիվանդ թյուրք զինվորներին, միաժամանակ մի նամակ է թողնում գեներալ Տեր-Ղուկասովի հասցեին՝ նրա մարդասիրությանը և հայեցողությանը թողնելով հիվանդներին: Ապրիլի 18-ին ռուսական զորքերի գլխավոր ուժերը մտնում են Բայազետ: Քաղաքի մուտքի մոտ Տեր-Ղուկասովին պիմավորում է պատվավոր քաղաքացիներից կազմված մի պատգա-

<sup>4</sup> ЦГВИА, ф. «Б», л. 213/34, л. л. 202—203

մավորություն, մեջխար և ազգաբնակչությունը իրենց հոգևորականներով: Առանձնապես մեծ է լինում հայերի ուրախությունը, որոնք անհամբեր սպասում էին այդ բերկրալից օրվան: Տեր-Ղուկասովի մուտքը Բայազետ և հայերի կողմից ցույց տված վերաբերմունքի մասին ժամանակակից դեպքերի ակնատես Գ. Շերենցը հետևյալ կերպ է նկարագրում: «Տանջված ու շարշարված Բայազետի և շրջակա հայերի համար անսպասելի մի հուսալարար խնդրից օր էջ 1877 թ. ապրիլի 18-ի առավոտը: Արևածագին քաղաքի ազգաբնակչությունը իրենց կրոնավորներով, դպրոցական աշակերտներով համախմբվելով Շերիֆ-էֆ-ի տան առաջ, կազմելով մի հսկայական թափոր, իջան գաշտավայրը, բնդառաջ գնացին եկվոր ազատարար բանակին: Թափորը նախ հանդիպեց կազակների մի հառաջապահ գնդի, որոնք գլխարկներն վար առած համբուրեցին խաչն ու ավետարանը և հանապարհ տվին:

...Գնն. Տեր-Ղուկասովը իր շքամբրով ընդհատվելով բանակից՝ ընդառաջեց դեպի թափորը... Հայ հոգևորականությունը... և թյուրք մուլաները կարգալով իրենց աղոթքը մատուցեցին ազ ու հաց, զորս ընդունելով ասաց. «Ժողովուրդ, շնորհակալ եմ աստվածանից, որ այս քաղաքը առանց արյունահեղություն հանձնվեց մեր մեծագուր կայսեր հովանու տակ, դուք վստահ եղեք, որ մեր զորքերը եկել են ձեր կյանքը, ձեր կայքը ապահովելու, ով որ սուր ի ձեռքն մեր դեմ է կանգնած, նա է մեր թշնամին. դուք աղոթեցեք, որ խաղաղություն լինի երկու թշնամիների մեջ»: Գնե՞րալի այս խոսքերը ընդունվեց մեծ ոգևորությամբ ու կեցցեներով, և որը թարգմանեց Վաղարշապատի գավառապետ Եղոր Ֆազեկի նանագաղովը»<sup>1</sup>: Բայազետում անհրաժեշտ կարգադրություններ անելուց հետո, ապրիլի 24-ին գեներալ Տեր-Ղուկասովը ենթադնդապետ Կավալյանի հրամանատարության տակ թողնելով փոքրաթիվ ուժեր, ինքը հիմնական ուժերով շարժվում է Արծալի—Քյուրդ-գյուլի վրայով. ապրիլի 26-ին հասնում Գիադեն: Այստեղ Տեր-Ղուկասովը զեկուցադիր է ստանում ենթադնդապետ Կովալյանից. վերջինս հայանում է, որ լուրերի համաձայն Վանում ուժեր են կազմակերպվում քրդերից և թյուրքական կանոնավոր զորքերից՝ Երևանյան ջոկատի թիկունքում գործելու նպատակով: Գա հաստատվում է

<sup>1</sup> Գ. Շերենց, «Հովիտ», 1914, № 44:

նաև գեներալ Ամելյախովարովի կողմից Ս. Հովհաննեսի շրջանում կատարած հետախույզության ընթացքում ձեռք բերած տեղեկություններով: Մայիսի 3-ին Բայազետի պարեոը կրկին անգամ հայտնում է քրդերի և թյուրքերի՝ Բայազետի վրա հարձակման մտադրությունների մասին: Այդ լուրերի հետևանքով հուզվում է բնակչությունը, որին հանգստացնելու և Բայազետի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու նպատակով, այնտեղ է ուղարկվում գեներալ Ամելյախովարովը՝ մի ազգամաշտկատով: Իրոք, Ա-ը Բայազետը գտնում է չափազանց անհանգիստ վիճակում: Նա ձերբակալում է 89 թյուրք-գաբթիների (ժանդարմներ), որոնք «անհայտ» պատճառներով մնացել էին քաղաքում, այնուհետև խուզարկություն կատարելով՝ բազմաթիվ մարդկանց մոտ գեներ է հայտնաբերում, իսկ այդպիսիներից մեկի մոտ հեռադրական ապարատ»<sup>2</sup>: Այդ բոլորը սպառնույց էին այն բանի, որ իրոք, ինչ-որ բան նախապատրաստվում էր ի վնաս առանների և որ Բայազետի վրա հարձակման լուրերը անհիմն լինել չէին կարող: Անհրաժեշտ կարգադրություններ անելուց հետո, Գ. Ամելյախովարովը նորից վերադառնում է Ս. Հովհաննես և միանում ջոկատի հիմնական ուժին: Հաշիի առնելով այդ բոլորը, գեներալ Տեր-Ղուկասովը մի գեկուցադրով դիմում է կորպուսի հրամանատարին՝ պահանջելով լրացուցիչ ուժեր, մասնավորապես Բայազետի կայազորը ուժեղացնելու նպատակով. այդ անհրաժեշտ էր ոչ միայն քաղաքը պաշտպանելու, այլև երևանյան նահանգը թշնամու հնարավոր ներխուժումներից պաշտպանելու համար: Լորիս Մելիքովից մերժում ստանալով, գեներալ Տեր-Ղուկասովը իր արամադրության տակ եղած ուժերով շարժվում է առաջ և մայիսի 23-ին գրավում Ղարաբիլիսան: Թողնելով Ղարաբիլիսայի դիրքերը, թյուրքերը նահանջում են Ջեյդեկան: Չարգացնելով հարձակումը, գեներալ Տեր-Ղուկասովը մայիսի 28-ին գրավում է Ալաշկերտը, իսկ 29-ին՝ Ջեյդեկանը: Գրանից հետո, շուտով Երևանյան ջոկատի կապը գլխավորող ուժերի հետ ընդհատվում է:

Երևանյան ջոկատի հաջողություններին մեծապես նպաստում են հայերը, որոնք ամենուրեք բաց էին անում իրենց դռները սուսաց զորքերի առաջ. օգնում, ուղեկցում էին նրանց, ստույգ տեղեկություններ հաղորդում հակառակորդի մասին և այլն...

<sup>2</sup> Журнал военных действий Эриванского отряда. № 191 за 1877 г.

«Քայազետի և Ալաշկերտի շրջանի ամբողջ հայ ազգաբնակչու-  
թյունը, որը պատերազմի սկզբից սրտատրոփ սպասում էր ռուս-  
հաղթական զորքերի երևալուն, հենց առաջին օրից Տեր-Ղուկասո-  
վին և նրա զորամասին ընդունում է որպես փրկիչների և ամենուրեք  
նրանց ցույց տալիս շտեմնված ընդունելություն: Հայկական բոլոր  
գյուղերից, որոնց միջով կամ մոտով անցնելու էր ռուսական բա-  
նակը, ընդառաջ է դուրս գալիս քրիստոնյա զորքին, հայ հոգևորա-  
կանությունը ժողովրդի և ահագին բազմությունը, խաշով և խաշ-  
վառով, կին, երեխա, ծեր ողջունում են ռուսաց զորքի մատրը  
իրենց երկիրը և ահագին օգնություն կազմակերպում հացով, ցորե-  
նով, ձավարով, խոտով և ուրիշ մթերքներով: Առանձնապես աչքի է  
ընկնում հայերի հյուրասիրությունը Ալաշկերտում, Ուշ-Քիլիսե  
Ս. Հովհաննա վանքում, Ղարաքիլիսայում, Ջեյդեկանում և ընդ-  
հանրապես նփրատի վերին հովտում, ուր փոխված էին հայ գյուղե-  
րը»<sup>1</sup>:

Գծվար է նկարագրել այն ամեն զոհաբերությունները, այն ան-  
կեղծ սերը, որ հայ ժողովուրդը ամենուրեք ցույց է տալիս այս պա-  
տերազմի ժամանակ ռուսական բանակին: Այդ մասին շափազանց  
հետաքրքիր տեղեկություն է հաղորդում ժամանակակից դեպքերին  
ականատես Ն. Աթանասյանը. «Ես անձամբ ներկա եմ եղել այն  
բազմաձայն հացկերություններին, որոնք միշտ փութաչան հո-  
գացողությամբ և սիրով պատրաստում էին Երևանի քաղաքացիք և  
գյուղերի հայ հասարակություններից շատերը: Իսկ ինչ կվերա-  
բերվի Շիրակի, Բասենի և Ալաշկերտի գավառների հայերին, նրանց  
ուրախությունը չափ ու սահման չկար. ռուս զինվորներին նրանք  
տեսնելիս կարծում էին թե մի-մի երկնատաք հրեշտակներ են, որ  
երկնքից իջնելով իրենց բազմադարյան գերության շղթաները լու-  
ծելու եկած են»:

Այնուհետև նկարագրում է հայ գեղջիկուհու վերաբերմունքը  
ռուս զինվորների նկատմամբ և թե ինչպես «նրանք գյուղից անցնող  
զինվորներին կանչում էին «սուղատ զարդաշ, արի շորակ կուշաք»  
և մինչ ղեռ մեկը հացի էր հրավիրում, մի ուրիշը թան, մածուն,  
ժածիկ հողե գավաթների մեջ լցրած մոտ էր բերում, մի այլ տեղ

<sup>1</sup> Սալ-Ման, Ռուս-տաճկական պատերազմը 1877—1878 թթ. և նրա  
հայ ազգի հերոսները, 1914, Թիֆլիս, էջ 19:

առավել սրատագրավ տեսարան էր հանդիսանում: Մանկամարդ  
չահել հայ կինը, որ մի շափ ցորենով ձեռք էր բերել բեռնավորից  
մի քանի վարունգ, որից հազիվ մեկը փոքրիկ Կարեին (Կարապետ)  
բաժին էր բնկել և ճխալով իր մոր զրկում վարունգը սղմել էր կրծ-  
քին, ահա՛ անցնում է հոգնած սուղատը և մայրը մտիկ շտալով իր  
մանկան լաց ու կոծին, խլում է վարունգը և տալիս սուղատին,  
իսկ փոքրիկին փաշիպալեղով ասում է. «Լաց մի լիք բալաս, արե-  
վուղ զուրբան. թող իդա խիար սուղատ ախպերն ուտա, Վնա որ  
կերթա, խլա մեր դուռմնին խեթ կռվ կենա, էրուն կթափա, որ  
մեր երկիր անօրից ձեռքեն ազատա...»: Երեխան որքան և չէր հաս-  
կանում այդ բառերի նշանակությունը, այնուամենայնիվ մոր ան-  
սովոր վարմունքից, զինվորի փայլուն նշանազգեստի վրա կես մի  
զարմացած և կես մի հափշտակված խեղդեց իր մեջ հեծեծանքը և  
անվրդով թույլ տվեց, որ ազահ ախորժակով ուտի բարի և քաջ  
զինվորը»<sup>1</sup>:

Ժամանակակից պարբերական մամուլի էջերում և պատերազ-  
մի մասնակից հայ և ռուս պատմիչների մոտ բազմաթիվ նման  
դեպքեր կարելի է գտնել, որոնք վկայում են հայ ժողովրդի՝ ռուս  
զինվորներին ցույց տված բարեկամական ու սիրալիր վերաբեր-  
մունքի մասին: Որտեղով որ անցնում էր ռուսական բանակը,  
ժողովուրդը զիմավորում էր մեծ ցնծությամբ, ընդունելով նրան  
որպես իր փրկիչի, աղ ու հացով, ուրախության և հուզմունքի ար-  
ցունքն աչքերին:

\* \* \*

Համոզված լինելով, որ ռուսներն իրենց առկա վիճակով հը-  
նարավորություն չունեն Երևանյան ջոկատին շուտափույթ օգնու-  
թյուն կազմակերպելու, Մուխամար-փաշան որոշում է հարձակողա-  
կան դործողություն սկսել Տեր-Ղուկասովի դեմ:

Երևանյան ջոկատին կրիտիկական վիճակից դուրս բերելու  
համար որոշվում է գլխավոր ուժերից մի ջոկատ առանձնացնել  
գեներալ Գեյմանի հրամանատարությամբ, որը ճանապարհ է  
ընկնում հունիսի 9-ի լուսաբացին և երեկոյան կանգ առնում Քո-  
թանլիում, որտեղ որոշվում է գիշերել:

<sup>1</sup> Մշակ, 1878, № 3:

Կարե

«Այստեղ մեզ ներկայանում է նույն հայ հոգևորականը, որը Քեզլի-Ահմեդի ճակատամարտից առաջ ստույգ տեղեկություններ ավելց Մուսա-կոնզուլոսովի անդի և դասավորման մասին: Նա այս անգամ նույնպես կարևոր տեղեկություն հաղորդեց հունիսի 4-ին մեր կողմից կարսի ուժակոծության արդյունքների մասին»<sup>1</sup>:

Գնալով ուժեղանում են Տեր-Ղուկասովի ջոկատի մասին ստացվող տազնապալից լուրերը: Լուրեր են տարածվում նաև, որ թյուրքերը 7000-անոց զորքով պաշարել են Բալազհարը, որտեղից մտադիր են ներխուժել Սուրմալուի գավառը, իսկ այնտեղից Երևանի վրա: Այդ լուրերի ստույգ լինելը պարզելու ոչ մի հնարավորություն չկար, բանի որ Տեր-Ղուկասովի մոտ ուղարկված մարդիկ չէին վերադառնում: Կորպուսի հրամանատարը 2000 ուսրլի է խոստանում նրան, ով գեներալ Տեր-Ղուկասովին կհայտնի նրան օգնելու նպատակով առանձնացված ջոկատի շարժման մասին: Մուսավոր տեղեկությունների հիման վրա ուսաները մի կերպ խմանում են, որ Տեր-Ղուկասովի ջոկատը գտնվում է Գահարում: Անհրաժեշտ էր միայն ցույց տալ Մուխթար-փաշային իրենց մոտիկ տարածություն վրա լինելը. նրա ուշադրությունը դարձնել իրենց վրա, որպեսզի դրանով գոնե մասամբ թեթևացնեին Տեր-Ղուկասովի դրությունը: Քողնելով Զեյզեկանը, Տեր-Ղուկասովը հունիսի 2-ին շարժվում է հակառակորդի հետքերով Գհար տանող ճանապարհով:

Ջոկատի հրամանատարը մոտենալով Գրամ-գաղի հարավային լանջերին, հայտնաբերում է այնտեղ ամրացված զիրքերում գտնվող թշնամու ուժերը: Տեր-Ղուկասովը հաշվի չառնելով, որ թշնամին ամրացված զիրքերումն է գտնվում, որի վրա մեծ հույսեր ունեի թյուրքական բանակի հրամանատար Մահմեդ-փաշան, և նրա եռակի զերազանց ուժերը, որոշում է հաջորդ օրը գրոհել: Գրամ-գաղի պատմական ճակատամարտը տեղի է ունենում 1877 թ. հունիսի 4-ին: Ոչ հակառակորդի զերազանց ուժերը, ոչ անառիկ զիրքերը չեն օգնում նրանց. ճակատամարտը վերջանում է ուսաների փայլուն հաղթանակով: Ճակատամարտում ընկնում է թյուրքական զորքերի հրամանատարը: Այս ճակատամարտում ուսաները կորցնում են ընդամենը սպանված մեկ սպա, 26 զինվոր և վիրավոր 2 սպա և 126 զինվոր: Թյուրքերի կորուստները լինում են անհա-

<sup>1</sup> Кишмишев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884, стр. 157.

մեմատ ավելի մեծ: Չնայած ոչ մի տեղ այդ մասին ճիշտ թիվը չէ նշված, սակայն գատելով մի շարք աղբյուրների տվյալներից, կարելի է համոզված պսել, որ թյուրքերի կորուստներն այդ ճակատամարտում կազմել են անվազն 2000 մարդ: «Մարտին մասնակից անդլիական երկու սպաների պատմածից պարզվում է, որ թյուրքական ոչ մի գումարտակ առանց սարսափելի կորուստների չի վերադարձել Դելի-Բարա և որ 800 մարդ տարրեր զնդերից փախել են Քյուրբի-բեյ, նախքան ճակատամարտի վախճանը: Ինչ վերաբերում է քրդերին և շերքեզներին, ապա նրանք անմիջապես ցրվում են տարբեր ուղղություններով, երբ տեսնում են որ զորքը վատ ընթացք է ստանում: Թյուրքական զինվորական պետերի և խորասանի ու էրզրումի դոսպիտալների բժիշկներից Նուրմանի հավաքած տեղեկությունների համաձայն, թյուրքերը հունիսի 4-ին ճակատամարտին կորցնում են 1426 սպանված և անհետ կորած և 963 վիրավոր—ընդամենը 2389 մարդ. զնդերից մեկում առողջ են մնում միայն երկու սպաներ»<sup>1</sup>: Գրամ-գաղի փառավոր հաղթանակից հետո, գեներալ Տեր-Ղուկասովը շարժվելով առաջ, հունիսի 5-ին բանակում է Գահարի կիրճի մոտ՝ Աբիդգար գետի ձախ ափին: Ջոկատի հետախուզությունը պարզում է, որ զեպի իրենց բանակատեղին են շարժվում հակառակորդի մեծ ուժեր: Գրանք Մուխթար-փաշայի զորքերն էին, որոնք կենտրոնացած էին Դելի-Բարայում և համոզված լինելով, որ երևանյան ջոկատը գտնվում է Գահարում, որոշում են հարձակվել նրան ջախջախելու նպատակով: Տեր-Ղուկասովը չկասկածելով, որ իր դիմաց գտնվում է հակառակորդի զինվոր ուժերը, հրամայում է իր զորքերին դրավելու մարտական գիծը, որը ձգվում էր 7 վերստ երկարությամբ: Այսպես ուրեմն, Տեր-Ղուկասովը որոշում է ընդունել անհավասար մարտը: Գհարի նշանավոր ճակատամարտն սկսվում է հունիսի 9-ի առավոտյան: Թշնամու զերազանց ուժերի կատաղի գրոհները հետ են շարժվում իրենց համար մեծ կորուստներով: Ամբողջ օրը թե՛ մարտեր են տեղի ունենում, ոչ ոք իր դիրքերը չի զիջում: Հաջորդ օրը մարտեր տեղի չեն ունենում: Մուխթար-փաշան սպասում էր լրացուցիչ ուժերի, հաջորդ օրը գրոհը վերսկսելու համար, սակայն լսելով, որ

<sup>1</sup> Материалы для описания русско-турецкой войны 1877—1878 гг., Тифлис, 1908, т. III, стр. 104.



ուսաները շարժվում են Սողանլու, թողնում է ճակատամարտը վերսկսելու դիտավորությունը և շտապում է օգնության հասնել Ջեվենում եղած իր զորքերին: Գճարի ճակատամարտում թյուրքերը կորցնում են 2000—2500 հոգի սպանված-վիրավոր: Ռուսները կորցնում են ընդամենը սպանված-վիրավոր 20 սպա և 434 շարքային զինվոր:

\* \* \*

Այսպիսով, ինչպես Դրամ-դադի, այնպես էլ Գճարի պատմական ճակատամարտերը, որոնք տեղի են ունենում ուսաների համար աննպաստ պայմաններում և թշնամու եռակի գերազանց ուժերի դեմ, վերջանում են ուսական զորքերի փառավոր հաղթանակով: Այդ ճակատամարտերում ուսա զինվորները և սպաները ցույց են տալիս իրենց անվիճելի մարտական գերազանցությունը թշնամու նկատմամբ: Այդ հաղթական ճակատամարտերը մեծ պատիվ են բերում Երևանյան ջոկատի հրամանատար՝ գեն. Արշակ Տեր-Ղուկասովին, ցույց տալով նրա զորավարական հմտությունը:

Ջեների անհաջող ճակատամարտը<sup>1</sup>, Կարսի բլուկադայի վերացումը և ուսական զորքերի ժամանակավոր նահանջը, ծանր պայմաններ են ստեղծում Երևանյան ջոկատի համար, որը հունիսի 14-ին հրաման է ստանում նահանջելու: Երևանյան ջոկատի համար սկսվում է շափազանց դժվարին փորձությունների մի շրջան: Իզմայիլ-փաշան, որը Գճարի ճակատամարտից հետո ստանձնել էր Տեր-Ղուկասովի դեմ գործող բանակի հրամանատարությունը, հրաման է ստանում Մուխթար-փաշայից հետապնդել Տեր-Ղուկասովին, թույլ չտալ որ նա կազմակերպված նահանջի, հատկապես խանգարել պաշարված Բայազետին օգնելու նրա մտադրությունը: Գեներալ Տեր-Ղուկասովը, լսելով, որ ուսաների հարձակումը Ջեների ամրությունների վրա անհաջող է անցել, որի պատճառով Գեյմանի ջոկատը սկսել է նահանջել, խորը վիշտ է ապրում,

<sup>1</sup> Հունիսի 13-ին ուսաները Գեյմանի գեկավարությունը գրոհեցին թյուրքերի Ջեների ամրությունները, սակայն մի շարք պատճառներով անհաջողության մատնվեցին, որից հետո Գեյմանին չի հաջողվում Տեր-Ղուկասովին օգնության հասնել. Գ. Լ. Մելիքովը որոշում է նահանջել՝ նոր զորքեր գրավելու համար, սպասելով լրացուցիչ ուժերի:

մտանվանդ իրեն նույնպես հրամայված էր նահանջել: «Եվ ահա առաջին անգամ այս միշտ զսպված և երկաթե մարդը լի վշտով արտասանում է. «Ոչ մի տեղ ոչ տեսել, ոչ էլ կարդացել եմ, որ փրկվելու համար զորապետը նահանջի, ընդհակառակը փրկություն որոնող զորքը հարձակումով առաջ է գնում, իսկ ես ստիպված եմ հետ նահանջել»<sup>1</sup>:

Նահանջի առաջին օրը, հունիսի 14-ին Ալաշկերտում եղած ժամանակ գեն. Տեր-Ղուկասովը առաջին անգամ լուր է ստանում Բայազետի պաշարված կայազորի մասին: Որքան ծանր լինեք Տեր-Ղուկասովի համար պաշարված կայազորի գրություն մասին լսելը, այնուամենայնիվ անկարող էր նա ավյալ մոմենտին օգնության հասնել, քանի որ նրան հետապնդում էր Իզմայիլ-փաշայի 18 000-անոց բանակը, իսկ առջևից վխտում էին Ֆեյիկ-փաշայի զորքերը, որոնք սպառնում էին կտրել նրա նահանջի ճանապարհը:

Այսպես, ուրեմն, գեներալ Տեր-Ղուկասովը, շարունակելով իր կազմակերպված նահանջը, հունիսի 18-ին հասնում է Ղարաբիլիսա: Այստեղ նա լսում է, որ քյուրդ բաշիրոզուկները, նկատելով ուսաների նահանջը, սրի են մատնել հայկական մի շարք գյուղեր՝ ուսաներին ցույց տված օգնության համար:

«Այստեղ նա շափազանց ախտը լուր ստացավ մի շարք հայկական գյուղերի ազգաբնակչությանը ուսաներին ցույց տված օգնության և համակրանքի համար, բաշիրոզուկների կողմից գլխովին սրի մատնելու մասին: Այդ լուրը բավական էր, որ առանց դրան էլ ջոկատին հետևող բազմաթիվ հայ զաղթական ընտանիքներին միանային Ալաշկերտի հովտի մեծ բանակումը հայ ընտանիքներ, որոնք ցանկություն հայտնեցին իրենց մյուս հավատակիցների հետ Ռուսաստան դաղթելու»<sup>2</sup>:

Երևանյան ջոկատի նահանջի գործն ավելի քան ծանրանում է: Հազարավոր հայ ընտանիքներ թյուրքերի և քյուրդ բաշիրոզուկների վրեժխնդրությունից ազատ լինելու և ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար դալիս-միանում են Երևանյան ջոկատին՝ խընդրելով նրանց օգնությունը Երևանի նահանգը տեղափոխելու համար:

<sup>1</sup> Սալ-Ման, Ռուս-առնկական պատերազմը 1877—1878 թթ. և նրա հայ ազգի հերոսները, էջ 28:

<sup>2</sup> Кишмишев С., стр. 200.

«Քաջ գեներալը, լավ զինվորականը, նամանավանդ հայ մարզը ինչ պայմանների մեջ էլ որ լինեն, չէր կարող մերժել 20 000 հայ թշվառների այս արդար խնդիրքը. ուստի նա ոչ միայն թույլ է տալիս սրանց միանալ բանակին, այլ ամեն հող տանում է, որ սրանք ապահով և անվտանգ հասնեն երևանյան նահանգը»<sup>1</sup>:

Այսպիսով, գեներալ Տեր-Ղուկասովը, հաղթահարելով նահանջի ճանապարհին ընկած բոլոր դժվարությունները, զիրքից-զիրք անցնելով, երբեմն էլ հարձակման անցնելով և զրանով հնարավորություն տալով զաղթականներին, վերավորներին և հիվանդներին առաջ անցնելու, 10 օրվա ընթացքում անցնելով 200 վերստ ճանապարհ, շտաբով ոչ մի գերի և շեղանելով ոչ մի սպառազինություն, հունիսի 24-ին հասնում է Իզդիր: Թյուրքական բանակը, որը հետապնդում էր Տեր-Ղուկասովին, կանգնում է Գիադինում: Նա այնքան հյուծված էր, որ առանց մի բանի օրվա հանդուրժող առաջ շարժվել չէր կարող: Դա հնարավորություն է տալիս Տեր-Ղուկասովին օգնության հասնելու Բայազետի պաշարված կայազորին:

Այժմ մի բանի խոսք Բայազետի պաշարման և նրա փոքրաթիվ հերոս-պաշտպանների մասին:

Այն բանից հետո, երբ Տեր-Ղուկասովը, Բայազետում մի փոքր ջնկատ թողնելով, շարժվում է երկրի խորքը, հեռանալով իր կոմունիկացիաներից, հակառակորդը որոշում է մեծ ուժերով Բայազետի վրա հարձակվել, գրավել այն և գործողություններ սկսել Երևանյան ջոկատի թիկունքում, սպառնալով Երևանյան նահանգին: Վանի շրջանում հակառակորդի մեծ ուժերի կենտրոնացման և Բայազետի վրա հարձակում գործելու նրանց զիտավորությունների մասին ժամանակին հայտնում են տեղական հաշերը, սակայն հրամանատարությունը այդ լուրերին կարևորություն չի տալիս: Մայիսի 5-ին Բայազետի պարեո Կավալակին երկրորդ անգամ է հայտնում հրամանատարությունը Բայազետին սպառնացող վտանգի մասին: Գեներալ Ամելախվարովի կազմակերպած հետախուզությունը հակառակորդի նման ուժեր չի հայտնաբերում: Ինչպես նկատում է Կոնստանդին Գեյսը, շատերի ասածներից երևում է, որ Կովալակու (կայազորի պետ) փոխարինումը հետևանք է

իրը թե նրա կողմից զլխավոր հրամանատարությունը տված անստույգ տեղեկությունների: Գնալով՝ Բայազետին սպառնացող վտանգի մասին լուրերը ավելի համառ են դառնում: Այդ մասին հայտնում է նաև Մակուի խանը: Ահա այդ տագնապալից օրերին էր, երբ Բայազետի կայազորին օգնության է հասնում Կարաբաղի հայերից կազմակերպված կամավորական զույգը՝ բովով 1000 ձիավոր (սրանց մեջ լինում են նաև ադրբեջանցիներ)՝ Գրիգոր Շահնազարյանցի և Համբարձում Հախումյանցի զլխավորությամբ: Դեպքերի ախանառես Գ. Շերենցը այդ օրերի մասին պատմում է. «1877 թ. առաջ բանակը դեռ Ալաշկերտի հովտում, Չեյքեկանի և Դհարի կիրճերում քորդ Իսմայիլ-փաշայի բանակը ետ մղելով էր զբաղված, հունիսի 3-ին լուր տարածվեց, որ շեյխ Իպաղուլլահի և Ջելլալեդինի հրոսակային խումբը կանոնավոր զորքերը Ահմեդ Վեֆկի փաշայի հրամանի տակ հառաչանում են դեպի Բայազետ: Հաջորդ օրը, հունիսի 4-ին, երևանից եկած բովով 1000 ձիավոր բաղկացած Կարաբաղի հայ կուրիներեից և բյուրեբեից, զքնդապետ Գրիգոր Աղա-Մելիք Շահնազարյանցի և Համբարձում Աղա-Հախումյանցի, հասան Բայազետ»<sup>1</sup>:

Երբ վերջնականապես պարզվում է, որ թշնամու գերազանց ուժերը հարձակվում են Բայազետի վրա, որոշվում է հետախուզություն կատարել Վանի ուղությամբ, սակայն, հանդիպելով թշնամու գերազանց ուժերին, մեծ դժվարությամբ կովով նահանջում են դեպի Բայազետ: Դեռ առաջավոր մասերը քաղաքի փողոցները չէին մտել, երբ նրանց վրա կրակ են սկսում տեղական թյուրքերը՝ լուսամուտներից, կոտորներից, որը ավելի քան դժվարացնում է ուսանների կանոնավոր նահանջը դեպի միջնաբերդը, որը կատարվում է մեծ կորուստների գնով, սակայն միլիցիոներների զգալի մասին այդ չի հաջողվում, որոնք և կոտորվում են այդ անհավասար կովում:

«Պացեկը հրաման է տալիս նահանջելու, — պատմում է դեպքի մասնակիցներից մեկը, — ցաբ-ցրիվ վազելով, շենքից շենք, մի բանի մասերի հաջողվում է հասնել միջնաբերդ, սակայն ուշացածներն ընկնում են քաղաքի ներսից տեղացող անասելի կրակի տակ:

<sup>1</sup> Սալ-Ման, Ռուս տաճկական պատերազմը 1877—1878 թթ. և նրա հայ ազգի հերոսները, էջ 30:

<sup>1</sup> «Հովիտ», 1914 թ., № 46, Գ. Շերենց, «Բայազետի հերոս պաշտպանները»:

Մերունինները—տղամարդիկ և կանայք կրակում էին նրանց վրա լուսամուտներից, կտուրներից, դռներից, իսկ երեխաները հարվածում էին վիրավորներին քարերով, որոնք չէին կարողացել ժամանակին տեղ հասնել: Ժամը 6-ին հրամայվում է փակել միջնաբերդի դռները, չնայած դեռ շատերը միլիցիոներներից դուրս էին մնացել միջնաբերդից: «Հունիսի 6-ի կորուստները կազմում էին—սպանված 1 սպա, վիրավոր 2 օրեր սպաներ և 150 շարքային զինվորներ, որոնցից միայն 60-ին է հաջողվում միջնաբերդ փոխադրվել: Անհետ կորչում են 400-ից ավելի միլիցիոներներ (կամավորներ)»<sup>1</sup>: Այսպիսով Բայազետի փոքրաթիվ կայազորը, հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ փակվում է միջնաբերդում, սպասելով օգնական ուժերի: Թյուրքերը անմիջապես գրավում են քաղաքը և հունիսի 7-ին պաշարում միջնաբերդը: 1877 թ. հունիսի 6-ի նշանավոր օրը, Բայազետի կայազորը, առանց զրան էլ իր սակավաթիվ ուժերից կորցրեց ավելի քան 400 միլիցիոներներ, 150 կողակներ ու զինվորներ, 3 սպա, այդ թվում ենթապետական Կովալեսկուն, ձիերի մեծ մասը իրենց սարքերով: Գրավելով քաղաքը, բրդերը և թյուրքերը մի քանի օր շարունակ վրեժ են լուծում տեղական հայերից և միջնաբերդից դուրս մնացած հայ կամավորներից: Անխնա սրի մատնում բոլորին, թե կին և թե տղամարդ, շինայելով նույնիսկ մանուկներին: Հայերի ամբողջ դուրբը թալանում, իսկ նրանց տները այրում են:

«Մանր էր բերդում պաշարվածների դրուժյունը, գրում է ականառու Գ. Շերենցը,—ևս ավելի ծանր դրոժում և զանազան թաղամասերում թյուրքերի տանը ասպատանած հայերի դրուժյունը, որոնցից շատերը Ռուսիայից եկած կառապաններ և միլիցիոներներ որպես պատերազմական զերի մնալով թյուրքերի ձեռքը, քշվեցին դեպի Վան, Բաղեշ և Տիգրանակերտ, ի ցույցս ֆանատիկ թյուրք ամբոխի»: Այնուհետև նկարագրում է քյուրդ և թյուրք հրոսակախմբերի քստմենլի արարաքները Բայազետի անպաշտպան հայ ազգաբնակչության նկատմամբ: «Վեց ամբողջ զիշեր,—շարունակում է Շերենցը,—Ջելլալեդինի և Շեյխ Իպաղուլլահի հրոսակալին խմբերը և նոցա հետ միացած տեղացի թյուրք սրիկաները կատարեցին իրենց բոլոր նախաձրերը և դժոխային ամեն տանջանքներով

<sup>1</sup> Վրաստանի Պետ. արխիվ, ֆ. 12, գ. 505, էջ 182:

չարչարեցին, կողոպտեցին ձեռք ընկած կին թե տղամարդ, հարուստ ավարով դուրս եկան քաղաքից»<sup>1</sup>: Նշանավոր վիպասան Բաֆֆին իր «Խենթում» մեծ արվեստագետին հատուկ վարպետությունը պատկերում է կիսավեր և ծխացող պաշարված Բայազետը:

«Բայազետը պաշարված էր:

Թյուրք-քուրդ, բոշա ջոլո և ավելի քան քսան հազար խառնի-ճաղանք բաշիրոզուկներ, խառն տաճկաց կանոնավոր զորքերի հետ շրջապատել էին կիսավեր քաղաքը: Նա ծխում էր կոակի մեջ, որպես մի ընդարձակ խարուչկի տարածություն: Քրիստոնյա հայերի տները դատարկվել էին բնակիչներից: Բարբարոսի սուրը և գերութունը սպառել էր նրանց: Հայերից մի փոքր մաս միայն ազատվել էր, կանխապես փախչելով սահմանակից Մազու-քաղաքի կողմերը, որը պարսից հողի վրա էր դառնվում»<sup>2</sup>: Այդ մասին Բայազետի կայազորի պետ կապիտան Շտոկովիչը հուլիսի 4-ի իր զեկուցագրում գրում է. «Յրեկոյան սարսափելի տեսարան էր (խոսքը հունիսի 6-ի երեկոյան մասին է:—Ա. Ն.), որի տեսքից զինվորները լաց էին լինում: Քրդերը կտառում, մտրում էին տղամարդկանց, կանանց, երեխաներին և անգամ կենդանի կրակը գցում: Ամբողջ քաղաքը բռնկված էր բոցերով, ամենուրեք աղմուկ, աղաղակ, հառաչանք էր լսվում: Այսպես շարունակվեց 3 օր. առաջին զիշերը մտրեցնում էին միայն եղերը, իսկ հետևյալ երկու զիշերները բոցե՛րի հետ միասին նաև քյուր՛կ կանոնավոր հետևակայինները և բուրդ կանայք»<sup>3</sup>:

Այդ քստմենլի եղեռնագործ տեսարանի նկարագիրը կարելի է գտնել բոլոր նրանց մոտ, որոնք առիթ են ունեցել խոսելու կամ գրելու Բայազետի հերոսական պաշտպանության մասին: Դեռ կանգուն էր մնացել Բայազետի միջնաբերդը, որի փոքրաթիվ կտրիճները հերոսական և օրհասական պայքար էին մղում թշնամու գերազանց ուժերի դեմ, որոնք օղակել էին բերդը բոլոր կողմերից և կտրել նրա հարաբերությունները դրախ աշխարհի հետ: Իրմայիլ-փաշան, տեսնելով կայազորի համառ գիմադրու-

<sup>1</sup> Գ. Շերենց, Հոլիտ, 1914 թ., № 48:

<sup>2</sup> Բաֆֆե, «Խենթ», էջ 5:

<sup>3</sup> ЦГВИА, ф. 51, л. 56.

թյունը և բերդը գրոհով գրավելու ուղղությամբ կատարած իրենց անհաջող փորձերը, դիմում է խորամանկության: Բանակցությունների մեջ է մտնում կապիտան Շտոկովիչի հետ, խոստանալով կայսրորդին լիակատար ազատություն միջնաբերդից դուրս դալու՝ դեպքում:

«Քուրդ Իսմայիլ փաշան,—գրում է Շերենցը,—շփոթված ու այլալիված ուռանների այս համառ գրությունից, ուրիշ խորամանկության դիմեց, ուղարկելով Ահմեդ անունով մի շաուշի և տալով նրան վստահության մի գիր, ուղարկեց պարեա Շտոկովիչի մոտ համոզելու և անձնատուր լինելու, բայց հակառակը եղավ. հաջորդ օրը շաուշի լեռի մարմինը ճոճած և կախված տեսնվեցավ պարսպի վրայից: Նույն փորձն արեց և չերբեղ Մուսա-փաշան, դարձյալ ապարդյուն, պաշարվածները համառ էին և կսպասեին այն բերնպատ և ազատության ժամին, որ սպասվում էր հյուսիսից»<sup>1</sup>: Պաշարման 23-օրյա ժամանակաշրջանում թյուրքական հրամանատարությունը 9 անգամ առաջարկություն է անում կայսրորդին անձնատուր լինելու մասին, սակայն ամեն անգամ նման առաջարկով զնացողին բերդից վճնդում են, իսկ նրանցից մեկին ինչպես նշվեց վերևում, պարետին անպատշաճ պատասխան տալու համար կախում են միջնաբերդի պարսպից: Այդ 9 առաջարկներից մեկը ստորագրված է անգլո-ֆրանսիական իմպերիալիստների և թյուրքական ազենտ՝ Շամիլի որդի Ֆերիկ զազի Մահմեդ-փաշայի կողմից<sup>2</sup>:

Վրաստանի Պետական արխիվում աշխատելիս՝ հաջողվեց գտնել թյուրքերի կողմից Շտոկովիչին ուղարկած 9 առաջարկների լիով տեքստերը՝ ռուսերեն թարգմանությամբ<sup>3</sup>: Այդ մասին Բայազետի կայսրորդի պետ կապիտան Շտոկովիչը գլխավոր հրամանատարության ուղարկած 1877 թ. հուլիսի 4-ի № 116 զեկուցագրում հետևյալն է գրում. «Պաշարման ամբողջ ընթացքում անձնատուր լինելու մասին 9 առաջարկ է արվել ինձ, չառաջին երեք նա-

<sup>1</sup> Վ. Շերենց, «Հոփա», 1914 թ., № 49, «Հին Բայազետ»:

<sup>2</sup> ЦГВИА, ф. 213/51, стр. 34—35 (տես ստորև, էջ 131):

<sup>3</sup> Վրաստանի Պետ. արխիվ, ֆ. 12, գ. 505, էջ 313—317 (լրիվ տեքստը):

մակներում հրաժարվելու դեպքում մեզ սպանացել են ոչնչացնել չինաչելով ոչ որի, իսկ հետագա առաջարկները դնալով մեղմացնել են, սակայն բոլոր դեպքերումն էլ պահանջել են զենքերը հանձնել:

Առաջին առաջարկին պատասխանել եմ գրավոր թույլ տալով միայն իրենց գիակները հավաքելու, երկրորդ և երրորդին պատասխանել եմ կորեկտորեն ողջունելով փաշային, չորրորդին առհասարակ չեմ պատասխանել և հրամայել եմ գրաբերին կախել, այնքան սրբան որ նա դուրս եկավ նախկին պարեա ենթազնդպետ կովալեսկու սուրհանդակը: Հետևյալ չորս առաջարկներին նորից ես պատասխանել եմ կորեկտորեն ողջունելով փաշային, միաժամանակ խնդրել, որ այդ հարցով այլևս մեզ չանհանգստացնեն, վերջին և ամենաշահավետ առաջարկին պատասխանել եմ «եթե դուք այդքան ցանկանում եք գրավել միջնաբերդը, վերցրեք այն ուժով: Ռուսները կենդանի չեն հանձնվի: Բանակցելու համար ձեր կողմից ուղարկված առաջին իսկ մարդին կհրամայեմ զնդակահարել»<sup>4</sup>:

Գնալով կայսրորդի վիճակը ծանրանում է. բացի մարդկային կորուստներից, պաշարվածները խիստ կարիք են զգում պարենի և ջրի: Պաշարման երկրորդ օրը արդեն տար ճաշ չեն եփում՝ ջրի պակասության պատճառով: Եղած շնչին քանակությամբ ջուրը խնայվում է միայն խմելու համար: Զինվորներին սրվում է օրական երկու զգալ ջուր միայն:

Հետագայում զիշերները զինվորներ էին ուղարկում գետից ջուր բերելու համար, սակայն դա էլ ամեն անգամ չէր հաջողվում. զնացածներից շատ քչերն էին վերագանում: Միաժամանակ, թյուրքերը, դարչահոտ գիակներով վարակում են գետը, զրկելով պաշարվածներին թեկուզ ամենաշնչին շափով ջուր խմելու հնարավորությունից: Առանձնապես ծանր է լինում վիրավորների և հիվանդների վիճակը, որոնք ավելի քան տանջվում էին ծարավից: Չնայած այդ բոլոր զրկանքներին, այնուամենայնիվ կայսրորդի տրամադրությունը բարձր էր և նրանք լի էին մինչև վերջը կովելու վճռականությամբ: Գնալով սպանվում են վերջին, խղճով սեղերվները: Հետագա դիմադրությունը դառնում էր անհնարին: Ուստի անհրաժեշտ էր, ինչ գնով ուղում էք լինի, մի կերպ և շտապփույթ լուր հասցնել Տեր-Ղուկասովին:

<sup>4</sup> ЦГВИА, ф. 213, д. 51, стр. 56—60 (տես ստորև, էջ 132—134):

Այդ հանդուգն ձեռնարկությունը կատարելու գործը հանձնարարվում է կազակ Կիրիլչուկին և կապիտան Շառիովիչի թարգման հայ կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանին: Նրանք մուկը ընկնելու պես նախապարհ են ընկնում բրզավան հաղուտով, անցնելով հակառակորդի տերիտորիայով, վտանդի ենթարկելով իրենց կյանքը: Հայտնի է, թե ինչ է կատարվում կազակի հետ, միայն հայտնի է, որ Բայազետի միջնաբերդում պաշարված կաշաղորի մասին առաջին տեղեկությունը գեներալ Տեր-Ղուկասովին հասցնում է Սամսոն Տեր-Պողոսյանը հունիսի 14-ին, երբ Տեր-Ղուկասովը գտնվում էր Ալաշ-կերտի հովտում և պատրաստվում էր նահանջի:

Գեներալ Տեր-Ղուկասովը նույն օրը գեներալ Պավլովին գրած իր նամակում հայտնում է Սամսոն Տեր-Պողոսյանի բերած նամակի և Բայազետի կաշաղորի օրհասական միջակի մասին: Միաժամանակ խնդրում է միջնորդել գլխավոր հրամանատարության առաջ Սամսոն Տեր-Պողոսյանին իր մատուցած ծառայության համար պարգևատրել և սպայական առաջին աստիճան տալ<sup>1</sup>:

Սամսոն Տեր-Պողոսյանի գործունեությունը գրանով չի սահմանափակվում: 1877—1878 թթ. պատերազմի հետագա ամբողջ ընթացքում նա ակտիվ ու գործուն մասնակցություն է ունենում բաշմաթիվ ուղղմական օպերացիաների՝ աշխատելով որպես լրարեր, թարգմանիչ, հետախույզ, գրանով իսկ մեծ օգնություն ցույց տալով ռուսական բանակին<sup>2</sup>:

Հաջողությամբ ավարտելով իր պատմական նահանջը, գեներալ Տեր-Ղուկասովը հունիսի 26-ին դուրս է գալիս Բզդիբից և շարժվում գեպի Բայազետ: Չնայած Հակառակորդի ուժերի դերազանցությունը և նրա կատաղի դիմադրությունը, ռուսները գրեթե ամբողջով են բաղաբը և հունիսի 28-ին ազատում միջնաբերդում փակված Բայազետի հերոս պաշտպաններին: Թյուրքերը, մեծ կորուստներ տալով, նահանջում են հարավային ուղղությամբ: Հունիսի 28-ին Տեր-Ղուկասովը հեռագրում է մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչին Բայազետի գրավման և կաշաղորի ազատման մասին<sup>3</sup>:

<sup>1</sup> ЦГВИА, ф. 134, „А“, д. 48796, л. л. 23—25 (ամբողջ տեքստը տես ստորև, էջ 136—137):

<sup>2</sup> ЦГВИА, ф. 213, л. л. 112—115.

<sup>3</sup> ЦГВИА, ф. ВУА, д. 48796, л. 54.

1877 թ. հուլիսի 6-ի հրամանով գլխավոր հրամանատարությունը շնորհակալություն է հայտնում երևանյան ջոկատին և Բայազետի հերոս պաշտպաններին<sup>1</sup>:

Բայազետը գրավելուց և կաշաղորը ազատելուց հետո, գեներալ Տեր-Ղուկասովը անհնար համարելով Բայազետում մնալը, որտեղ հոտած դիակների հեռանքով վարակիչ հիվանդություններ էին տարածվել, մուկն ընկնելուն պես մերազանում է Ղանդեղուր<sup>2</sup>, իսկ այնտեղից հաջորդ օրը՝ Բզդիբ: Ահա այսպես է ավարտվում գեներալ Տեր-Ղուկասովի պատմական սեյդը թշնամու խորը թիկունքում և ապա նահանջը՝ շափազանց դժվարին պայմաններում: Հաղթահարելով անասելի դժվարություններ, նա ոչ միայն իր զորքին, այլև նույնիսկ բազմաթիվ հայ գաղթականների տեղ հասցրեց անվնաս, հակառակորդից գրավելով թնդանոթներ, վերցնելով գերիներ, միաժամանակ ազատելով Բայազետի միջնաբերդում պաշարվածներին: Այս նահանջը, ինչպես վկայում են ժամանակի ռազմական պատմարաններից ոմանք, պատերազմների պատմության մեջ մի ուշադրավ երևույթ է, որի պատիվը ամբողջապես պատկանում է գեներալ Ա. Տեր-Ղուկասովին: «Տեր-Ղուկասովի նահանջը մտավ ռուս-թյուրքական պատերազմի պատմության մեջ իր բնական հերոսական գրվազներից մեկը, իսկ Արարատյան դաշտում բնակություն հաստատած ալաշկերտցի հայերն իրենց երգերում անմահացրին մեծ զորավարի փառապանծ անունը<sup>3</sup>:

«Չափազանցություն չի լինի,—ասում է գեներալ Ս. Քիշմիշյանը,—որ եթե գեներալ Տեր-Ղուկասովի նահանջը հավասարեցնենք Փոքր Ասիայում 10 հազար հույների հռչակավոր նահանջի հետ<sup>4</sup>:

\* \* \*

Ռուսական բանակի կողմից Կարսի առաջին պաշարումը վերացնելուց հետո, թյուրքերը գրավում են Ալաշայի ստորոտները, ավանպոստեր կարգելով Հաջի-Վալիում, Սուբոտանում և Ինակ-Թափայում: Ռուսական զորքերը ձեզքելու ուղղությամբ հուլիսի 6-ին

<sup>1</sup> ЦГВИА, 213 ВУА, л. 57, л. 85.

<sup>2</sup> Ղանդեղուրը մի փոքր դուրս է Բայազետի մոտ:

<sup>3</sup> Վ. Պարսամյան, Գեներալ Ա. Տեր-Ղուկասով, Երևան, 1924, էջ 24:

<sup>4</sup> Кашиматов, С. Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884, стр. 204.

կատարած անհաջող փորձից հետո, ամբանում են Ալաշայի բարձունքներում: Սպասելով համալրման, կարպուսի զլխավոր ուժերը դրավում են Քոչրուկ-դարա և Բաշ-Կաղեկլարի դիրքերը, իսկ Երևանյան ջոկատը, որը նույնպես համալրման էր սպասում՝ հաստատվում է Իգդիրում, ուշի-ուշով հեռանալով Իզմաչիլ-փաշայի լուրաքանչյուր շարժման:

Իզմաչիլ-փաշայի բանակը, հեռանալով Երևանյան ջոկատին և դալով նրա ետևից, այս արշավանքից հետո իրեն ավելի ուժասպառ, հոգնած ու քայքայված էր զգում, քան այն զորքը, որին նա քայլ առ քայլ հետապնդում էր մինչ այդ:

Բացի դրանից, նա խիստ կարիք էր զգում ռազմամթերքի ու պարենի. այնպես որ երկար ժամանակ էր պետք, որպեսզի Իզմաչիլ-փաշան իր մերկ ու տկուր զորքերին կարգի բերեր և, ապա, հարձակման անցնելով՝ գրավեր Երևանը, որի մասին երազում էր թյուրքական հրամանատարությունը: «Եթե Իզմաչիլ-փաշայի ջոկատը մատակարարվի անհրաժեշտ գումակով և մասնավորապես, եթե նա ժամանակին ապահովվի դրամով, որի կարիքը նա զգում է, ապա կարելի է հուսալ, որ նրան կհաջողվի գրավել ուսական քաղաք-Երևանը», — ասված է թյուրքական փոստաթղթերի ժողովածուում<sup>1</sup>:

Գնալով տազնապալից լուրեր են ստացվում այն մասին, որ Մուխթար-փաշան անհապաղ հարձակման է նախապատրաստվում: Այդ լուրերը կրկին անգամ հաստատվում են հուլիսի 20-ին՝ լրաբերների միջոցով: Ալաշայի բարձունքները գրավելու հենց առաջին օրերից, Մուխթար-փաշան Կ. Պոլսից մշտական հիշեցումներ է ստանում անհապաղ հարձակողական գործողություններ սկսելու մասին, սակայն ամեն անգամ հապաղում է, պատճառաբանելով՝ զորքերի անպատրաստ վիճակը հեռավոր արշավի համար: Մուխթար-փաշան, շարունակ տազնապալից լուրեր տարածելով իր հարձակման մասին, այնուամենայնիվ չի համարձակվում հարձակման անցնել, կասկածելով, նրա հաջողության վրա: Անհաջողության դեպքում նա կվարկարեկվեր կառավարության աչքում, որը մեծ հույս ուներ նրա վրա: Հուլիսի 20-ին նորից հրաման է ստանում հարձակման մասին, սակայն նորից դանդաղում է: Նման դանդաղեցում:

Թյուրք և շափից ավելի զգուշավորությունը դժգոհություն է առաջ բերում իր գեներալների շրջանում. մասնավորապես դժգոհ էր Մուսա-Կոնդուխովը, որը մոլի կողմնակից էր թյուրքական բանակի Կովկասը ներխուժելուն: Պատերազմի այս շրջանում, հակառակորդի ուժերի և նրա պլանների մասին ուսական հրամանատարությունը շափազանց կարևոր տեղեկություններ են հաղորդում Կարսից Մարտիրոս Արսենյանը, Կարո Գրիգորյանը և Ղաբալյոզյանը: Տարբեր մարդկանց միջոցով բազմաթիվ նամակներ է ստանում նաև գնդապետ Քիշմիշյանը, որը գեո պատերազմից առաջ լայն ծանոթություն շրջան ուներ արևմտահայերի մեջ<sup>1</sup>:

Այսպես, ուրեմն, սուսները, օգտվելով թյուրքական բանակի հրամանատարության դանդաղեցումներից և ստանալով լրացուցիչ ուժեր, սեպտեմբերի առաջին կեսին նախապատրաստվում են հարձակման: Մուխթար-փաշան նույնպես ուժեղացնում է իր բանակը. օգտագործելով բոլոր ազատ ուժերը, կատարելով նոր զորահավաք, կազմակերպելով կամավորական ջոկատներ, լրացուցիչ ուժեր ստանալով նաև Իզմաչիլ-փաշայից: Չնայած իր հորինած լուրերի միջոցով Մուխթար-փաշան աշխատում է իր զորքերից թաքցնել ուսական բանակի համալրման մասին, սակայն սեպտեմբերի սկզբներին հարկադրված է լինում զեկուցելու Կ. Պոլսի՝ սուսների օրրստօրի ավելացող թարմ ուժերի մասին և ցուցումներ խնդրում իր հետագա անելիքների մասին: «Հակառակորդի մոտ, — գրում է Մուխթար-փաշան, — լուրաքանչյուր օր նոր թարմ ուժեր են գալիս. այնպես որ հինգ սուսին շուտով մեկ օսմանցի կհասնի: Ուժերի նման անհավասարության դեպքում, իմ կարծիքով, լավ կլինի բոլոր ուժերով նահանջել Կարս, որտեղ դիրքեր գրավելով հնարավոր կլինի արգելել թշնամուն ամբողջին մոտենալու»<sup>2</sup>:

Որպես պատասխան, Մուխթար-փաշան Սուլթանից հրաման է ստանում գործադրելու բոլոր հնարավոր միջոցները սուսների հարձակումը ձախողելու համար: Ցանկանալով իրագործել Սուլթանի հրամանը, Մուխթար-փաշան անցնում է ցուցադրական գործողությունների, նպատակ ունենալով թուլացնել սուսների ուժերը Կարս լայնում և խանդարել նրանց կողմից նախապատրաստվող հար-

<sup>1</sup> Сборник турецких документов о войне 1877—1878 гг., СПб., 1879, стр. 29—30.

<sup>1</sup> Վր. Պետ. արխիվ, ֆ. 1919, գ. 41, էջ 265, 279, 297:

<sup>2</sup> Кюшмисев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884, стр. 311.

ձակողական գործողությունները: Այդ ուղղությամբ կատարված փորձերը Արդահանի և Կողբի ուղղությամբ անհաջող են վերջանում: Նման փորձերի հաջողության համար պահանջվում էր համարձակություն և վճռականություն, այն, ինչից դուրկ էր թյուրքական հրամանատարությունը: Սեփեղ հակառակորդին հանդիպելուց խուսափելու համար, գնալով աճում են դասալքության գեպքերը թյուրքական բանակի ոչ միայն շարքայինների, այլև սպայական շրջաններում, որոնցից մեկը, գալով ուստական զորակազմը, հայտնում է Մուխթար-փաշայի մտադրությունը Կարս նահանջելու մասին և նրա բանակում թագավորող անկումային տրամադրությունների և բարոյալքման մասին: Ռուսական հրամանատարությունը որոշում է գրոհել թյուրքական դիրքերը: Գրոհի օրը նշանակվում է սեպտեմբերի 20-ը՝ Սեպտեմբերի 20—22-ին ուժեղ մարտեր են տեղի ունենում, որի հետևանքով ուստները գրավում են Մեծ Յաղնին: Այս մարտերի ժամանակ իր համարձակ մաներով աչքի է ընկնում գեներալ Շելկովնիկովը, որը դժվարին անցուղիներով բարձրանալով Ալաշայի լանջերը, թիկունքից սպառնում է թշնամու դիրքերին, սակայն, օգնություն չստանալով, հարկադրված է լինում նահանջել<sup>1</sup>:

Շոգ եղանակի և ջրի պակասության պատճառով սուսները սախաված են լինում թողնել գրաված նոր դիրքերը: Այս հարկադրական նահանջի ժամանակ թյուրքերը փորձում են օգտվել դրանից և հարձակման անցնել, սակայն նրանց չի հաջողվում շուրջ վնաս պատճառել ուստներին:

Ռուսական նահանջող զինվորներին հետապնդող թյուրքերը, հանդիպելով ալեքսանդրապոլյան անկանոն հեծյալ գեղին, որի հրամանատարն էր մայոր Ենիկոլոպովը, հետ են շարժվում՝ մեծ կորուստներով: Այս օպերացիայի ընթացքում աչքի է ընկնում գեներալ-մայոր Լորիս Մելիքովը<sup>2</sup>, որը իր հեծելազորով թևից հարձակվելով թյուրքական հրաձիգների վրա, մեծ կորուստ է պատճառում նրանց... թյուրքերը չդիմանալով հեծելազորի շեշտակի հարվածին, փախչում են<sup>3</sup>:

Սեպտեմբերի 20—23-ի մարտերը չնայած ուստներին վճռական արդյունք չեն տալիս, սակայն նշանակալից ազդեցություն են

ունենում թյուրքական բանակի բարոյական վիճակի վրա: Զուրկ լինելով առք հագուստներից, թյուրքական զինվորներն արդեն նեղվում են գիշերային ցրտերից: Թյուրքական զորակազմում պակասում էր պարեն և այլն... Նման պայմաններում թյուրքերը իրենց գրաված դիրքերում երկար մնալ չէին կարող, մանավանդ վրա հասնող ձմռան ցրտերի հետևանքով: Ռուսական հրամանատարությունը մնում էր աշալուրջ հսկել և հետևել թյուրքերի յուրաքանչյուր շարժմանը և թույլ չտալ Մուխթար-փաշային անխափան նահանջելու: Չնայած այդ ուղղությամբ ձեռք առնված միջոցներին, այնուամենայնիվ թյուրքերին հաջողվում է սեպտեմբերի 26-ին գիշերը աննկատ նահանջել Ղզըլ-Քափայից: Ռուսական հրամանատարությունը, պարզելով, որ թյուրքերը շատ հեռու չեն նահանջել, որոշում է գրոհել նրանց դիրքերը:

Այս պատերազմի պատժության մեջ նշանավոր Ալաշայի ճակատամարտի պլանը մշակվում է գեներալ Օբրուչևի կողմից, որ նախատեսում էր թևանցել հակառակորդի դիրքերը և ապա երկու կողմից գրոհել Ալաշայի բարձունքները: Թշնամու թիկունքը անցնելու համարձակ ձեռնարկությունը հանձնարարվում է գեներալ Լազարևին: Գլխավոր շտաբի պլանի համաձայն, Լազարևը ամսի 28-ին պետք է լիներ Կամբինսկում, 29-ին Գրգորում և 30-ին գրավեր հակառակորդի դիրքերի թիկունքում գտնվող Բազարչյուրը: Սակայն ճանապարհների դժվարության պատճառով թևանցող զորամասը երեք օրվա փոխարեն տեղ է հասնում հինգ օրվա ընթացքում միայն: Լազարևը պարզ գիտակցելով իր դրության լրջությունը, ինչպես դա նշում է Շենորը<sup>4</sup>, ամբողջ ժամանակ գտնվում էր հուզված, ներվային վիճակում: Հոկտեմբերի 1-ին առավոտյան Գիգոր է ուղարկվում Շելկովնիկովը, Լազարևի սպանության կամ վիրավորվելու դեպքում հրամանատարությունը իր վրա վերցնելու նկատառումով: Ծիշտ նույն օրը տեղ են հասնում նաև Երևանյան ջոկատից ուղարկված լրացուցիչ ուժերը՝ գեներալ Յիտովիչի գլխավորությամբ, որով թևանցող զորասյունը ամբողջապես ձևավորվում է: Գեներալ Լազարևը վարպետորեն թաքցնում է իր իսկական դիտավորությունը, ցույց տալով, որ ինքը շարժվում է ոչ թե Բազարչյուր, այլ թյուրքերի աջ թևի թիկունքը, այսինքն Ալաշայի

<sup>1</sup> ЦГВИА, ф. „Б“, л. 213/34, л. л. 361—363.

<sup>2</sup> Զպետք է չփոթել Գրաֆ-Լորիս Մելիքովի հետ:

<sup>3</sup> ЦГВИА, ф. „Б“, л. 213/34, л. 363.

<sup>4</sup> „Военный сборник“ за 1880 г. № 7.

հարավային ստորոտները: Այդ տեսակետից, ինչպես ինքը Լազարեն է հիշում, — մեծ ծառայություն է մատուցում Գիգորի մուլան, որին Լազարեն պարզապես խաբում է, ցույց տալով նրան, որ ինքը ուղիղ Ալաջայի բարձունքներն է շարժվում, գիտենալով, որ մուլան հայտնելու է Մուխթար-փաշային: Այդ մասերը ամբողջապես հաջողվում է: Թյուրքերը, մուլայից լսելով Լազարենի «գիտավորությունների» մասին, իրենց ամբողջ ուժերը կենտրոնացնում են Ալաջայի հարավային լանջերի ուղղությամբ, ուշադրություն չդարձնելով Օրլոկի և Վեզեն-քեյի բարձունքների վրա: Հետագայում միայն գլխի են բնկնում, սակայն արդեն ուշացած:

Այսպիսով, շրջանցող զորասյունը գեներալ Լազարենի հրամանատարությամբ հաջողությամբ կատարում է իրեն առաջադրված մարտական խնդիրը:

Գեպի Կարս և Վեզեն-քեյ շարտելով թյուրքական զորքերին, հոկտեմբերի 2-ին նա գրավում է Օրլոկի բարձունքները: Հոկտեմբերի 3-ին սկսվում է վճռական գրոհը: Հրետանային ուժեղ կրակի պաշտպանության տակ ուսաները գրավում են Ավլիարը և երկու մասի բաժանում թշնամու զորքերը: Նրանց մի մասը, որը փորձում է գեպի Կարս նահանջել, ջարդվում և ցրվել է տրվում Լազարենի և մասամբ Գեյմանի զորաբաժինների կողմից, իսկ մնացածը՝ շրջապատվելով Զիվա-թափայում, երեկոյան ամբողջապես գերի է հանձնվում:

Ռուսները գերի են վերցնում 7 փաշա, 252 սպա և 9000 շարքային զինվոր, գրավում են 30 թնդանոթ, 9000 հրացան և մեծ քանակությամբ ռազմական հանդերձանք, ռազմամթերք: Գերությունից խուսափում է միայն Մուսա-Կոնդուխովը, որին հաջողվում է օգտվել գիշերային խավարից և փախչել անհայտ ուղղությամբ: Ռուսները կորցնում են սպանված, վիրավոր և անհայտ կորած ընդամենը 1327 մարդ: Այսպիսով, հոկտեմբերի 3-ի նշանավոր ճակատամարտը ավարտվում է ուսաների փայլուն հաղթանակով: Այդ հաջողությունը ձեռք է բերվում գեներալ Լազարենի փայլուն շրջանցման մասնորով, որով նրա անունը հայանի է դառնում ոչ միայն ողջ Ռուսաստանում, այլև ամբողջ աշխարհում, որոնք ուշի-ուշով հետևում էին Փոքր-Ասիայում կատարվող անցքերին: Անդամ Վիեննայի թյուրքասեր լրագրերը շեն թաքցնում իրենց հիացմունքը Լազարենի այդ փայլուն օպերացիայի առթիվ: Ալաջա-

յի պատմական հաղթանակին մեծապես նպաստում են բշնամուրի կուլմեմբում գործող հայերը, որոնք, ժամանակին և ճիշտ տեղեկություններ հաղորդելով ռուսական հրամանատարությանը, օգնում են նրան՝ ընդունելու ճիշտ որոշումներ: Այդ տեսակետից առանձնապես աչքի բնկնող գործ է կատարում Խաչատուր Դոխմազյանցը, որը պարզեցնելով է ռուսական հրամանատարության կողմից:

Հոկտեմբերի 3-ի նշանավոր ճակատամարտի ժամանակ ուսաներալների և սպաների շարքում իրենց մարտական խնդիրը գերազանց են կատարում հայ զենեքալները և սպաները: Ճակատամարտի նախապատրաստման և նրա ղեկավարման գործում աչքի են բնկնում գեներալներ՝ Լազարեն, Շելկովնիկովը, սպաներից՝ մայոր Նովրուզովը, կապիտան Կուսովը, Մանսուրյանը, Մուղղուսյանը, Ստեփանյանը, պորուչիկ Աթարեգյանը, ուրյադնիկներ Կարապետյանը, Սոլոմոն Ստեփանյանը և գնդապետ Քիշմիշյանը, որոնք պարզևատրվում են գլխավոր հրամանատարության կողմից:

Ալաջայի ճակատամարտում ուսաների տարած փայլուն հաղթանակի լուրը արագորեն տարածվում է ամբողջ Անդրկովկասում և լայն արձագանք է գտնում Թիֆլիսի հայ պարբերական մամուլում:

«Մշակի» № 75-ում Գր. Արծրունին «Վերջին հաղթության նշանակությունը» վերնագրով առաջնորդողում, խոսելով այդ հաղթանակի նշանակության մասին, գրում է. «Այն հաղթությունը, որ մեր զորքերը արել են Հայաստանում, ունի ոչ քե միայն մեծ նշանակություն պատերազմի ընդհանուր ընթացքի համար, բայց և մեր երկրի, Անդրկովկասի ներքին հանգստության համար»:

Խոսելով այն մասին, թե ինչպես թյուրքերի ժամանակավոր հաջողությունները ոտքի էին հանել երկրի ողջ մահմեդական ազգաբնակչությանը, որը նախապատրաստում էր մի շտեմնված արյունալի դրամա Հայաստանում և Անդրկովկասում, — Գր. Արծրունին շարունակում է. «Հասկանալի է թե ինչ կլինի Ալաջա-դաղի բարձրությունների վրա կատարված հաղթության հետևանքը: Այդ հաղթությունը պաշտպանելով մեր սահմանները թուրքաց զորքի

1 Գր. Արծրունի, «Մշակ», 1877, № 75, «Վերջին հաղթության նշանակությունը»:



հարձակողական շարժումից, միջոց չի տա մեր տեղական թյուրք ազգաբնակիչները ապստամբվելու։ Այդ հաղթուրչամբ պահպանվեցավ Կովկասի խաղաղությունը, և մեր երկրի քրիստոնյա ազգաբնակիչությունը ազատվեցավ նրան սպառնացող... վտանգից»<sup>1</sup> (ընդգծումը մերն է։—Ա. Ն.)։

Ալաշայի ճակատամարտից հետո, Վեդեն-քեյից փախած թյուրքերը մեծ տազնապ են առաջացնում Կարսում։ Ամեն ոք մտածում է իր փրկության մասին։ Մուխթար-փաշան, արևածագին հասնելով Կարս, նույն օրը զորքերի խզճուկ մնացորդներով որոշում է նահանջել Սողանլուղ, ծայրահեղ զեպքում իր ձեռքին պահպանելու համար երգրում տանող ճանապարհները։ Ընչպես հաղորդում է Կարսի եպիսկոպոսը հոկտեմբերի 7-ին ուստական հրամանատարությունը գրած նամակում, թյուրքական բանակում կազմալուծումն և բարոյալքումը այն աստիճանի է հասնում, որ նրանք հոկտեմբերի 6-ին անգամ ի վիճակի չեն լինում ուստներին որևէ լուրջ դիմադրություն ցույց տալու։ Անատոլիական բանակի հրամանատարությունը և թյուրքական սուլթանը այդ պատմական անցքերից հետո, կորցնելով հետագա որևէ հաջողության հույսը, լուրջ կերպով մտածում են հաշտության մասին, դրա մեջ տեսնելով իրենց փրկության միակ ուղին։ Ահա թե ինչ է սոված թյուրքական փաստաթղթերից մեկում. «Սուլթանի հրամանով դազի Մուխթար-փաշային առաջարկվում է միջոցներ ձեռք առնել հայանի զեպքերից հետո (խոսքը Ալաշայի ճակատամարտի մասին է։—Ա. Ն.) գործերը արագորեն կարգավորելու համար։ Նրա պատասխանը ուղարկված է նորին մեծությունը. նրանից պարզ երեվում է, որ հաշտությունը անհրաժեշտ է և առաջիկայում ոչ մի լավ բան չի սպասվում։ Հաշտությունը կարող է փրկել մեզ ինչպես այդ դրությունից, այնպես էլ գալիք կորուստներից»<sup>2</sup>։

Չնայած հակառակորդի բանակում տիրող այդ անկուսմային տրամադրություններին, այնուամենայնիվ ուստները ոչ հոկտեմբերի 4-ին և ոչ էլ հետո Կարսը գրոհելու հնարավորություն չունեին։ Անհրաժեշտ էր նախ հետապնդել Մուխթար-փաշային, թույլ շտաբով նրան միանալու Եղմայիլ-փաշային, որը, Ալաշայի զեպքերի

լուրը լսելով, նահանջում էր և որին կրնակալու հետապնդում էր Տեր-Ղուկասովը։ Այդ նկատառումներով գլխավոր ուժերից երկու ջոկատ է կազմվում, մեկը Սողանլուղի՝ զենքերով Գեյմանի զեպք-վարությունը, մյուսը Կարսի՝ զենքերով Լազարի հրամանատարությունը։ Չնայած ուստների գործադրած ջանքերին, թյուրքական երկու գործարածիներին հաջողվում է միանալ Քյոփրի-քեյում, որոնք նահանջում են Գեկ-Քոյնի ամրացված դիրքերը։

\* \* \*

Դիրքեր գրավելով Գեկ-Քոյնում, Մուխթար-փաշան իր տրամադրության տակ եղած ուժերով անհնարին է համարում շարունակել պայքարը ուստների դեմ։ «Այդ ուժերով,—գրում է Մուխթար-փաշան,—ոչ միայն չի կարելի կասեցնել ուստների հետագա հարձակումը, այլ չի կարելի անգամ պահել երգրումը, որի կորուստը կարող է սպառնալ Փոքր-Ասիայում օսմանյան տիրապետությանը»<sup>1</sup>։

Թյուրքական կառավարությունը լուրջ միջոցներ է դիմում Մուխթար-փաշայի բանակը ուժեղացնելու համար։ Սակայն, քանի որ խոստացած ուժերը 6 շաբաթվա ընթացքում չէին կարող տեղ հասնել, ուստի Մուխթար-փաշայից պահանջվում է պաշտպանական դիրք գրավել Գեկ-Քոյնում։ Գեներալ Գեյմանը, որն իր և Տեր-Ղուկասովի ջոկատների միացումից հետո միացյալ ուժերի գլուխն էր անցել, որոշում է գրոհել Գեկ-Քոյնի ամրացված դիրքերը, նկատի ունենալով այդտեղ ձմեռելու հետ կապված դժվարությունները և նրա գրավման անհրաժեշտությունը էրգրումը գրավելու համար։ Հոկտեմբերի 23-ին ամբողջ օրը տեղ թե՛ մարտերից հետո ուստները գրավում են Գեկ-Քոյնը, մեծ կորուստ պատճառելով թշնամուն։ Այդ մասին զենքերով Պավլովը կաշարին ուղարկած հեռագրում (1877 թ. հոկտ. 2 № 702) գրում է. «Հոկտեմբերի 23-ին զենքերով Գեյմանի և Տեր-Ղուկասովի միացյալ ջոկատները 9 ժամ տեղ ճակատամարտերից հետո ջախջախել են Մուխթար-փաշայի զորքերին Գեկ-Քոյնի դիրքերում։ Թյուրքերը փախուստի են դիմել—ձամբարում թողնելով ամեն ինչ»<sup>2</sup>։

<sup>1</sup> Сборник турецких документов о войне 1877—1878 гг., СПб, 1879 г. стр. 79.

<sup>1</sup> Кашмишев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб, 1884, стр. 408.

<sup>2</sup> ЦГВИА, ф. ВУА, д. 7169, л. 512.

Գեւ-Քոյնում ձեռք բերած հաջողությունները, սակայն, չօգտագործվեցին թշնամուն հետապնդելու, նրան վերջնականապես ջախջախելու և էրզրումը գրավելու համար, չնայած կային բոլոր հնարավոր պայմանները: Տեղական հայերի հաղադամ տեղեկությունների համաձայն, Գեւ-Քոյնի գրավումից անմիջապես հետո, էրզրումում մեջլիս է գումարվում, որտեղ որոշում է ընդունվում ֆաղաֆը առանց մարտերի ուսաներին հանձնել: Քաղաքը ուսաների կողմից գրավելու համոզումը այնքան հաստատ է լինում, որ էրզրումի պարսկական զեսպանը հոկտեմբերի 23-ին հեռագրում է իր կառավարությանը էրզրումի գրավման մասին: Մուխթար-փաշան նույնպես նոյեմբերի 24-ին հեռագրում է Կ. Պոլիս, որ իր տրամադրության տակ եղած ուժերով ոչ մի հնարավորություն չունի էրզրումը պաշտպանելու և տրամադիր է էրզնզա նահանջել: Չնայած այդ բոլորին, գեներալ-Գեյմանը անհասկանալի պատճառներով էրզրումը գրավելու առիթը ձեռքից բաց է թողնում, դրանով հնարավորություն և ժամանակ է տալիս հակառակորդին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու էրզրումի պաշտպանության համար: Դա էր պատճառը, որ երբ հոկտեմբերի 28—29-ին ուսաները գրոհեցին էրզրումը, նրանց չհաջողվեց գրավել քաղաքը և ստիպված եղան անցնելու երկարատև պաշարման:

\* \* \*

Գեւ-Քոյնը վերցնելուց հետո, Կարսը մեկուսացվեց Քյուրքիայի մյուս մասերից: Կարսի ջոկատը, որի հրամանատարն էր գեներալ Լազարևը, հոկտեմբերի 10-ին անցավ ամրոցի օղակմանը: Զորքերի մեծ մասը դիրքեր գրավեց ամրոցի հյուսիս-արևելյան մասում: Հրաման տրվեց—ոչ ոքի թույլ չտալ քաղաք մտնել կամ դուրս գալ այնտեղից: Կարսից ստացվող տեղեկությունները վիճարկում էին բնակչության մեջ գոյություն ունեցող դժգոհությունների մասին: Ընկած էր նաև կայազորի մարտական ոգին: Ռուսական հրամանատարությունը բանակցությունների մեջ է մտնում Կարսի պարետի հետ բերդը առանց մարտերի հանձնելու մասին: Նամակը Հուսեյն-փաշային հասցնելու գործը հանձնարարվում է ենթազընդապետ Քարխանովին, որին ուղեկցում է Ալեքսանդրա-

<sup>1</sup> Сборник турецких документов о войне 1877—1878 гг., СПб, 1879 г. стр. 84.

պուլցի Ավետիս Չիրոզյանը՝ լինելով միաժամանակ բարգմանիչ: Պատասխան շտանալով, գլխավոր հրամանատարը հրամայում է ուժեղացնել ամրակոծումը, որը ավերիչ հետևանքներ է ունենում: Քաղաքում խուճապը գնալով ուժեղանում է. գասալբոյան զեպերը մեծ շափերի են հասնում: Հուսեյն-փաշան այդ կանխելու համար ուժեղացնում է տեղորը և կեղծ լուրեր տարածում այն մասին, որ իբր ուսաները իրենց մոտ փախած գասալիքներին Սիրիք են ուղարկում: Այդ լսելով՝ կորպուսի հրամանատարը կարգադրում է բոլոր թյուրք գասալիքներին հարցաքննությունից հետո ազատ արձակել, ապահովելով նրանց ճանապարհի պարենով, դրամով և համապատասխան անցագրերով: Այդ քաղաքականությունը տալիս է իր արդյունքը: Շուտով գասալիքների նոր խմբեր են գալիս ուսանական զորակայանը: Մոտենում էին ձմռան ցրտերը, որի հետևանքով կարող էր ծանրանալ պաշարող ռուս բանակի վիճակը: Այդ բոլորը անհրաժեշտ են դարձնում արագացնել Կարսի գրավումը: Այդ համարձակ և դժվարին խնդիրը պահանջում էր բազմակողմանի ուսումնասիրություն: Չէր կարելի անտեսել 1855 թթ. պատերազմի փորձը, գեներալ Մուրավյովի անհաջող գրոհը, երբ ուսաները 7000 մարդ կորուստ ունեցան: Այն ժամանակ Կարսը շունչներ ներկա սպառազինությունը: 1877—1878 թթ. պատերազմի շրջանում Կարսը մի ահավոր ամրություն էր, սպառազինված ժամանակակից տեխնիկայով: Կայազորը նույնպես իր մարտական հատկություններով ավելի բարձր էր կանգնած 1855 թ. համեմատությամբ:

Հոկտեմբերի 28-ին Լազարևը կանչվում է Վերանկալ, ուր գտնվում էր գլխավոր շտաբը, գրոհի հետ կապված հարցերը քննարկելու համար: Որոշվում է ամրոցը գրավել գիշերային գրոհով:

Գրոհի օրը նշանակվում է 5—6-ի գիշերը: «Ամսի 5-ին, երեկոյան ժամը 8-ին,—գրում է Քիշմիրչևը,—զորքերը հավաքվում են նշանակված հավաքակայանները: Կարսի մերձակա գյուղերից զինվորական շինելներ հագած հայ ուղեկցողները բաժանվում են գրոհող զորասյունների վրա... Շարժման ընթացքում զորքերին արգելված էր ծխելը, բարձր խոսելը և ընդհանրապես աղմուկը, արգելված էր նաև իրենց հետ շներ վերցնելը»<sup>1</sup>:

<sup>1</sup> Кушмишев С., Война в Турецкой Армении, 1877—1878 гг., СПб, 1884, стр. 458—459.

Սկսվում է գրոհը... Հրեաանու կործանիչ կրակի պաշտպանություն տակ, մարտի են նետվում ուս քաջարի զինվորները: Կարսի ահավոր ամբուստները շեն գիմանում ուսական զինվորների շնչառակի գրոհին. նրանք բնկնում են մեկը մյուսի հետևից, իրենց ավերակների տակ թաղելով թշնամու հաղարավոր զինվորների:

Հնկնում է Կարսը, Անատոլիայի մուտքը փակող այդ անառիկ ամրոցը: Փոքր Ասիայի ուղղաթիվում գործող թյուրքական բանակը զրկվում է իր ամենահուսալի հենարանից: Կարսի գրավումը վճարական նշանակություն է ունենում Կովկասյան ուղղաթիվառի ուղղաթիվի գործողությունների հետագա ընթացքի վրա: «Գանվելով Անդրկովկասից երկրի խորքերը տանող բոլոր գլխավոր ճանապարհների հանգույցում, Կարսը Ասիական թյուրքիայի դեմ ուսների մղած բոլոր պատերազմների ժամանակ ունեցել է վրձնական նշանակություն: Նա փակել է Ալեքսանդրապոլի կողմից Անատոլիայի մուտքը: Կարսը միաժամանակ թյուրքական բանակի համար անաստարան է ծառայել, երբ նա այս կամ այն հանգամանքների բերումով շի ցանկացել քայ դաշտ դուրս գալ»<sup>1</sup>:

Կարսի գրավման ժամանակ ուսները վերցնում են 9 հազար զերի, որոնց թվում 5 փաշա և 800 սպա: Գրավում են մեծ քանակությամբ զենք և զինամթերք:

Կարսի գրավման օպերացիային ակտիվ մասնակցել են հայ զենեակներ Լազարև, որը գրոհող ջոկատի հրամանատարն էր, Ալիսազովը, կնյազ Մելիքովը, Ս. Քիշմիշը, գնդապետ Նոյգաբովը, ենթազգապետ Քարխանովը, կապիտան Ջավրիևը, մայոր Սաղինովը, պորուչիկ Լազարև և հարյուրավոր հայ միլիցիոներներ<sup>2</sup>:

Կարսի զիշերային գրոհի ժամանակ զերազանց ծառայություն են մատուցում տեղական հայերը, որոնք՝ զինվորական շինելներ հագած՝ մասնակցում են գրոհող զորասյուններին որպես ուղեկցողներ և թարգմանիչներ:

Նոյեմբերի 7-ին հանդիսավոր կերպով Կարս է ժամանում Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատարությունը, որին գիմա-

վորում են մեջլիս և պատվավոր քաղաքացիներից կազմված զնպուսացիան: Հենց այստեղ էլ նրան «...զիմավորում է Կարսի հայերի առաջնորդ Գրիգոր Ալվազյանը, որը կամպանիայի սկզբից անխոնջ կերպով ցույց է տվել համակրանք, նվիրվածություն մեր շահերի համար, միատեսակ բաժանելով մեզ հետ կատարված զեպքի ուրախությունը»<sup>3</sup>:

Հայերը ուսական բանակի հաղթանակի հետ էին կապում իրենց ազատագրման հույսերը թյուրքիայի բռնակալ լծից և այդ հանդիսավոր ժամին, երբ ուսական բանակը տոնում էր իր հաղթանակը, հայերը չէին կարող սրտանց չբաժանել այդ ուրախությունը:

Կարսի գրավման լուրը արագորեն տարածվում է ողջ երկրում: Անդրկովկասի կենտրոնում՝ Քիֆլիսում ուսական բանակի այդ փառավոր հաղթանակը նշվում է թեղանոթների հարյուր և մեկ համազարկով և հրավառություններ: Այդ մասին «Մշակի» 1877 թ. № 83-ում կարդում ենք. «Կիրակի նոյեմբերի 6-ին Քիֆլիսը իմացավ, որ Կարս բերդը մեր զորքերը շտուրմով վեր առան: Թեղանոթների հարյուր և մեկ անգամ արծակելը և երեկոյան քաղաքի լուսավորությունը արտահայտեցին այն ուրախությունը, որ Քիֆլիսեցիներից լուրաբանչուրը զրում էր Կարսի գրավման լուրն իմանալով»<sup>1</sup>:

Կարսի գրավումից և Մուխթար-փաշայի զորքերի ջախջախումից հետո, «Մշակը» թյուրքիան և պատերազմը՝ վերնագրով հոգվածում, վերլուծելով ուսների ձեռք բերած հաջողությունները, գրում էր. «Եպետ և թյուրքերը անսպառ ցույց տվին պատերազմական հանճար և ուժ, որով իրենց վրա դարձրին Եվրոպայի ուշադրությունը և մինչև անգամ գրավեցին հակառակորդի հարգանքը, բայց բնականաբար ինչ որ լինելու էր, սկսել էր իրագործվել: Թյուրքերը իրենց ուժերը վերին աստիճանի լարելով, թուլանում են և այն Մուխթար-փաշան որ պարծենում էր երկու ամիս առաջ Քիֆլիս մտնելու, ուսաց հաղթող զորքերի առջև փախչում է հետ: Հայաստանում կորցրին թյուրքերը իրանց բոլոր գլխավոր տեղերը և արդեն Արդրումի դրան առջև կանգնած է ուսաց զորքը»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Մշակ», 1877 թ. № 83.

<sup>2</sup> Նույն տեղում, № 85, «թյուրքիան և պատերազմը»:

<sup>3</sup> Кюмишев С., Война в Турецкой Армении 1877 — 1878 гг., СПб., 1884, стр. 180.

<sup>1</sup> Кюмишев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884, стр. 479.

<sup>2</sup> ЦГВИА, ф. ВУА, д. 46760, л. 4.

\* \* \*

Ինչպես հիշեցինք վերևում, Դեվե-Քոյնի գրավումից հետո չի հաջողվում գրավել Էրզրումը: Ռուսները, դաժան ձմռան պայմաններում պաշարում են քաղաքը: Գրուսյունն ավելի ծանրանում է բժավոր տիֆի հետևանքով, որը մեծ կորուստներ է պատճառում ռուսական զորքերին, տանելով շատ զոհեր, այդ թվում գեներալ Շելիովնիկովին, գեներալ-մայոր Լորիս Մելիքովին, Սուլովյովին և ուրիշներին:

1878 թ. հունվարի 21-ի զինագաղարի պայմանի համաձայն ռուսական բանակը ժամանակավորապես գրավում է Էրզրումը: Ռուսական զորքերի մուտքը Էրզրում մեծ ցնծություն է առաջացնում հայերի մեջ, որոնք վաղուց սպասում էին այդ բերկրալից օրվան: Հայերը շտեմնված հանդիսավորությամբ են զիմավորում ռուսական բանակին: Նրանց ուրախությունը չափ-սահման չկար:

1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմին հայերի ունեցած մասնակցության վերաբերյալ մեր բերած փաստերը բոլորովին էլ լիակատար չպետք է համարել, և դրանով չի սպառվում խնդրի փաստացի ամբողջական լուսարանումը: Սակայն այն, ինչ որ մեզ հաջողվել է անել մեր այս ուսումնասիրության ընթացքում, բավական է ասելու, որ 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի ընթացքում հայերը գործուն մասնակցություն և մեծ օժանդակություն են ցույց տվել ռուսական բանակին, ապահովելով նրա հաղթանակը ռազմաճակատի տարրեր հատվածներում՝ ամենադժվարին օպերացիաների ժամանակ:

Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակին հայերի ցույց տված օգնության մասին գրել են պատերազմի մասնակից մի շարք գեներալներ թե՛ իրենց պաշտոնական զեկուցագրերում և թե՛ պատերազմի մասին գրած իրենց հիշողություններում: Գեներալ Դուխովսկին, Կարսի գրավումից երկու շաբաթ հետո, գլխավոր հրամանատարության ուղարկած իր զեկուցագրում հետևյալն է գրում հայերի՝ ռուսական բանակին ցույց տված օգնության և պատերազմի հետ կապած նրանց հույսերի մասին: «Հայերը ներկա պատերազմը դիտում են ոչ այլ կերպ, քան իրենց գրությունը արժատապես բարելավելու նպատակով մղվող պատերազմ: Ճերանք ոչ միայն գործով ապացուցում են իրենց ամբողջական նվիրվածու-

թյունը ռուսական կայսրությանը, այլև հանդես են բերում պատրաստակամություն իրենց կյանքը զոհելու նրա (Ռուսաստանի—Ա. Ն.) բանակի կարիքների և նրա զենքի հաջողության համար»:

Այնուհետև Դուխովսկին գրում է, որ հայերը միաժամանակ սարսափով են նայում իրենց ապագային այն դեպքում, եթե գալիք հաշտության պայմանագրում նկատի չառնվի նրանց շահերը: Մահճեղականների վրեժխնդրությունից ազատվելու համար ճերանք մնում է կամ զաղթել Ռուսաստանի տերիտորիան (այդ հասկանալի է, կարող է վերաբերվել շատ փոքր մասին միայն) կամ ընդունել մահճեղականությունը: Ըստ որում, նոր պատերազմի դեպքում, մենք դժվար թե հանդիպենք ամենանվազագույն շահին այն համակրանքին և համագործակցությանը, որ նրանք մեզ ցույց են տվել ներկա պատերազմում»:

1877-1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմին հայերի ունեցած մասնակցության մասին կարելի է շատ ուրիշ վկայություններ բերել, սակայն մեր կարծիքով սույն աշխատության մեջ բերված փաստերը և հավելվածում դրված զոկումենտները նույնպես բավական են համոզվելու համար, որ իրոք հայերը այդ պատերազմի ընթացքում ռուսական բանակին ցույց են տվել մեծ օգնություն և զգալի շափով գյուրացրել Կովկասյան ռազմաճակատում գործող բանակի ձեռք բերած հաղթանակները:

Բավական է հիշել, որ այդ պատերազմի Կովկասյան ռազմաճակատում մասնակցել են չոթ հայ գեներալներ և ոչ լրիվ տվյալներով 500-ից ավելի սպաներ, որոնցից սպանվել և վիրավորվել են 70 մարդ<sup>3</sup>: Կովկասյան ռազմաճակատում մասնակցել են մի քանի հազար հայ կամավորներ (միլիցիոններ), որոնցից շատերը խիզախությամբ մեծ հռչակ են ձեռք բերել պատերազմի ընթացքում:

Հայերը նշանակալից օգնություն են ցույց տվել ռուսական բանակի հրամանատարությանը, բանակի համար անհրաժեշտ պարենը հայթայթելու, նոր գրաված տերիտորիայում քաղաքացիական վարչություն և կարգ ու կանոն հաստատելու գործում:

<sup>1</sup> ЦГВИА, ф. ВУА, д. 48816, л. л. 21—25.

<sup>2</sup> Նույն տեղում, л. 26.

<sup>3</sup> Նույն տեղում, д. 213/34 л. л. 109—114:

Այս պատերազմի ընթացքում հայերը մասնակցություն են ունեցել նաև Բալկանյան ռազմաճակատում, որը մեր ուսումնասիրության նյութից դուրս է, սակայն Մոսկովայի արխիվում գտած մի փաստաթղթից պարզվեց. որ ոչ-լրիվ տվյալներով Բալկանյան ռազմաճակատում սպանվել և վիրավորվել են 20 հայ սպաներ:

Այժմ տեսնենք, թե պատերազմից հետո ինչ վիճակ է ստեղծվում հայերի համար և այդ պատերազմի հետ կապած նրանց հույսերը որքանով են արդարանում:

#### ԳՂՈՒԽ IV

### ՊՍԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀՅՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՊՍԵՐԱԶՄԻՅ ՀԵՏՈ

Բալկանյան ռազմաճակատում Շեյնովի և Ֆիլիպովի մոտ ռուսական զորքերի տարած հաղթանակով վերջնականապես լուծվում է պատերազմի ելքը նաև այդ ռազմաճակատում: Այդ հաղթանակներով վերջնականապես կտրվում է թյուրքերի դիմադրությունը, որոնք այլևս անհնարին են համարում հետագա ռազմական գործողությունների շարունակումը: Ռուսները, կրեկակոխ հետապնդելով թյուրքական բարոյալքված բանակի մնացորդներին, արագորեն առաջ են շարժվում: Թյուրքերն իրենց ամբողջ դույքը թողած՝ ավելի քան բուլղարների վրեժխնդրությունից փրկվելու համար, փախչում էին գեպի Կ. Պոլիս, մեծ կորուստներ կրելով ճանապարհին: Թյուրքական բանակի պարտության և ռուսների հաղթանակի լուրը մեծ խուճապ է առաջացնում Թյուրքիայի մայրաքաղաքում, որը անմիջական վտանգի տակ էր դրվում: Հայերը, որոնք պատերազմի սկզբից ոչ մի ջանք չէին խնայել ռուսական բանակի հաղթանակն ապահովելու գործում և մեծ հույսեր էին դրել այդ հաղթանակի վրա, այժմ ավելի քան մեծ հույսերով են տոգորվում: Հայերը հավատացած էին, որ առաջիկա հաշտությունը ազատություն է բերելու Թյուրքիայի լծի տակ առապող բրիտանյաններին: «Այդպիսի պարագաներում շատ բնական էր, որ Պոլսի հայերն իրենց աչքերը հառեին հաղթական»

Ռուսաստանին, որի բարեհաջողությունից էր կախված Թյուրքիայի ապագան»:

Ռուսական բանակի տարած հաղթանակի հետևանքով զգալի բեկում է կատարվում նաև արևմտահայ այն հատվածի շրջանում, որը մինչ այդ հակառուսական օրամագրություններ ուներ: Այդ հոսանքին սյուտկանոզ բազմաթիվ դործիչներ վերջնականապես համոզված են, որ եթե հայերը դրսի պետություններից որևէ ակնկալություններ ունեն, ապա դա միայն Ռուսաստանից պետք է սպասել: Ավելի մոլի թրքասերները ստիպված էին տեղի տալ ժողովրդական մասսաների ճնշմանը:

1878 թ. սկզբներին Թյուրքիան, զգալով իր օրհասական վիճակը, մի ձառապիկ զիջմանագիտական շրջաբերականով աշխատում է համոզել եվրոպական պետություններին, որ նրանք միջամտեն հաշտության բանակցություններ սկսելու համար: Միայն Անգլիան է հանձն առնում այդ հարցով Ռուսաստանին զիջելու, սակայն Ռուսաստանը, օգտվելով իր գերակշռող դիրքից և զգալով Անգլիայի միջամտության բուն նպատակը, ձգձգում է այս առաջարկությունը՝ մինչև եվրոպական Թյուրքիայի մեծագույն մասը գրավում է և ապա հայտնում է, թե նա կընդունի այնպիսի դինադար, որ իր մեջ պարունակի նաև հաշտության գլխավոր պայմաններ: Թյուրքական կառավարությունը, որ մինչ այդ մեծ հույս ուներ Անգլիայի վրա, այժմ հուսախաբված, ստիպված էր զիջել և բանակցություններ սկսել զինադարի և ապա հաշտության պայմանների մասին: Կ. Պոլսի հայերը լարված ուշադրությամբ հետևում էին զեպերին, որոնք իրար հաջորդում էին տենդագին արագությամբ: Վերջնականապես ջարդված Թյուրքիան ստիպված էր ընդունել այն պայմանները, որ թելադրում էր նրան հաղթող Ռուսաստանը: Այդ պայմանները բերում էին օսմանյան բռնապետության բաժանմանը, որը օրհկախիորեն պետք է հասցնեի նրա բռնակալ լծի տակ հեծձող բրիտանյանների ազատությանը: Ահա այս շրջանում էր, որ արևմտահայերը որոշեցին զիջել ռուսական կառավարությանը, խնդրելով նրան հայկական հարցը նույնպես նկատի առնել զալիք հաշտության պայմանագրում: Այս նպատակով պատ-

<sup>1</sup> Սարգսյան, Հայկական ինդիքս և ազգային օրհամարությունը Թյուրքիայում, 1872, Թիֆլիս, էջ 258:

զամավորներ ուղարկվեցին Ադրիանապոլիս, նաև հատուկ աղերսագրեր պատրաստվեցին Ալեքսանդր II-ին և Գորշակովին ուղարկելու համար: Այս աղերսագրում ասված էր, որ «Հայոց ազգի ուխտն ու փափագները միանում են Ռուսաստանի հետ, որ իրենք ցանկանում են ազգային կյանքով ապրել, պաշտպանել իրենց հայրենիքն ու տանքները, և այդ բոլորի իրականացման համար հույսը կապում են Ռուսաստանի հետ»<sup>1</sup>: 1879 թ. հունվարի 25-ին Ադրիանապոլիսի հայերի ներկայացուցիչները ռուսական հրամանատարությանն են հանձնում թագավորին հասցեագրված իրենց ուղերձը: Տառլեբենին գիմելով՝ Ադրիանապոլիսի հայոց առաջնորդ Գևորգ եպիսկոպոսն ասում է. «Ընդունեցեք այս աղբյուրը իբրև անկեղծ արտահայտություն այն սիրո զգացմունքի, որ ունեն մեր հայրենակիցները դեպի Ռուսաստանը»<sup>2</sup>: Ահա այս միջոցառումների անմիջական արդյունքն է հանդիսանում Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, որին ղեռ վիճակված էր շատ փորձությունների ենթարկվել: Բանակցությունները գնալով ձգձգվում էին և ռուսական հրամանատարությունը, օգտվելով զբաղմունքից, շարունակում էր զարգացնել ռազմական գործողությունները: Թշուրքիան, որը մինչ այդ շտապում էր իրեն համար աղետալի պատերազմը շուտափույթ ավարտել, այլևս այնքան էլ չէր շտապում: Թշուրքերը ծածուկ հույս ունեին հանգամանքներից օգտվել: Բանակցությունների ձգձգման գլխավոր պատճառը Անգլիայի միջամտությունն էր, որը խիստ դժգոհ էր բանակցությունների ընթացքից, մանավանդ, որ Ռուսաստանը մերժել էր նրա միջամտությունը և բանակցությունների մանրամասնությունները գաղտնի էին պահվում եվրոպայից: Անգլիան, վախենալով, որ ռուսները կալոյ են գրավել Կ. Պոլիսը, իր «հպատակներին պաշտպանելու» պատրվակով, հրամայում է միջերկրական նավատորմին Դարդանել մտնելու: Անգլիական այս սպանախիթներին ռուսները պատասխանում են, որ ճիշտ նույն նպատակով իրենք ևս պետք է գրավեն Կ. Պոլիսը: Շուրջիստականագիտացիան գնալով Անգլիայում հիստերիկ բնույթ է ստանում: Նման պարագաներում փետրվարի 8-ին անգլիական կառավարությունը նորից հրաման է տալիս աղմիրալ Խորնրիին Դարդանել

<sup>1</sup> Սաբուխան, Հայկական խնդիրն և աղաչյալն ռուսականազգրությունը Թշուրքիայում, էջ 274—275:

<sup>2</sup> «Մշակ», 1879 թվի փետրվարի 19, № 20:

շարժվելու. միաժամանակ աղմիրալին հայտնվում է, որ Կ. Պոլիս անգլիական ղեսպանը այդ մասին նախապես պետք է ստանա սուլթանի համաձայնությունը: Նավատորմը շարժվելով Դարդանել, խարիսխ է ձգում Չանակեյում, սպասելով սուլթանի պատասխանին: Որոշ ժամանակ այդտեղ մնալուց հետո և պատասխան չստանալով, նավատորմը նորից վերադառնում է Բեզեկյան նավահանգիստը: Շուտով պարզվում է, որ սուլթանը, վախենալով ռուս հրամանատարության սպանախիթից, չի համաձայնվում անգլիական նավատորմը Դարդանել թողնելու: Ի միջի այլոց, բրիտանական նավատորմի այդ տարօրինակ մանևրները ընդհանուր ծաղր են առաջացնում: Կ. Պոլիսում անգլիական ղեսպանատան շենքի դռանը մի առավոտ փակցրած են տեսնում մի թուղթ հետևյալ մակագրությամբ. «Բեզեկի և Կ. Պոլիսի միջև կորել է նավատորմ, գտնողները կվարձատրվեն»<sup>1</sup>:

Մինչ այդ ռուսական զորքերը մոտենում են մայրաքաղաքին և բանակցությունները շարունակվում են Սան-Ստեֆանոյում: Թշուրքերը, որ մինչ այդ որոշ հույսեր էին դրել Անգլիայի և Ռուսաստանի միջև սպասվող պատերազմի վրա, այժմ տեսնելով անգլիացիների տատանումները՝ հույսերը կտրելով, ստիպված էին ընդունել ռուսների առաջարկած պայմանները: 1878 թ. փետրվարի 19-ին ստորագրվում է Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը: Այդ հաշտությամբ ռուսները տիրապետող դիրք են ձեռք բերում ինչպես Բալկաններում, այնպես էլ Փոքր-Ասիայում: Ս. Ստեֆանոյի հաշտությունը արմատապես փոխում էր Բալկանյան թերակղզու քաղաքական քարտեզը: Թշուրքերին մնում էին մանր, անջատ-անջատ տերիտորիաներ, իսկ թերակղզու արևելյան կեսում, Դանուբից մինչև Սալոնիկ ստեղծվում էր Մեծ Բուլղարական իշխանություն, որը պետք է գտնվեր Ռուսաստանի հովանավորության տակ: Ռուսները Բուլղարիայում պետք է մնային երկու տարի: Բարձրագույն Դուռը ճանաչում է Չեռնոգորիայի, Սերբիայի և Ռումինիայի անկախությունը: Ասիայում Ռուսաստանին էր անցնում Արգահանը, Կարսը, Բաթումը, Բալազետը և Ալաշկերտի հովիտը մինչև Սողանլուղի լեռնաշղթան: Թշուրքիան պարտավորվում էր Ռուսաստանին վճարել նաև մեծ գումարով կոնտրիբուցիա:

<sup>1</sup> История дипломатии, т. II, стр. 44.

Պայմանագրի 16-րդ հոդվածում, որը հայկական հարցին էր վերաբերում, ասված էր. «Ռուսական ռուսական զորքի Հայաստանում գրաված, բայց թշուրքիային վերադարձվելիք տեղերից մեկնելը կարող է առաջ բերել ընդհարումներ և շփոթություններ, որոնցից երկու երկրների (թշուրքիայի և Ռուսաստանի) լավ հարաբերությունները պետք է վնասվեն, ուստի Բարձրագույն Դուռը պարտավորվում է հայերի բնակած նահանգներում անհապաղ իրականացնել տեղական պետքերի պահանջած բարձրումներն և բարենորոգումներն և երաշխավորել նրանց ապահովությունը թշուրքերի և շերքերի դեմ»<sup>1</sup>: Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածից դժգոհ մնացին հայերը, որոնք այդ պատերազմի հաղթական ելքից սպասում էին իրենց լիակատար ազատությունը թշուրքիայի լծից: Սակայն, նկատի ունենալով այն համառ գիմադրությունը, որ ցույց են տալիս թշուրքիայի և նրանց պաշտպան եվրոպական որոշ պետությունների ներկայացուցիչները այդ հոդվածին, ուստի 16-րդ հոդվածը կարելի է մի րորջ քայլ համարել արևմտահայերի կյանքի ապահովության, թեկուզ մինիմում, երաշխավորության տեսակետից: Այդ հոդվածը հնարավորություն էր տալիս Ռուսաստանին իր «շահերի համեմատ համապատասխան հանգամանքներում զարկ տալու հայկական հարցին թշուրքիայում» — գրում է այդ հոդվածի հեղինակ Իգնատևը<sup>2</sup>: Ինչ էլ որ լինելու ուսական ցարիզմի և նրա դիվանագիտության դիտավորությունները հայկական հարցի նկատմամբ, մեր կարծիքով ավելի պատմական ու քաղաքական կոնկրետ իրադրություններում դա ձեռնառու էր հայերին: Այս տեսակետից, չի կարելի ընդունելի համարել պրոֆ. Լեոյի այն միակողմանի մոտեցումը, որը Ս. Ստեֆանոյի 16-րդ հոդվածը հայերի համար «սեծագույն շարիք և ռեիլ»<sup>3</sup> է համարում:

«Հայկական հարցի ավելի էտապում հայ ժողովրդի և Ռուսաստանի շահերը համընկնում էին ավելի, քան թշուրքիայի կամ եվրոպական որևէ այլ մեծ տերության շահերը: Ռուսական ծրագիրը Հայկական հարցի լուծման անհամեմատ ավելի ռեալ և նախընտրելի ծրագիր էր»<sup>4</sup>:

<sup>1</sup> Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 59, № 53:

<sup>2</sup> «Исторический вестник» за 1915 г. июль.

<sup>3</sup> Թշուրքիայի գաղափարախոսությունը, հ. 1-ին, էջ 78:

<sup>4</sup> Վ. Պարսկանյան, Հայկական հարցի զարգացման էտապները, էջ 8:

Սան-Ստեֆանոյի հաշտության ամենակարևոր կետերից մեկը դա Բալկաններում բուլղարական իշխանության ստեղծմանը վերաբերող կետն էր, որը Ռուսաստանի համար ստեղծում էր լայն պլանցզարմ Բալկաններում իր ազդեցության ընդարձակման համար: Սան-Ստեֆանոյի հաշտությունը հանդիպում է Ավստրիայի, մասնավորապես նազիրայի կառավարչի գիմադրությանը, որոնք նրանում տեսնում էին Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը ինչպես Բալկաններում, նույնպես և Մերձավոր Արևելքի հարցերում:

«Տարակույս չկա, — գրում է Ա. Անտոնյանը, — որ Արևելյան եվրոպայի գրությունը տակն ու վրա ընող այդ դաշնագիրը ումբի մը ապավորություն պիտի գործեր արևմտյան երկրներու մեջ: Սան-Ստեֆանոյի դաշնագիրը մենակ թուրքիո գոյությունը շէր վտանգեր, այլ նաև հիմնովին կխանդարեր Արևելքի մեջ շահեր ունեցող բոլոր եվրոպական տերությունց հաշիվները: Ասոնց մեջ, բնական է, Անգլիան առաջին կարգի վրա կգտնվեր»<sup>1</sup>:

Իրոք Սան-Ստեֆանոյի հաշտությունը ամենից առավել անտանելի էր Անգլիայի համար, որի իմպերիալիստական գիշատիչ երևակայությունը տանջել էին սկսում Հայաստանի բերդերից դեպի Միջերկրական ծովը և Հնդկաստանի ճանապարհներն արշավող ռուսական զնդերը: Գեռևս պատերազմը շէր ավարտված, անգլիական դիվանագիտությունը իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով աշխատում էր կասեցնել այդ վտանգը:

«Ռուսաստանը, — գրում էր Սուլզբերին, — Հայաստանի բերդերը գրավելով՝ այդ նահանգի ժողովրդի վրա իր ազդեցությունը պիտի տարածե, մինչև Թշուրքիստանի մի մասին տիրելով՝ պիտի կարողանա ուղած ժամանակ իր առևտրական սխտեմի արգելիչ պատվարներովը կասեցնել եվրոպական այն ընդարձակ վաճառականությունը (մենք կասեինք անգլիական — Ա. Ն.), որ այժմ Տրասպոլոնից անցնում է Պարսկաստան»<sup>2</sup>:

Ահա, թե ինչու թշուրքիայում անգլիական դեսպան Լեարդը բոլոր հնարավոր միջոցներով ձգտում է թուլացնել ռուսական ազդեցությունը: Այդ նպատակով խորամանկ բրիտանացին կապվում է

<sup>1</sup> Ա. Անտոնյան, Ընդարձակ պատմություն պալկանյան պատերազմի 1912 թ., 4 Պոլիս, էջ 25:

<sup>2</sup> Սարգսյան, Հայկական խնդիրն և ազդային սահմանադրությունը թշուրքիայում, էջ 403 — 404:

արևմտահայ-անգլիացիները, այդ թվում Խրիմյանի և թյուրքական ծառայության մեջ գտնվող մի քանի պաշտոնյաների հետ, հավաստիացնելով նրանց, որ բրիտանական կառավարությունը սիրահոծար կերպով կօգնե հայերին նրանց ինքնավարության հարցում: Լեարդը համոզում է արևմտահայ գործիչներին այդ խնդրով Բիզոնսֆիլդին դիմելու, խնդրելով նրանից պաշտպանել հայերին «ուսաց ազդեցությունը ենթարկվելու սպառնալիքից»: Այս խոստումներին հավատալով էր, որ Խրիմյանը մեծ հույսերով Լոնդոն մեկնեց: Փե որքան կարելի էր հուսալ հայերի նկատմամբ անգլիական օգնության վրա, դա երևում է հայ պատվիրակության հետ անգլիական պառլամենտի անդամ պատամիրս ոմն Ֆորստերի գրույցից: Ֆորստերը հետևյալ խորհուրդն է տալիս Խրիմյանին. «Մի՛ վշտացնեք Ռուսաստան, որ ձեր դրացին է, մի դառնաք այստեղ գործիք ոչ պահպանողական կուսակցության և ոչ էլ մեր ազատականների ձեռքը:

Շատ ղեկավար է Անգլիայի համար՝ հսկել Հայաստանի վրա, որ այնչափ հեռու է մեզանից»<sup>1</sup>:

Անգլիան իր դիվանագիտական բոլոր միջոցներով աշխատում է թույլ շտալ Ռուսաստանին օգտվելու իր հաղթանակից և նոր պատերազմի սպառնալիքներով պահանջում է Սան-Ստեֆանոյի պայմանագրի արմատական վերանայում, այդ թվում նաև հայկական հարցին վերաբերող 16-րդ հոդվածը, որը թեկուզ նվազագույն շափով որոշ երաշխիք էր տալիս արևմտահայերի կյանքի ապահովության վերաբերյալ:

Պատերազմի ժամանակ Անգլիան օգնում էր թյուրքիային Ռուսաստանի դեմ, իսկ հակառակ անգլիացիների կամքի, երբ պատերազմն ավարտվել էր Ռուսաստանի հաղթությամբ, Անգլիան դարձյալ հանդես է գալիս որպես Ռուսաստանի պաշտպան հակառակորդ:

«Ամեն անգամ, երբ Ռուսաստանը պատերազմ է ունեցել Արևելքում, — գրում է «Մշակի» առաջնորդողը, — նրա հակառակորդը միշտ եղել է Անգլիան: Անգլիան կամ բացարձակ պատերազմող կողմ է եղել, կամ դիմակով ծածկված թյուրքիային օգնություն է հասցրել: Նրա դիմավորները թյուրքաց շորերով պատերազմել են սուլաների դեմ: Նրա արսենալները տվել են թուրքաց պատերազմա-

<sup>1</sup> Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը թյուրքիայում, էջ 391:

կան գործիքներ, նրա նավերը տեղափոխել են թուրքաց զորքերը և այլն»<sup>1</sup>:

Անգլիային բոլորովին ձեռնառու չէր թյուրքիայի անդամատուժը. նրա շահերը պահանջում էին ամբողջական և անտեսապես հյուժված ու իրենից կախում ունեցող թյուրքիա, որին ցանկացած պահին կարող էր Ռուսաստանի դեմ դուրս բերել: Ահա թե ինչ էր ասել հենց ինքը՝ Պոլսի անգլիական դեսպան Լեարդը Դերբիին գրած իր նամակներից մեկում.

«Թյուրքիան պահպանելու քաղաքականությունը մեր սեփական նպատակի և մեր ապահովության համար է և ոչ թե թյուրքերի և նրանց կյանքի վերստին սիրույն համար: Այս քաղաքականությունն ընդունված և գործադրված է մեր ամենամեծ պետական մարդկանցից, ուստի վերջին մի քանի ամիսների դեպքերը չեն կարող այդ տապալել: Այս քաղաքականությունը մասամբ հիմնված էր այն հավատի վրա, թե թյուրքիան Արևելքում Ռուսաստանի փառասիրական ձգտումների դեմ մի պատենել է, իսկ սուլթանն, իբրև իսլամական կրոնի գլուխը՝ շատ օգտակար և պետքական դաշնակից է Անգլիային, որը միլիոնավոր մահճակալական հպատակներ ունի»<sup>2</sup>: Այսպես, ուրեմն, Անգլիան, ելնելով իր սեփական իմպերիալիստական հաշիվներից, հանդես է գալիս Ռուսաստանի ողորմածությունը ենթակա թյուրքիայի «պաշտպանության» դերում և դրանով օգնում թյուրքիային իր բռնակալ լծի տակ պահելու միլիոնավոր քրիստոնյաներին, այդ թվում նաև հայերին: Եթե անգլիական իմպերիալիզմին չհաջողվեց իր հաստիքական քաղաքականությամբ խափանել բալկանյան սլավոնների թյուրքիայի լծից ազատագրվելու գործին, չնայած այդ ուղղությամբ մեծ ջանքեր գործադրեց, — այնուամենայնիվ նրան հաջողվեց զրկելու հայերին իրենց կյանքի ապահովության նվազագույն երաշխիքից և հայկական մի շարք շրջանների Ռուսաստանի տիրապետության տակն անցնելուն, որը նախատեսված էր Սան-Ստեֆանոյի պայմանագրում:

Խոսելով Անգլիայի քաղաքականության մասին, «Մշակը» իր 1877 թ. № 84-ի արտաքին տեսությունը բաժնում գրում է. «Մի

<sup>1</sup> «Մշակ», 1878 թ., № 48, առաջնորդող:

<sup>2</sup> Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը թյուրքիայում, էջ 401:



զարմանալի տեսարան է ներկայացնում այս րոպին քաղաքակրթ-  
ված Եվրոպան և մասնավորապես Անգլիան:

Քաղաքակրթված աշխարհը փոխանակ համակրելու ճնշված  
թյուրքաճպատակ քրիստոնյաներին, փոխանակ նրանց օգնության  
ձեռք մեկնելու Բաղափառված աշխարհը, ասում ենք, և մասնա-  
վորապես Անգլիան (ընդդժման մերն է: Ա. Ն.) ամեն միջոցներ են  
գործ դնում, որպեսզի օգնեն թյուրքիային և միջոց չտան թյուրքա-  
ճպատակ քրիստոնյաներին դարավոր ճնշումից իրանց դուրսը  
բարձրացնելու, կրկին ազատության ձգտելու, նորից շունչ քաշելու  
և այդ անասովածությունը անվանվում է քաղաքականության մեջ  
Եվրոպայի հավասարակշռություն, կամ Անգլիայի շահերը<sup>1</sup>:

Այսպես, Ռուսաստանը ստիպված էր գլխել, նկատի  
ունենալով Անգլիայի և Ավստրիայի սպառնալիքները և համաձայ-  
նության գալ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու Բեռ-  
լինի կոնգրեսում: Ռուսաստանի դիվանագիտության ղեկողականու-  
թյունը բացատրվում է ուժերի այն փոխհարաբերությամբ, որ  
ստեղծվել էր դեռևս արևելյան ճգնաժամի սկզբում: Թյուրքիայի  
հետ պատերազմը Ռուսաստանի համար կապված էր Անգլիայի և  
Ավստրո-Հունգարիայի հետ պատերազմելու սխիկ հետ: Ռուսական  
կառավարությունը չէր ցանկանում նման կոնֆլիկտի մեջ մտնել,  
նամանավանդ, նկատի ունենալով Գերմանիայի բռնած դիրքը:  
Դեռևս 1878 թ. փետրվարի 19-ին Քիսմարկը հայտարարում է, որ  
Արևելյան հարցում ինքը ավելին չի ներկայացնում, քան «ազնիվ  
մակեր» և նրա խնդիրն է, որքան հնարավոր է շուտով գործը իր  
վախճանին հասցնել: Այսպիսով, Քիսմարկը հրապարակորեն հրա-  
ժարվում է ռուսական կառավարության ակտիվ պաշտպանու-  
թյունից: Նա միայն խորհուրդ է տալիս համաձայնվելու համակրո-  
պական կոնգրեսի գումարման՝ հանուն «խաղաղության» հաստատ-  
ման: Չնայած դրան, ռուսական դիվանագիտությունը դեռևս որոշ  
հույսեր ուներ Բեռլինի կոնգրեսում՝ իր շահերը Գերմանիայի կող-  
մից պաշտպանելու վրա: Կոնգրեսի աշխատանքների ընթացքում  
ամբողջապես զրսեորվեց Գերմանիայի և նրա «ազնիվ կանցլերի»<sup>2</sup>  
Քիսմարկի նենգավոր քաղաքականությունը Ռուսաստանի նկատ-  
մամբ, որը դեռևս տարիներ առաջ նախատեսում էր Գորչակովը,  
անվասահունքամբ է վերաբերում նրա խոստումներին և այդ մասին

<sup>1</sup> «Մշակ», 1877 թ., № 84:

զդուշացնում Ալեքսանդր II-ին: Ահա թե այդ մասին ինչ է գրում  
ինքը Քիսմարկը. «Գորչակովը այն ժամանակ (ռուս-թյուրքական  
պատերազմից առաջ:—Ա. Ն.) շահում էր ապացուցել իր կայսրին,  
որ իմ նվիրվածությունը նրան և իմ սիրտատիան Ռուսաստանի  
նկատմամբ կեղծ են կամ միայն սպառնական» բնույթ են կրում:  
Նա աշխատում էր ստանալ նրա վստահությունը իմ նկատմամբ և  
ժամանակավորապես նրան այդ հաջողվում է»<sup>1</sup>:

Գորչակովը իրավացի էր. Քիսմարկը տարիներ շարունակ  
կեղծում էր և այդ միջոցներով նրան հաջողվում է շահել Ալեք-  
սանդր II-ի բարչացական շեղորությունը՝ Յրանսիայի հետ իր հա-  
շիվները մաքրելու ժամանակ:

Այժմ անհրաժեշտ էր սահմանափակել Ռուսաստանի ազդեցու-  
թյունը Բալկաններում և Մերձավոր Արևելքում, փոխարինելով այն  
գերմանական ազդեցությամբ:

Քաղաքական նման պարագաներումն է, որ դումարվում է  
Բեռլինի կոնգրեսը 1878 թ.: Թյուրքական կառավարությունը հու-  
սով էր, որ Բեռլինի կոնգրեսը չի վավերացնի Սան-Ստեֆանոյի  
պայմանագիրը. նա համոզված էր, որ Արևելյան հարցում շահա-  
դրողված պետությունները երբեք համաձայնության չեն գա թյուր-  
քիայի բաժանման հարցում: Անդրադառնալով այդ հարցին, «Մշա-  
կը» գրում է. «Թյուրքերը դեռ հույս ունեն, որ կոնգրեսը չի վավե-  
րացնի իրանց անկումը, և թե արևելյան հարցի մեջ շահ ունեցող  
պետությունները չկարողանալով երբեք համաձայնվելու թուրքաց  
տերությունը մաս-մաս անելու և բաժանելու խնդրի մեջ, վերջապես  
էլի կհամոզվեն, թե թուրքերին պահպանել Եվրոպայում բացարձա-  
կապես հարկավոր է: Անհնարին է, ասում են թյուրքերը իրենց մեջ,  
որ Անգլիան և Ավստրիան թույլ տան, որ Բուլղարիան Ռուսի ազ-  
դեցության ենթարկվի մինչև Թրակիա և թե Ռուսաստանը իր հա-  
մար պատերազմական ճանապարհ ունենա մինչև Էգեյան ծովը»:

«Բարձրագույն Գուռը հաստատ համոզված է, թե Եվրոպան ոչ  
մի կերպով չի թույլ տա, որ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը մնա  
այնպես, ինչպես որ է»<sup>2</sup>:

Ահա Ռուսաստանի Արևելքում ունեցած ազդեցության և  
նրա հետագա առաջխաղացման դեմ պայքարելու նպատա-

<sup>1</sup> О. Бисмарк, Мысли и воспоминания. т. II, Москва, 1940, стр. 192.

<sup>2</sup> «Մշակ», 1878, № 52, «Արտաքին տեսություն»:

կով էր, որ Բեռլինի կոնգրեսից մի շաբաթ առաջ, Անգլիան թյուրքիայի հետ պաշտպանական դաշինք կնքեց, գրավելով Կիպրոս կղզին: Այդ դաշինքի առաջին հոդվածում ասված է, «Եթե Ռուսաստանը իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկն ու մեկը, այսուհետև երբեկից փորձ անելու արելու Ասիայում Ն. Կ. Մ. սուլթանի ունեցած այն երկրներից որեւէ մի մասին, որոնք խաղաղության վերջնական դաշնագրով պիտի որոշվի, այն ժամանակ Անգլիան պարտավորվում է միանալ Ն. Կ. Մ. սուլթանի հետ՝ ղենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար: Ի փոխարինություն՝ Ն. Կ. Մ. սուլթանը խոստանում է Անգլիային, մտցնել անհրաժեշտ բարենորոգումները, որոնք հետագիտի մանրամասնաբար որոշվեն երկու պետությունների մեջ և որոնք նպատակ ունեն Բ. Գոան քրիստոնյա և այլ հպատակների բարվոք վարչությունը և պաշտպանությունը խնդրի առարկա եղած երկրներում, և որպեսզի Անգլիան իր պարտականությունը կատարելու համար հարկավոր եղած միջոցներն ապահովե, Ն. Կ. Մ. սուլթանը հնարավորություն է տալիս նույնպես, որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից»<sup>1</sup>:

Գրիգոր Արծրունին՝ Կիպրոսի դաշնագրի պատճառով Անգլիայի դիրքը դեպի արևմտահայերը վտանգավոր և կործանարար էր համարում: «Վերջապես բաց անենք աչքերը» առաջնորդողում «Մըշակը» զգուշացնում է հայերին Անգլիայից, որ նրանց կրոնափոխ անելով, շպտաբ է բավականանա, այլ նաև թյուրքերին և բուրգ ցեղապետներին պաշտպանելով, հայերին պիտի ճնշի, նրանց ստրուկը դարձնի<sup>2</sup>:

Այնուհետև խոսելով արևմտահայերի իրավացի կերպով Անգլիայի դեմ ունեցած դժգոհությունների մասին, «Մշակը» գրում է. «Այժմ նրանք (արևմտահայերը) ամեն տեսակ անիրավություն կարող են սպասել Անգլիայից, նրանք երկյուղով են նայում իրանց ապագայի վրա, պարզ տեսնելով, որ լուսավորված անգլիացիների ամենահավատարիմ դաշնակիցները Փոքր-

<sup>1</sup> Լեո, հայոց հարցի վավերագրերը, էջ 103—105, № 10:

<sup>2</sup> «Մշակ», 1878, № 204:

Ասիայում լինելու են մոլեռանդ թյուրքերը, վայրենի և ավազակ բուրգերը, շերբեղները և լազերը»<sup>1</sup>:

Հակառակ «Մշակի»՝ անգլասերները և պատրիարք Ներսեսը Անգլիայի բռնած դիրքը օգտակար և փրկարար էին համարում արևմտահայերի համար:

Ներսես Վարժապետյանը աղգային ժողովում հայտարարում է. «...իսկ մենք, տեսք երեսփոխանք, մենք հարատեկներ մեր սկսած գործին մեջ: Այսպիսի գործը ոչ մեկ օրվան մեջ, ոչ մեկ մարդու ձեռքով կրնան կատարել: Պատրաստվենք մեր ապագային: Նախ չինանք հոս: Հայաստան երթանք, Հայաստան դրկենք ինչ որ ունենք ազգիս մեջ բունն բուն, տաղաճաղվոր, ազգասեր, ուսումնասեր կեկեղեցականներ, Հայաստան երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվառն երիտասարդներ, Հայաստան երթան մեր այնքան դժբախտ պանդուխտներ. ոչ ևս պիտի ըլլա հոն սով, սրածուլություն, ոչ ևս հարստահարություն, ոչ ևս կենաց և ընչից և պատվո առևանգություն, ոչ ևս աշխատության խափանում, ուղիներ պիտի բացվեն, ջրանցքներ պիտի շինվեն, գործարաններ պիտի կառուցվեն: Անգլո գրամատեւր հոն պիտի երբան իրանց դրամը գործածելու. բող երբան մեր դրամատեւրք ալ, ընկերություններ կազմեն այն օրվան»<sup>2</sup> (ընդգծումն իմն է:—Ա. Ն.):

Ինչ էլ որ լինեք Անգլիայի մտադրությունը, հայերը, բացի շարիքից, ուրիշ ոչինչ սպասել չէին կարող: Կիպրոսի դաշնագրությունը ուղղված լինելով Ռուսաստանի դեմ, վերջին հաշվով ուղղված էր նաև արևմտահայ ժողովրդի շահերի դեմ:

\* \* \*

Բեռլինի կոնգրեսը, ինչպես որ պետք էր սպասել, արմատապես վերափոխեց Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը: Օգտվելով Գերմանիայի բռնած դիրքից, Անգլիայի ներկայացուցիչներին հաջողվեց զգալի կերպով կրճատել Ռուսաստանի իրավունքները: Բիսմարկը, առերես ցույց տալով, որ ինքը ոչնչով չահազրոգված չէ Արևելյան հարցում և ինքը սոսկ «պատվավոր միջնորդի» դերումն է զտնվում, ծածուկ հակառուսական քաղաքականություն է վարում:

<sup>1</sup> «Մշակ», 1878, № 132, «Թյուրքահայերի վիճակը» Գ. Ա.:

<sup>2</sup> Լեո, Գրիգոր Արծրունի, 5. 2. Թիֆլիս, 1905, էջ 83—84:

«Իր հայտարարութիւնը, թե ինքը անշահախնդիր պատվաւոր միջնորդի դեր մը միայն պիտի խաղա խորհրդակցութեան ընթացքին, խաբեց Ռուսիան, որ փութաց ընդունել Վեհաժողովի առաջարկը, այն հուշտով, թե Պիղմարը իր կողմը պիտի տաշի: Իրոք ալ երկաթեայ նախարարապետը վեհաժողովին մեջ միշտ զգուշացավ հայտնարար հակառուս ընթացք բռնելի, թե երեսանց Ռուսիո թուլատու երեւոյժ հանդերձ Գերման շահերին մատ մը բան անգամ չզոհեց և մյուս կողմի աշխատեցավ վառ պահելու Անգլիո և Ռուսիո միջև գոյութիւն ունեցող հակասութիւնը, իրավամբ մտածելով որ անգլո-ուսական թշնամութիւնն մը ապագային բոլորովին պիտի դուրացնէր Գերման ազդեցութեան ծավալումը Արևելքի մեջ»<sup>1</sup>:

Իրականում Ռուսաստանի հակառակորդների կողմը պահող Բիսմարկի նենգավոր վարքը ուսական կառավարութեան համար պարզեց, որ դրանից հետո Ռուսաստանը Բալկանյան թերակղզում վարած իր ձգտումների դեմ ունի մի նոր և ուժեղ մրցակից ի դեմս արագորեն աճող գերմանական իմպերիալիզմի, որն այդ ժամանակից սկսեց բացարձակորեն ձգտել դեպի Արևելք, դեպի Պոլիս, Փոքր Ասիա և Բաղդատ: Արևելքի իր դավթողական պլանների իրականացման գործում Բիսմարկը վտանգավոր մրցակից էր համարում նաև հայերին, որոնք իրենց առևտրական գործարքներով և զարգացմամբ կարող էին խանգարել Թյուրքիայում գերմանական ազդեցութեան տարածմանը: Ահա, թե ինչու Բիսմարկը ամեն կերպ աշխատում է ձախողել հայկական հարցի լուծումը կոնգրեսում, եսկ նրանից հետո օգնում Սուլթան Համիդին հայերին բնաջնջ անելու գործում: «Իսկ նյութապաշտ և իրապաշտ Գերմանիան, — գրում է պրոֆ. Թումանյանը, — Անգլիային ալ ավելի յուր շահերուն նվիրած ընդունակ և մտադիր չէր Արևելքի քրիստոնեից համար սրբէլ գոհողութիւն ընել: Արևելյան խնդրո նկատմամբ Բիսմարքի դավանանքն էր, որ «բոլոր հայերը բոմբրացի զինվորի մը ոսկորին հետ չի փոխել»<sup>2</sup>:

Գիվանադիտական երկարատև և լարված պայքարից հետո հուլիսի 13-ին կոնգրեսն ավարտում է իր աշխատանքը. ստո-

<sup>1</sup> Ա. Անտոնյան, Ընդարձակ պատմութիւն Պալկանյան պատերազմի, 1942 թ. 4, Պոլիս, էջ 39:

<sup>2</sup> Պր. Թումանյան, Պատմութիւն արևելյան խնդրո, էջ 50:

րագրվում է բեռլինյան տրակտատը, որը փոխարինում է Սան-Ստեֆանոյի պայմանագրին: Ռուսաստանը զգալի չափով զրկվում է իր ձեռք բերած հաղթանակի պտուղներից: «Թյուրքիայի պաշտպաններ Անգլիան և Ավստրիան առանց մի կրակոցի զրավում են առաջինը Կիպրոսը, երկրորդը Բոսնիան և Հերցեգովինան: Այսպիսով, բեռլինյան դաշնագիրը էպպես հանգում էր Թյուրքիայի մասնակի բաժանման: «Կողոպտում են Թյուրքիային», — այսպես է բնութագրում Լենինը Բեռլինի կոնգրեսը:

\* \* \*

Մեր խնդրից դուրս է հայկական հարցի մանրամասն քննարկումը Բեռլինի կոնգրեսում, սակայն անհրաժեշտ ենք համարում այդ մասին հետևյալն ասել:

Կոնգրեսի ողջ տևողութեան ընթացքում հայերը, լարված սպասում էին, թե ինչ լուծում կստանար հայկական հարցը, որը կոնգրեսի քննարկմանը ներկայացնելու համար Բեռլին էին մեկնել հայ պատվիրակները (Խրիմյան, Նարայեչ, Մ. Չերազ) որոշակի ծրագրով և այդ նպատակի համար կազմված Հայաստանի հատուկ քարտեզով: Սակայն, ցավոք սրտի, կոնգրեսը ժամանակ չունեց հայերի հարցով զբաղվելու: Կոնգրեսում իրենց իմպերիալիստական պետութիւնների շահերը ներկայացնող երոպական դիվանագետները, զբաղված լինելով իրենց սեփական դավթողական պլաններով, բոլորովին տրամադրված չէին հայկական հարցով զբաղվելու: Հայ պատվիրակներին անգամ թույլ չարվեց կոնգրեսի շենքը մտնելու: Կոնգրեսը իր վերջին նիստերից մեկում միայն՝ հայերի աչքերին թող փչելու և հայ պատվիրակութեան մի կերպ գոհացում տալու համար՝ հայաձեպ կերպով անդրադառնում է այդ հարցին, որի արդյունքն է հանդիսանում Անգլիայի ներկայացուցիչների կողմից խմբագրված 61-րդ հոդվածը, որը փոխարինում էր Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածին: «Բարձրագույն դուռը, — ասված է այդ հոդվածում, — կխոստանա առանց այլևս հապաղելու գործադրել այն բարոլորումներն ու բարենորոգումները, զոր տեղական պետքերը կպահանջեն հայոց բա-

<sup>1</sup> История дипломатии, т. II, стр. 50.

նակած գավառներուն մեջ և առանց ապահովութիւնն երաշխավորել Չերքեզաց և Քրդաց դեմ: Այս նպատակով ձեռք առնված միջոցները պարբերաբար պետք է ծանուցանեն տերութեանց, որք անոնց գործադրութեանը պիտի հսկեն»<sup>1</sup>:

Այսպես, ուրեմն, Բեռլինի կոնգրեսը ծանր հարված հասցրեց նաև հայ ժողովրդին: Նա խուզեց Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը և 61-րդ հոդվածում պահել է միայն սեփոքաներին վերաբերող մասը, իսկ որ էական է, այդ հոդվածի գործադրման հսկողութիւնը դրվեց վեց մեծ պետութիւնների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի վրա: Որն է կոնկրետութիւնից զուրկ և արևմտահայերի կյանքի ապահովութեան նկատմամբ ոչ մի երաշխիք չխոստացող 61-րդ հոդվածը փաստորեն մի զենք հանդիսացավ հայ ժողովրդի արշուճարբու դահիճ Սուլթան Համիդի ձեռքին, որն, իրեն հատուկ ձարակութեամբ օգտվելով եվրոպական պետութիւնների միջև եղած հակասութիւններից, բարենորոգչական իր կեղծ խոստումներով որոշեց ժամանակ շահել և իր ուղած ձևով «լուծել» հայկական հարցը, այն է՝ սիստեմատիկ կերպով ջարդեր կազմակերպելով, ֆիզիկապես բնաջնջել հայերին: Սակայն, շնայած դրան, հայ պատմիրակութեան բարտուղար Մինաս Չերազը, որը արևմտահայ անդլասեր գործիչների խմբին էր պատկանում, ճգնում է ապացուցել, որ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը հայերի համար ավելի շահավետ էր, քան 16-րդ հոդվածը.

«Պերլինի վեհաժողովեն մի ոսկեհանք շահեցանք, մեզ անկ է խիզարխել և հանել ոսկին»<sup>2</sup>:

«Էր այդքան ճգունք» վերնագրով առաջնորդողում «Լրագիրը», խիստ քննադատութեան ենթարկելով Մինաս Չերազի վերը հիշած դատողութիւնները, գրում է. «Պարոն Չերազ քանի մը դեսպանագիտական գրութիւններ ու որոշումներ հառաջ բերելեն հետո, քաղելեն կոնգրեսի մի քանի արձանագրութիւններեն, որք ամենուն ալ ծանոթ են, կճգնի հաստատել թե Բեռլինի դաշնագրին 61-րդ հոդվածը խիստ մեծ և արդյունավետ բարյաց սերմեր կպարունակէ

<sup>1</sup> Ան, Հայոց հարցի վավերագրերը, էջ 110:

<sup>2</sup> Մինաս Չերազ, Ինչ շահեցանք Բեռլինի տերութեանց վեհաժողովեն, էջ 23:

հայոցս ազգին ապագային համար, եթե մենք պետք եղած իմաստութիւնն ունենանք զանոնք ի լավն և օգտակարապես գործածելու»<sup>1</sup>:

«Այսթեֆանոյի դաշնագրին 16-րդ հոդվածի արժեքն ու կարեւորութիւնը նվազեցնելու համար որչափ ճիշդ որ կթափեն նորահաս տիրումաթը, անկե շատ ավելին կթափեն Պերլինի դաշնագրին 61-րդ հոդվածին առավելութիւնը ջատագովելու համար... Սակայն ինչ կնշանակի... 61-րդ հոդվածին՝ 16-րդ հոդվածի վրա ունեցած անհուն առավելութիւնը սուտերով ու շափազանցութիւններով քարոզելու և զմեզ համոզելու ճիշդ թափելը»<sup>2</sup>:

Հայերը, որոնք, ինչպես ասացինք, մեծ սպասելիքներ ունեին կոնգրեսից, լսելով հայկական հարցի ձախողման մասին, դառն հիասթափութիւն ապրեցին: Հայերի այդ վիշտն է երզում Գամառ Քաթիպան իր «Վեհաժողով» բանաստեղծութեան մեջ.

«Մայր Հայաստանի տարին էլ անցավ,  
Տանջում է նորան նույն վիշտ ու նույն ցավ.  
Բացված լայն վերքեն արլունը ծոր-ծոր:  
Մեր հոգս վիշտը, մեր բոթն ու սուգը,  
Աղետորշ աշայ մեր արտասուքը  
Ոչ ոք չտեսավ, ոչ ոք չի զգաց,—  
Լուսավոր եվրոպ կույր ու խուլ մնաց:  
...Ինչու թող ասե անգութ եվրոպան,  
Որ Պիդատոսի արավ դատաստան,—  
Նախ անմեղութիւն մեր խոստովանեց,  
Ապա շատերուն մեզի խաչ մատնեց»<sup>3</sup>:

«Մեղու Հայաստանին» 1878 թ. № 30-ի խմբագրականում գրում է. «Որ հիման վրա հուսանք որ խաղաղութիւն ապահովե և հաստատուն ու երկարատև: Այս հույսը խաբուսիկ հույս է: Անգլիան դեսպանաժողովի մեջ գլխավոր դեր խաղացողն էր և ժողովի այդպիսի խախտող որոշումները կարելի է միայն մեկնել Անգլիայի կառավարութեան ցանկութեամբ, միշտ առիթ գտնելու պատերազմի, երբ նա այդ իրան հարմար և օգտակար կհամարի: «Եվրոպայի խաղաղութեան» խոսքերը միայն դիմակ են դեսպանաժողովի

<sup>1</sup> «Լրագիր». 1878, № 28 հոկ., «Էր այդքան ճգունք», թ. 823:

<sup>2</sup> Նույն տեղում, 2 հոկտ., թիվ 821:

<sup>3</sup> Գամառ Քաթիպա, հ. 1, էջ 12:

որոշումների անհարմարությունը ծածկելու համար: Բեռլինի վեհա-  
ժողովն իր որոշումներով ոչ խաղաղություն է ապահովել և ոչ էլ  
արևելյան հարցը վճռել. դեռ երկուսն էլ կախ են մնացած և ապա-  
գայի գործ»<sup>1</sup>:

«Հայը զոհվեցավ անգլիական շահասեր ազգին եսական և ինք-  
նահոգ քաղաքականությունը, գրում է «Լրագիրը»<sup>2</sup>: 61-րդ հոդվածից  
դժգոհ էր նաև «Մշակը», որը «Ուն կողմը պահենք» առաջնոր-  
դողում գրում է. «Անգլիան աշխարհիս ամենալուսավորված եր-  
կիրն է, աղաղակում են տգետները: Աստված շանի ալոպես լուսա-  
վորված լինել ինչպես Անգլիան, ասում ենք մենք: Հայերը ոչ լու-  
սավորված Անգլիայի կողմը պիտի պահեն, ոչ անիշխանական  
թյուրքիայի»<sup>3</sup>: «Մշակ» թղթակից Հ-ն, խոսելով Բեռլինի կոնգրե-  
սում հայկական հարցի ձախողման մասին, դարձյալ պատճառը  
համարում է Անգլիայի նենդ եսասիրական քաղաքականությունը:  
«Վերջապես դժվարություններ ամեն կողմն պաշարում են զմեզ.  
նենգավոր Անգլիան մի կողմեն, բարբարոս թյուրքերը մյուս կող-  
մեն. բայց հուսահատված չենք: Մեր անհաջողության պատճառը  
սա է,—գրում է Հ-ն,—որ Անգլիան պաշտպանողական և հար-  
ձակողական գաղտնի դաշնագրություն է արել Բ. Գոան հետ, փո-  
խարեն ստանալով Կիպրոս կղզին, Սուեզի ջրանցքին, այն է.  
Հնդկաստանի ճանապարհին մոտ»<sup>4</sup>:

Հայերի դայրույթն Անգլիայի՝ հայկական շահերի այդ «դարա-  
վոր պաշտպանի» նկատմամբ ավելի է բորբոքվում, երբ լրագրերը  
հաղորդում են Բիկենսֆիլդի հայերի հասցեին ուղղած վիրավորա-  
կան ճառը, որտեղ նա հայերին թուլասիրտ ու կնաբարտ է անվա-  
նում: Այդ մասին «Մշակ» թղթակից Գր. Նիկողոսյանը գրում է.  
«Երբ տաճկահայերի լրագրները հասցրին այստեղ Բրիտանիայի  
լիազորի խոսքերը ուղղած հայոց ազգի դեմ, որին նա կոչել է  
թուլասիրտ և կնաբարտ, այնպես մի կատաղի դայրույթ և ատե-  
լություն բորբոքվեց բոլորի սրտում... Զարմանալի է իրավի  
և ցավալի լսել մի այդպիսի նշանավոր եվրոպական մարդուց այդ-  
չափ տգիտություն կամ թե գիտակցական արհամարհանք և վերջ»

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի» № 30, 1878, առաջնորդող:

<sup>2</sup> «Լրագիր», 1878, № 780, «Հրավերը միության»:

<sup>3</sup> «Մշակ», 1878, № 142:

<sup>4</sup> Նույն տեղում, № 117, «Նամակ թյուրքիայից»—Է.:

«մի ամբողջ ազգի պատվին և արժանապատվությանը: Բեռլան է  
այժմ, որ ուշափ զգվանք են զգում հայերը դեպի Անգլիան, այն-  
չափ ևս համակրություն դեպի Ռուսաստանը»<sup>1</sup>: (Ընդգծումը մերն  
է:—Ա. Ն.)

Բեկոնսֆիլդի հայերի նկատմամբ ունեցած հակակրությունն  
այն աստիճանի է հասնում, որ որոշում է առհասարակ ջնջել Հա-  
յաստան անունը, փոխարինելով այն Քուրդիստանով: Երևի դա  
անհրաժեշտ էր Անգլիային ազատվելու համար այն լրացուցիչ  
պատասխանատվությունից, որը նրանք ստանձնել էին արևմտահա-  
յերի նկատմամբ Կիպրոսի դաշնագրության համաձայն: «Մշակի»  
առաջնորդողը զայրույթով է խոսում անգլիացիների մասին, որոնք  
Հայաստանին Քրդստան են անվանել և իրենց էրզրումի հյուպա-  
տոսին՝ Քուրդիստանի հյուպատոս:

«Ուրեմն Անգլիայի կարծիքով էլ չկա Հայաստան, այլ Հայաս-  
տանը Քուրդիստան է դարձել... գրում է «Մշակը». դա հանդուգն  
և անամոթ ծաղր է հայոց ազգության և Հայաստանի մասին: Այժմ  
գուցե բթամիտ անգլասերները կհամոզվեն որքան անկեղծ էր Ան-  
գլիայի սերը դեպի հայոց ազգը»<sup>2</sup>:

Անգլիայի նման քաղաքականությունը հայերի նկատմամբ հու-  
սախաբույթուն է առաջացնում արևմտահայ գործիչների շրջանում,  
որոնք, սկզբից խաբվելով Ղեարդի առատ խոստումներից, մեծ հույ-  
սեր էին կապել հայկական հարցի անգլիական պաշտպանության  
վրա:

Հայտնի է, որ նախքան Բեռլինի կոնգրեսը, երբ դեռ պատե-  
րազմական դրժողություններ չէին ավարտվել, Պոլսի անգլիական  
դեսպան Ղեարդը այնտեղ անգլիական օրինենտացիայի կողմնա-  
կիցների առաջնորդներին, մասնավորապես Խրիմյանին մեծ խոս-  
տումներ է տալիս հայերին ինքնավարություն տալու և հայերի դա-  
տը պաշտպանելու ուղղությամբ, սակայն պարզվեց, որ այդ ամենը  
խորամանկ միջոցներ էին հայ դործիչներին խաբելու, իրենց կողմը  
գրավելու և Ռուսաստանի ազդեցությունը թուլացնելու համար:  
Երբ ժամանակը եկավ արված խոստումները կատարելու և հայկա-  
նական հարցը Բեռլինի կոնգրեսում պաշտպանելու, Անգլիայի ներ-

<sup>1</sup> «Մշակ», № 431, «Նամակ թյուրքիայից», Գր. Նիկողոսյան:  
Նույն տեղում, 1878, № 407:

կայացուցիչները ոչ միայն իրենց խոստումները չկատարեցին, այլև իրենց քաղաքականությունը ձախողեցին հայկական հարցը:

Երբ ներսես Վարժապետյանը այդ մասին հիշեցնում է Լեարդին, վերջինս ցինիկ կերպով պատասխանում է. «Երբեք Անգլիան չի համաձայնվի, որ Հայաստանին արտոնություններ տրվեն, այդ կնշանակեր, որ հայերը գործիք դառնան ռուսների ձեռքին»: «Իսկ դուք, — պատասխանում է պատրիարքը, — չեք կարող մեզ արգելել հոգով ռուսների կողմը լինելու, որովհետև միայն Ռուսաստանին և Ա-Ստեֆանոյի դաշնագրին ենք մենք պարտական մեր վիճակի այդ փոքրիկ բարելավությանը, որ Բեռլինի դեսպանաժողովից մենք ստանալու ենք: Դուք անգլիացիները համակրում եք միայն տաճիկներին և արևելյան քրիստոնյաների վիճակը ձեզ համար ոչինչ նշանակություն չունի»: Լեարդը փորձում է համոզել, որ Անգլիայի խնամակալությունը Հայաստանի համար ավելի օգտակար կլինի, քան թե Ռուսաստանինը: «Ոչ-ոչ, պատասխանում է պատրիարքը. անգլիացիները և տաճիկները այժմ մեզ համար միևնույն են, իսկ տաճիկներից հայերը ոչինչ սպասելիք չունեն»<sup>1</sup>:

Այսպես ուրեմն, Անգլիան իր խարդախ քաղաքականությամբ, օգտվելով Ռուսաստանի հակառակորդ մշուս պետությունների, առաջին հերթին Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի աջակցությունից, ձախողում է հայկական հարցի լուծումը:

Յր. Դեվ Գրինը, խոսելով Բեռլինի կոնգրեսի արդյունքներին և հայերի նկատմամբ ցուցաբերած եվրոպական պետությունների անտարբեր վերաբերմունքի և հայկական հարցի ձախողման մասին, գրում է, որ այդ հարցում հանցավորը Անգլիան է<sup>2</sup>:

Խոսելով արևմտահայերի դեպի ռուսներն աճող համակրանքի մասին, Յր. Դեվ Գրինը գրում է. «Արևելյան թյուրքիայում իմ գտնված շորս տարիների ընթացքում, ես պարզ նկատեցի հայերի անգլիացիների նկատմամբ ունեցած սառնությունը հօգուս Ռուսաստանի, որի մեջ նրանք տեսնում են իրենց օգնության միակն ձգբյուրը»<sup>3</sup>:

<sup>1</sup> «Մեղու հայաստանի», 1878, № 30:

<sup>2</sup> Փ. Դ. Գրին, Армянский кризис и владычество турок, 1886, М., стр. 275.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 276:

«Ինչ վերաբերում է Ռուսաստանին, — գրում է Էմիլ Դիլոնը, — անգամ նրա ամենամոլի հակառակորդները չեն կարող ժխտել այն հանգամանքը, որ նա (այսինքն Ռուսաստանը: — Ա. Ն.) միայնակ թյուրքիայի քրիստոնյա ազգարնակչության համար արել է ավելին, քան կրոպական բոլոր պետությունները միասին»<sup>1</sup>:

\* \* \*

Հայերի մասին Բեռլինի կոնգրեսի որոշումները դատարկ ֆրագներ դուրս եկան: Թյուրքիան ոչ միայն չի մտածում հայերի վիճակի մեջ որևէ բարեփոխություններ մտցնելու մասին, այլ ընդհակառակը, անգլիական նոր տիպի հրացաններով զինելով տասնյակ հազարավոր քրդերի, շերքեզների և լազերի, ծրագրում է նոր արյունալից դատաստան տեսնելու հայերի հետ: Բեռլինի կոնգրեսից քիչ հետո էր, որ թյուրքերն ու քրդերը Վանի հայոց շուկայի վրա հարձակվեցին, թալանեցին ու կրակի տվին: Հայերի նկատմամբ բռնությունները զնալով շարունակվում են նոր թափով, նոր մեթոդներով: Խոսելով հայերի թշվառ վիճակի մասին Կան Մելիճոյմ Մակոլը գրում է. «Ինչ վերաբերում է Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածին, այն մնաց որպես մի մեռած տառ: Թյուրքիան երբեք կրոպական պետություններին չհաղորդեց պայմանագրի իր պարտավորությունների ուղղությամբ կիրառելի միջոցառումների մասին այն հասկանալի պատճառով, որ նման միջոցառումներ իր կողմից բնավ չէին ձեռնարկված: Իսկ պետությունները հաշտվեցին թյուրքիայի կողմից միջազգային պարտավորության նման սուր և ցինիկ կերպով խախտման փաստի հետ: ...Այդ բարձրագույն աստիճանի ամոթի փաստի համար զլխավորապես և բոլորից շատ պատասխանատու է Անգլիան»<sup>2</sup>:

Այնուհետև հեղինակը, բազմաթիվ փաստեր բերելով թյուրքիայի և քրդերի կողմից հայերի նկատմամբ կիրառվող անասելի ոճրագործությունների մասին, գտնում է, որ թյուրքական իշխանությունները ոչ միայն որևէ միջոց ձեռք չեն առնում ոճրագործներին

<sup>1</sup> Эм. Дилон, Положение дел в турецкой Армении, 1886, Москва, стр. 205.

<sup>2</sup> Кан-Мелькольм-Маколы. Ответственность Англии перед Арменией, 1896 г. Москва, стр. 195.

դասելու համար, այլ ընդհակառակը, իրենց պաշտպանության տակ վերցնելով, ավելի քան խրախուսում են նրանց: «Քրիստոնյաների ներկա վիճակը,—գրում է Ռոմեն ժեկմենը,—վառթար է, քան վերջին տարիներում երբեք: Քուրդերը,—թվում է, թե ամենուրեք ուժուն են և բազմաթիվ տեղերում թալանը, կողոպուտը և կանանց հափըշտակումները կատարվում են համարյա առանց պատժի: Քուրդ բեգերը օգտվելով թյուրքական իշխանությունների թուլություններից, երբեմն էլ նրանց աջակցությամբ թալանում, կողոպուտում են խաղաղ ազգաբնակչությանը:... Նրանց ունեցվածքը, կանանց ու աղջիկների պատիվը մի շարք տեղերում հանձնվում է ֆեոդալ բեգերի կամքին»<sup>1</sup>:

Ժամանակի հայ պարբերական մամուլի համարյա բոլոր էջերում կարելի է գտնել թյուրքերի և քրդերի կողմից հայերի նկատմամբ գործադրվող հարստահարությունների, բռնությունների ու ամեն կարգի ոճրագործությունների տխուր նկարագիրը:

Այսպես, օրինակ, «Մշակի» թղթակից Գրիգոր Նիկողոսյանը 1878 թ. մարտի 15-ին էրզրումից գրում է. «Բայց մինչ դեռ դադարեց կսկիծ Բուլղարի համար, վերացավ բռնապետություն, սուր և սարսափ նորա գլխից, դուրս բաշվեցին տաճիկ և շեքեզ նորա երկրից, գերադաստանի ծոցից, Ասիայում թշվառ հանգամանքների շնորհիվ, հայերը մտան մի նոր շրջան՝ ոչ սգի, լացի, բռնության ու ստրկության, այլ նահատակության, կորստյան ու բնաջնջության: Այո բնաջնջության, վասն զի արդեն սրվում են բարբարոսների լաթաղանները Տաճկաստանում մնացող հայերի համար, որոնք տեսնելով իրենց մահը, մնացել են հուսակաուր, բազուկները երկինք տարածած»<sup>2</sup>,

Այնուհետև նամակի հեղինակը բազմաթիվ դեպքեր է նկարագրում հայերի նկատմամբ կիրառվող տաժանակիր շարագործությունների մասին:

Այդ մասին է պատմում նաև Պոլսո «Արագիրը» իր 1878 թ. սեպտեմբերի 19-ի համարում: «Օգոստոսի 30-ի գիշերը,—գրում է «Արագիրը» երբ ուսաները տակավին Կարինում էին, 7 մոլեռանդ տաճիկներ մարսատան հետևը մի խոհարար հայի

տունը մտնելով, վնոջը ամուսնու ներկայությամբ անպատկառությամբ կլլկեն, ամուսնուն ժանր կվիրալորեն և սոււնը կողոպտելով ուրիշ տուն մտնել կվործեն»<sup>1</sup>:

Այս և նման բազմաթիվ դեպքերի տկանատես թյուրքական իշխանության պաշտոնյաները ոչ միայն որեւէ միջոց ձեռք չեն առնում այդ անիրավությունները զսպելու համար, այլ դա համարում են շատ բնական և օրինաչափ երևույթ: Այդ տեսակետից շափազանց հետաքրքրական է էրզրումի վալիի օտար գեսպաններից մեկին տված պատասխանը, երբ վերջինս նրան է դիմում՝ հայերի նկատմամբ մահմեդականների աննկարագրելի վախրագոթությունները հիշեցնելու և պահանջելու, որ նա միջոցների դիմի քրիստոնյաների կյանքն ու գույքը ապահովելու ուղղությամբ: Վալին շափազանց ցինիկ կերպով պատասխանում է. թյուրքերի և հայերի փոխհարաբերությունը—դա ամուսնու և կնոջ հարաբերություն է: Ուստի խորհուրդ է տալիս, կողմնակի մարդկանց դործին շմիջամտել, «քանի որ այդ միջամտությունը փոխանակ կնոջ վիճակը թեթևացնելու, ավելի է ծանրացնում, որովհետև կնոջ հետ դաժան վարվող ամուսինը, եթե ցանկանա, միշտ էլ հարմար ժամանակ և տեղ կարող է գտնել իր կնոջը ծեծելու և վիրավորելու համար»<sup>2</sup>:

Գնալով արևմտահայերի դրությունը անտանելի է դառնում: Թյուրք և քուրդ բեգերը ամենուրեք վրեժ են լուծում նրանցից դատերազմի տարիներին ուսաներին ցույց տված օգնության և համակրանքի համար: Հայերի համար սկսվում է աննկարագրելի փորձությունների մի ժամանակաշրջան: Նրանք ամենուրեք սպասում են ուսաց դորքերի հետ քաշվելուն, հայկական շարդեր կազմակերպելու համար: Արևմտահայերին ֆիզիկական բնաջնջում էր սպասվում: Սպանուցող այդ վտանգից փրկվելու միակ ելքը, ինչպես միշտ, այս անգամ ևս հայերը ուսաց տիրապետության տակ գտնվող շրջանները զաղթելու մեջ են որոնում: Հայկական բազմաթիվ նահանգներից հայերը ուսական հրամանատարություն են դիմում ուսաների տերիտորիան զաղթելու թուլություններն ստանալու խնդրով:

<sup>1</sup> «Արագիր», 1878, № 789, սեպտ. 19:

<sup>2</sup> Эм. Долон, Положение дел в Турецкой Армяни, 1886, Москва, стр. 329.

<sup>1</sup> М. Г. Ролэн-Жекмен, стр. 52.

<sup>2</sup> «Մշակ», 1878, № 51, «Նամակ թյուրքիայից»:

Այսպես ուրեմն, Տիգրանակերտի (Դիարբեքի) հայ բնակիչները 1878 թ. օգոստոսի 10-ին դիմում են ուղարկում գեներալ Լազարյանին, որտեղ ասված է. «...նրանք (այսինքն թյուրքերը և քրդերը) անգե են և անպաշտպան հայերի նկատմամբ ամենուրեք և ամեն կարգի շտված շարագործություններ են կատարում. բռնաբարելով կանանց և աղջիկներին, անխնա սպանելով մեր ազգի թշվառ անդամներին...»: Դիմումը նկարագրում է քաղաքում կատարվող ամենօրյա շարագործությունները և կառավարության անտարբեր վերաբերմունքը, որը ոչ միայն որևէ միջոց ձեռք չի առնում հանցագործների նկատմամբ, այլ ընդհակառակը, ազատ արձակելով շարագործներին՝ ավելի քան խրախուսում է նրանց:

«Ժսկ քաղաքից դուրս, — շարունակում են դիմողները, — նրա ընդարձակ շրջակայքում, ուր ապրում են բազմաթիվ հայ բնակիչներ, անհնարին է նկարագրել այն շարագործություններն ու բռնությունները, որ կատարում են ավազակ քրդերը իրենց ցեղապետների գլխավորությամբ»: Դիմումի մեջ նշվում է նաև հայերի ուսանելիքն ցույց տված օգնությունը և այն հույսերը, որ նրանք կապել էին պատերազմի հաղթական վախճանի հետ: «Բայց ավազ — մեր հույսերը մեզ խաբեցին... Այդ բոլորի համար մեզ սպասում է քրդերի և թյուրքերի կողմից մեր վերջնական բնաջնջումը»: Վերջում խնդրում են Լազարյանին, — հայերին դուրս բերել այդ ստորաբարձ վիճակից, հնարավորություն տալով նրանց գաղթելու ուսանական տիրապետության շրջանները<sup>1</sup>: Գաղթի թույլտվություն ստանալու համար Լազարյանին են դիմում նաև Բալաղետի հայերը<sup>2</sup>: Այդ դիմումը, մենք հայտնաբերել ենք Վրաստանի Պետական արխիվում, կցում ենք այս աշխատությանը որպես հավելված:

1878 թ. օգոստոսի 13-ին Ալաշկերտի ջոկատի հրամանատար գեներալ Կամարովը Լազարյանին ուղարկած իր նամակում գրում է. «Ձերդ գերազանցություն, Իվան Գանիլովիչ: Հենց որ հայտնի դարձավ Բալաղետի և Ալաշկերտի հովիտը նորից թուրքերին է վերադարձվելու, անմիջապես այդ շրջանի ամբողջ հայ ազգաբնակ-

չությունը, նույնպես և Վանի հայերի զգալի մասը ցանկություն են հայտնել մեր տերիտորիան գաղթելու... Այդ մասին պատիվ ունեմ Ձեզ հայտնելու, որ ես, ոչ միայն այդ գործին խանգարելու ոչինչ չունեմ, այլ ձեռք եմ առել բոլոր միջոցները, որպեսզի վերացնեմ այդ հարցի հետ կապված բոլոր դժվարությունները»: այնուհետև Կամարովը խնդրում է Լազարյանին հնարավորություններ ստեղծել հայերին Կարսի շրջանը տեղավորելու ուղղությամբ: «Այդ աշխատասեր ժողովուրդը մեծ օգուտ կարող է բերել ուսանական կայսրությանը<sup>1</sup>, — գրում է Կամարովը: Ժողովրդի նման տրամադրությունների մասին հիշում է նաև գեներալ Գուստովսկին, օգոստոսի 31-ին Լազարյանին ուղարկած նամակում: «Ժողովուրդը ապահովված է մեզ է գտնվում, — գրում է Գուստովսկին, — նա գործնականորեն մտածող է և չի հավատում Բեռլինի կոնգրեսի որոշմանը ու կրոպական պետությունների երաշխիքին: «...Ինձ հարկ է լինում ամեն օր լսել «մինչ օտարերկրացիները կիմանան մեր վիճակի մասին, մեզնից հազարավոր զոհեր կգնան»: Գուստովսկին մի շարք փաստերով հաստատում է մահճակալների կողմից հայերի նկատմամբ կատարվող շարագործությունների և ժողովրդին հանգստացնելու համար իր կողմից արված միջոցառումների մասին: Սակայն, գրում է Գուստովսկին, — ժողովրդին լիովին հանգստացնել հնարավոր չէ<sup>2</sup>:

Օգոստոսի 21-ին Էրզրումի հայ եկեղեցական խորհուրդը դիմում է Պոլսի պատրիարքին, հայտնելով, որ հայերը պատրաստվում են գաղթելու և խնդրում այդ ուղղությամբ շտապ միջոցներ ձեռք առնի<sup>3</sup>: Ուշագրավ է այն փաստը, որ ուսանական ցարիզմը, եթե նախորդ շրջաններում ամեն կերպ շահագրգռված էր հայերի գաղթով և իր աստիճանավորներին ուղարկած հրահանգներում պահանջում էր ամեն կերպ համոզել հայերին ուսանական տերիտորիան գաղթելու, այս անգամ հրահանգում է բոլոր միջոցներով արգելել հայերի մասսայական գաղթը, «որը չի համապատասխանում ոչ արդի իրերի դրությունը, և ոչ էլ պետության տեսակետին»<sup>4</sup>,

<sup>1</sup> Сборник материалов русско-турецкой войны 1877—1878 гг., вып. I, стр. 152—155.

<sup>2</sup> Վրաստանի Պետական արխիվ, ֆ. 1219, գ. 18, էջ 13 (տես ստորև էջ 138):

<sup>1</sup> Сборник материалов, русско-турецкой войны 1877—1878 гг., вып. I, стр. 160.

<sup>2</sup> Նույն տեղում, 162.

<sup>3</sup> Վրաստանի Պետ. արխիվ, ֆ. 1219, գ. 18, էջ 14—15:

<sup>4</sup> Վրաստանի Պետ. արխիվ, ֆ. 1219, գ. 18, էջ 0—1:



Մեր կարծիքով, դա պետք է բացատրել դարձյալ ցարիզմի հետագա նվաճողական քաղաքականությունը: Յարիզմը վախենում էր, որ դրանով կզրկվի հետագայում թյուրքիայի ներքին գործերին միջամտելու, նրա վրա ճնշում գործադրելու հնարավորությունից և տպա գալիք ուս-թյուրքական պատերազմի դեպքում՝ հայերի պես հունալի ու հավատարիմ դաշնակցից:

Փեներալ Լազարեը, ելնելով գլխավոր հրամանատարության կողմից իրեն ուղարկված գաղտնի հրահանգից, հրամայում է Գուխովսկուն և Կամարովին բոլոր միջոցներով ետ պահել հայերին մասսայորեն գաղթելու մտքից, իսկ կարգադրությունը խախտողներին և ինքնագլուխ կերպով սահմանն անցնողներին,—ետ վերագարձնել իրենց նախկին տեղերը: Բացի դրանից, գեներալ Լազարեը մի հատուկ կոչով դիմում է արևմտահայերին, հորդորում է նրանց իրենց տեղերում մնալ, երաշխավորելով նրանց կյանքի ապահովությունը: Օգոստոսի 31-ին և սեպտեմբերի 2-ին Լազարեը երկու անգամ հեռագրում է Իզմայիլ-փաշային, հիշեցնում նրան հայերի սարսափահար վիճակը և խնդրում նրանից միջոցներ ձեռք առնել:

Չնայած Իզմայիլ-փաշան Լազարեին ուղարկած իր պատասխան հեռագրերում խոստանում է բոլոր միջոցներով ապահովել հայերի կյանքը, սակայն հայերը չէին կարող հավատալ, արդեն շատ անգամներ լսած թյուրք փաշայի խոստումներին:

Փնալով լուրերն ավելի տագնապալի են դառնում: Լազարեը սեպտեմբերի 3-ին նորից մի հեռագրով դիմում է իտրասանի և Հասանկալայի ջոկատների պետերին, որտեղ ասված էր. «Թույլ մի տվեք թյուրքիայի տերիտորիայից մեր տերիտորիան գաղթելու. ինքնակամ անցնելու դեպքում ուժով դիմադրել ...և վերագարձնել իրենց նախկին տեղերը...»<sup>1</sup>: Սակայն ոչ գեներալ Լազարեի կոչը, ոչ նրա սպանալիքները, ոչ էլ թյուրք փաշաների ապրիորի խոստումներն ու հավաստիացումները գործին չեն օգնում: Փնալով նախկին լարված վիճակը շարունակվում է: Քրդերը շարունակում են իրենց նախկին բռնություններն ու կոտորածները: Դա էր պատճառը, որ հայերի որոշ մասը, կանգ չառնելով ոչ մի դժվարություն

առաջ, բռնում է գաղթի ճանապարհը: Նախ՝ օգոստոսի 2-րդ կեսերին շարժվել են սկսում Ալաշկերտի հայերը, որոնց հետևում են իտրասանի, էրզրումի և այլ շրջանների հայ գաղթականները, որոնք տեղավորվում են Կարսի և մասամբ Շորադյալի շրջաններում:

Այսպես ուրեմն, 1877—1878 թթ. ուս-թյուրքական պատերազմի անմիջական արդյունքը հանդիսացավ Հայաստանի մի փոքր տերիտորիայի՝ Կարսի միացումը Ռուսաստանին: Իրենց սպանալուց ֆիզիկական բնաջնջումից փրկվեց հայերի շնչին մասը միայն: Հայ ժողովրդի մեծագույն մասը, հնարավորություն և թույլտվություն չստանալով գաղթելու, շարունակում է մնալ թյուրքիայի ստորացուցիչ ու բռնակալ լծի տակ, ենթարկվելով մահամեղականների սոսկալի վրեժխնդրությանը: Ռուս-թյուրքական պատերազմներից հետո հայերը իրենց արլամբ վճարում էին այն օգնության և համակրանքի համար, որ նրանք ցույց էին տալիս որսներին: Սակայն երբեք թյուրք տիրակալների կատաղությունը հայերի նկատմամբ չէր հասել այն աստիճանին, ինչպես 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ և նրանից հետո: Հայերի սիստեմատիկ ոչնչացումը կազմում է այժմ Բ. Գոան պետական վարդապետությունը: Աբգով Համիդը՝ հայ ժողովրդի այդ ճիվաղ զահիճը ամբողջ Եվրոպայի աչքերի առաջ կազմակերպում է հայերի մասսայական և սիստեմատիկ ջարդեր, որոնց ընթացքում սրի մատնվեցին հարյուր-հազարավոր հայեր, իսկ մնացածները, թողնելով իրենց հայրենի օթևանը, օտարության ցուպ վերցրին՝ թափառելով աշխարհով մեկ: Ահա սա էր հայկական հարցի իմպերիալիստական լուծման հետևանքը:

Միայն Սովետական իշխանության հաստատմամբ, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության շնորհիվ էր, որ հայ ժողովրդի մեծագույն մասը փրկվեց ֆիզիկական վերջնական բնաջնջումից:

Սովետական իշխանությունը հնարավորություն ստեղծեց ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերի վերամիավորման համար:

«Հայ ժողովրդի կարիքների և զարգացման նկատմամբ ստալինյան հոգատարությունը է տոգորված Սովետական կառավարության պատմական որոշումը՝ արտասահմանյան հայերի հայրենիքը վերադարձնելու հնարավորություններ արամադրելու մասին, որը

<sup>1</sup> Сборник материалов, русско—турецкой войны 1877—1878 гг вып. 1, стр. 163.

Հանդիսանում է նոր խոշոր հասարակական կոչված «հայկական հարցը» լուծելու գործում, որով տասնյակ տարիների բնթացում սպեկուլացիա էին անում և դեռ փորձում են սպեկուլացիա անել իմպերիալիստական գիշատիչները: Բոլոր հայերի լիակատար վերամիավորումը հանդիսանում է հայ ժողովրդի պատմական իրավունքը և դարավոր իրազորումը» (Գր. Հարությունյան): (Ընդգծումը մերն է: Ա. Ն.):

«Տանջված ու բազմաշարժար Անտանտայի և դաշնակների ողորմածությամբ սովի, հայհամառն ու գաղթի մատնված Հայաստանը այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր: Ո՛չ Անգլիայի, հայկական շահերի «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ո՛չ վիլսոնի տխրահռչակ տասնչորս կետերը, ո՛չ Ազգերի կիզայի մեծաղորդ խոստումները Հայաստանի կառավարման իր «մանդատով»—չկարողացան (և չէին կարող) փրկել Հայաստանը կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից: Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն: ...Թող իմանան բոլորը, ում հարկ է գիտենալ, որ այսպես կոչված հայկական «պրոբլեմը», որի վրա ապարդյուն գլուխ էին շարդում իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը, կարողացավ լուծել միայն Սովետական իշխանությունը: Կեցցե՛ Սովետական Հայաստանը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Правда 1946, 16-го декабря.

<sup>2</sup> Բ. Վ. Սալիև, Երկեր 5. 4, էջ 45—459: (Ընդգծումը մերն է: Ա. Ն.):

ՀԱՎԵԼՎԱԾ

Յ Ո Ւ Ց Ա Կ

1877—1878 թ. Թ. ուս-ընթացի պատերազմի ճարտարական կազմակերպված միլիցիայի գործառնքի, որոնք երկու են կամ հայկական կամ խառը հայ-ադրբեջանական և հայ-վրացական<sup>1</sup>

Զորամասերի անունը	Կոմսկի կոմսկի փորձան սկիզբը	Վերջնական կոմսկի փորձան ժամկետը	Համարակալման ժամկետը	Նշանակման տեղը նույն ժամկետը	Նշանակման տեղը նույն ժամկետը	Գործող կորպուսի գլխ. ուժերը
Ալեքսանդրապոլի հեծյալ անկանոն զորքի (հայեր)	30/11—76 թ.	1/2—77 թ.	Ալեքսանդրապոլ	Ալեքսանդրապոլ	—	—
Վրացական ազնվականական հեծյալ անկանոն զորք (վրացիներ և հայեր)	14/12—76 թ.	25/2—77 թ.	Քիզիլիս	—	—	—
Ախալցխայի հեծյալ անկանոն զորքի (հայեր)	14/12—76 թ.	15/2—77 թ.	Ախալցխա	Ախալցխա	—	—
Բորչալուի հեծյալ անկանոն զորքի (հայեր և ադրբեջանցիներ)	15/1—77 թ.	29/1—77 թ.	Բեկի-Կյուչ	Ալեքսանդրապոլ	—	—
Զաքարյայի հեծյալ անկանոն զորք (հայեր)	2/4—76	1/2—77 թ.	Զաքարյայ	—	—	—
Ելիզավետպոլի հեծյալ անկանոն զորք (ադրբեջանցիներ և հայեր)	18/1—77 թ.	20/3—77 թ.	Ելիզավետպոլ	—	—	—
Երևանյան ազնվականական հեծյալ անկանոն զորքի (հայեր, ադրբեջանցիներ)	2/4—77 թ.	—	Երևան	—	—	—
Բաքվի ազնվականական հեծյալ անկանոն զորք (հայեր և ադրբեջանցիներ)	—	—	Ալեքսանդրապոլ	—	—	—

<sup>1</sup> ЦГВИА ВУА № 39/405 л. л. 1—2

ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ  
ԶԵԿՈՒՑՈՒՄ

ԱՍԻԱԿԱՆ ՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ  
ՇՏԱԲԻՑ

6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1878 ՆՑ 31

ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՀԱՊԱՏԺԻ  
ԵՆԹԱՐԿՎԱԾ ԶԻՔՆԻ ԳՅՈՒՂԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏԶՅԱՆԻ  
ԸՆՏԱՆԻՔԻՆ ԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Շորադյալի շրջանի Զիրնի գյուղի բնակիչ Մկրաչյան Հարութը, որը պատվավոր դիրք էր զբաղում շրջանում, նշանակալից ծառայություն է մատուցել մեր կառավարությանը ինչպես 1853—1856 թվի կամպանիայի ընթացքում, որի համար պարգևատրվել է արծաթե մեդալով, այնպես էլ ներկա պատերազմում: Մասնավորապես մեծ օգուտ է տվել մեզ անցյալ գարնանը մեր զորքերի կողմից Կաղզվանը զրավելու ժամանակ, համոզելով տեղական բնակչությանը անձնատուր լինելու առանց դիմադրության. միաժամանակ հանձնելով թուրքերի կողմից նրանց բաժանված զենքեր:

Մեր կառավարության նկատմամբ նման նվիրվածության համար թուրքական իշխանությունների կողմից ենթարկվել է պատասխանատվության, որի գույքը հափշտակել են, իսկ իրեն տանջամահ արել:

Մկրաչյանի սպանվելուց հետո առանց որևէ գոյություն միջոցների մնացել են նրա կիներ՝ Շողակաթը և երկու տղաներ՝ Նահապետ և Մկրտիչը:

Նորին կայսերական Մեծության կովկասյան զորքերի պլեսավոր հրամանատարը արդարացի համարելով վերոհիշված ընտանիքին նյութապես բավարարումը միջնորդում է ամենաողորմածության թույլատրությունը պետական գանձարանից նրա երկու որդիներին ինչպես և այրուն յուրաքանչյուրին տարեկան 100 ռուբլու շափով թոշակ նշանակելու<sup>1</sup>:

<sup>1</sup> Այս միջնորդությունը հարգվում է և Մկրաչյանի ընտանիքին ցմահ թոշակ է նշանակվում տարեկան 300 ռուբլու շափով: ЦГВИА, ф. 400, отд. Азиатский, оп. 261/911, д. 39 л. л. 6—7.

ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ  
ԶԵԿՈՒՑՈՒՄ

ԱՍԻԱԿԱՆ ՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ  
ՇՏԱԲԻՑ

1875 թ. 6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ Մ 32

ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՀԱՊԱՏԺԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՔԱՐԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱՅԻ ԱՍՈ ՀԱԿՈԹՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կաղզվանի շրջանի Քարավանք գյուղացի Ասո Հակոբյանը թյուրքիայի դեմ պատերազմ սկսելու հենց առաջին օրվանից դործող կորպուսի առաջավոր ջոկատներին սխտեմատիկ և ճիշտ տեղեկություններ է հաղորդել հակառակորդի վիճակի մասին. մասնավորապես մեծ ծառայություն է մատուցել, մեր ջոկատի կողմից Կաղզվանը զրավելու ժամանակ: Մեր կառավարության նկատմամբ նման նվիրվածության համար Ասո Հակոբյանը թուրքական իշխանությունների կողմից հետապնդվում է և տանջամահ արվում: Ասո Հակոբյանի մահվանից հետո ծայրահեղ աղքատության մեջ են գտնվում նրա կիներ և 5 փոքրահասակ երեխաները, որոնցից կիներ և 3 երեխաները հաշմանդամներ են<sup>1</sup>:

<sup>1</sup> Այս միջնորդությունը հարգվում է և Ասո Հակոբյանի ընտանիքին ցմահ թոշակ է նշանակվում տարեկան 250 ռուբլու գումարի շափով: Ա. Ն. ЦГВИА, ф. 400, оп.—261/911, отд. Азиатский, д. 39 л. л. 8—9.

ԿԱՐՍԻ ԸԱՅԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԳԻ ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ԿՈՐԽՄԱԶՅԱՆԻ  
ԿՈՂՄԻՑ ՌԻՂԱՐԿՎԱՅ ՆԱՄԱԿԸ: ԳՈՐԾՈՂ ԿՈՐԳՈՒՄԻ ԸՐԱՄԱՆԱ-  
ՏԱՐՈՒԹՅԱՆԸ

Ամենաողորմած թագավոր.

Մշտապես աղոթում եմ աստծուն թշնամու նկատմամբ Ձեր հաղթանակի համար:

Այժմ Կարսում գտնվում է 29 թարր (գումարտակ) զորք: Կարսից Սողանլուղ մեկնեցին Մուշիր-փաշան և Ֆեիկ-Մուլլի փաշան իրենց հետ վերցնելով ութը թարր և 4 թնդանոթ: Այնտեղ սպասում են նաև Շամիրի որդուն, որը պետք է ժամանի իր շերքեղներով և նա ոչ թե Կարսը պետք է պաշտպանի, այլ մտադիր է ուսական ճամբարի վրա հանկարծակի հարձակում գործելով խուճապ առաջացնի զորքերի մեջ:

Կարսի բնակչությունը դեմ է պաշարմանը: Ապրիլի 16-ին թուրքական կանաչք հարձակվեցին Մուշիրի տան վրա, ջարդեցին դռները, լուսամուտների ապակիները և բարձր ձայնով հայհոյելով ներքան պահանջում էին դուրս գալ քաղաքից և ուսաների հետ ճակատամարտ տալ բաց դաշտում, այլապես, հակառակ դեպքում պաշարման ընթացքում նրանք սովի կմատնվեն:

...Կարսի կայազորի պաշարը հազիվ թե շորս ամիս բավարարի այն էլ միայն հացով, իսկ միս չուղ և այլն արդեն այժմվանից չկա: Կարսի ազգաբնակչությանը հին սիստեմի 4500 հրացան է բաժանված, այդպիսի հրացաններ բաժանված են նաև շերքեղներին, որոնք ի միջի այլոց ցվրվել են իրենց տները:

Կարսի կայազորի մեծ մասը տեղավորված է Թովմաս Չոխամարի և Մուշլիսի ամրություններում, որը և հանդիսանում է բերդի հիմնական ուժը:

Շուկայում հայերը և թաթարները փակել են բոլոր խանութները և տները, թուրքական թղթադրամը շրջանառության մեջ չի ընդունվում: Ալլուրի բեթմանը բարձրացել է մինչև 15 դուրուշի և անգամ այդ գնով դժվար է ձեռք բերել:

Պատերազմի սարսափը ընդգրկել է այստեղի բոլոր բնակիչներին և եթե այդ շարունակվի թեկուզ մեկ ամիս այդ դեպքում քաղաքում ամեն ինչ տակն ու վրա կլինի: Հենց այժմ էլ տագնապն

<sup>1</sup> ЦГВИА. ф. № 1219, д. № 25, л 3—4.

այնքան ուժեղ է, որ կրակոցի ձայնը ընդհանուր խառնաշփոթություն է առաջացնում:

Կազդվանի բնակչությանը բաժանված է 200 հրացան փամփուռաներով: Այդ շրջանում զորքեր բոլորովին չկան, եթե մտադիր եք ջոկատ ուղարկելու Կազդվան, լավ կլինի սկզբից Զաֆար աղի որդու միջոցով մի մարդ ուղարկել Ռաշիդ բեկի մոտ, որից հետո զորքերը նոր թող գնան... Այդ դեպքում ես հավատացնում եմ, որ քաղաքը անձնատուր կլինի... Ձեր փախստական շերքեղներն ամեն օր այստեղ գալով պատմում են, որ նրանք սպասում են Շամիրի որդուն, որպեսզի միանան թուրքերի հետ ուսաների դեմ:

Խզնաձորի բնակիչ Հաջի-Վալի-օղլուն շվատահեք ոչ մի դեպքում, նրա մարդիկ ամեն օր գալիս են Կարս և մանրամասն տեղեկություններ են հաղորդում Ձեր մասին:

Էրզրումից այստեղ է ուղարկվել զգալի քանակությամբ սուխարի, որը տեղ կհասնի 3—4 օրից հետո:

Մուշում, Բիթլիսում և Բասենում հավաքած զորքերը համարյա բոլոր փակել են: Այս նամակաբերը... Ռաշիդ բեկի եղբայրն է, որին անվանում են Հուսեյին բեկ: Խոնարհաբար խընդրում եմ նրան պատվով ընդունել և խոստումներով իր եղբոր մոտ ուղարկել, որը շափազանց օգտակար է մեզ համար: Նա այժմ ինձ մոտ է գտնվում և այս նամակի վրա գրել է իր կնիքը: Խնդրում է ձեզ այն մասին, որ իրեն ազգականներ Խորթորեյի տղա Աշար աղին և Ավդի աղայի որդի Հաջի-Ահմեդ աղին որևէ պաշտոն տաք:

Ձեր ԾԱՌԱՆԵՐ, Խ. ԿՈՐԽՄԱԶՅԱՆ,  
ՄԱԳՈ-ԲԵԿ-ՉԱԳԵ-ՌԱՇԻԳ-ԲԵԿ (Կ. Տ.)

22 ապրիլի 1877 թ.

Այս նամակը կազմված է Հայկական եպիսկոպոսի և մեր գործակալ Խաչատուր Կորխմազյանի կողմից... և որը գիշերը Կարսից քերել է Ռաշիդ բեկի եղբայր՝ Հուսեյին բեկը:

Իսկականի հետ ճիշտ է գրասենյակի կառավարիչ  
Գեդապետ Չերեանակի  
ճիշտ է Սուլխնովա

(Թարգմանված պարսկերենից)

№ 1

Մեծահարգո իմ պարոն, ամենից առաջ ցանկանում եմ Ձեզ սղջունել. երկրորդ՝ ես երեկ Մուշիրի հետ միասին եկա այստեղ: Կառավարության և ժողովրդի կողմից ինձ հանձնարարված է կովկասյան երկրի ապահովության մասին հոգալու: Ահա թե ինչու, այս նամակով հայտնում եմ Ձեզ, որ պետությունների միջև անձնատուր լինելը ամոթ չէ, բայց մնալ այդտեղ (միջնաբերդում: Ա. Ն.) ստորացուցիչ վիճակում ձեզ համար լավ չի բոլոր տեսակետից: Ես խոստանում եմ Ձեզ, որ պետությունների միջև գոյություն ունեցող կարգի համաձայն Ձեզ և ձեր բոլոր սպաներին լիակատար հարգանք և հոգատարություն ցույց կտրվի և ոչ սրի կողմից ոչ մի վիրավորանք Ձեր նկատմամբ տեղի չի ունենալու:

Հույսով եմ, որ ոչ Ձեզ և ոչ էլ ձեր զինվորներին նեղություն չեք պատճառի անձնատուր կլինեք և դրանով ինձ, Ձեր սարուկին կպարտավորեցնենք, եթե կընդունեք իմ բարեկամական խորհուրդը, այդ դեպքում ինձ մտա ուղարկեք սուլթան Փիր-Մուրադի որդի Շիր-Ալի բեկին, կամ դաուդիներից որևէ մեկին, որպեսզի այստեղ համոզվելով ամեն ինչում նորից վերադառնա ձեր դերապատվության մաս:

Դադստանի շեխ Շամիլի որդի, Ֆերիկ Ղազի Մահմեդ փաշա-

Տեր-Ղուկասովը լիակատար պարտություն կրելով... դեպի Երևան է փախչում. փառավոր հաղթանակներ ունենք նաև Կարսի կողմում: Երգվում եմ աստծու անունով, որ այս հաղորդածներում որևէ անճշտություն չկա:

7 հունիսի 1293 (1877 թ.) Կնիքը Մահմեդ Փաշայի անունով է:

<sup>1</sup> ЦГВИА, ф. 213 № 21, л. л. 34—35.

Բայազետի կայազորի պետի 1877 թվի հուլիսի 4-ի № 116  
զեկուցագրից<sup>2</sup>:

«...Մեր վերջին դիրքերից նահանջելու ժամանակ բազաբի փո-  
զոցներից, տներից մեզ վրա կրակ էին արձակում աղամարդիկ  
նույնիսկ կանայք: Մինչ 6-ի երեկոյան բերդի ներքին բազը  
գտնվում էր շրջակա բարձունքներից տեղացող կրակի տակ: Գի-  
շերը բազաբն իրենից մի սոսկալի տեսարան էր ներկայացնում,  
որից զինվորները լաց էին լինում: Քրդերը սրի էին մատնում խա-  
ղաղ բնակչությանը, աղամարդկանց, կանանց, երեխաներին և  
անգամ կենդանի մարդկանց կրակի մեջ էին գցում: Ամբողջ բազա-  
բը գտնվում էր բոցերի մեջ, ամենուրեք աղմուկ, ձիչ, լաց ու հա-  
ռաչանք էր լսվում: Այդպես շարունակվեց երեք զիշեր: Առաջին  
գիշերը մոլեգնում էին միայն քրդերը, իսկ երկրորդ և երրորդ գի-  
շերները քրդերի հետ միասին նաև թուրքական կանոնավոր բանա-  
կի զինվորները ինչպես և բուրդ կանայք:

Հուլիսի 8-ին Չրետանու երեսուր հետ միաժամանակ հակա-  
ռակցորդ զորհի նետվեց, սակայն հանդիպեց մեր կայազորի զի-  
պուկ և սեղմ կրակին, այնպես որ երկրորդ ժամի վերջին մեր  
թնդանոթները կարտեչից անցան սովորական արկերի: Նահանջելուց  
հետո հակառակորդը բերդի մոտերքում թողեց շուրջ 300-ից ավելի  
զիակներ: Երկու զիշեր սպանվածներին հավաքելու փորձեր կատա-  
րելու ընթացքում նոր զոհեր էին տալիս: 3-րդ օրը ես նամակով  
հակառակորդին հայտնեցի, որ զիակները հավաքելու ժամանակ  
մեր կողմից ոչ մի կրակ չի արձակվի:

Պաշարման ընթացքում օրերը մեկը մյուսի նման էին. միջնաբերդի  
շրջակա բարձունքներից գնդակներ էին տեղում, իսկ հունիսի 8-ից

<sup>1</sup> ЦГВИА, ф. № 51, л. л. 56—60.

<sup>2</sup> Չեկուցումը սկսվում է Բայազետի վրա թուրքերի և քրդերի կա-  
տարած հարձակման մանրամասն նկարագրությունից մինչև բերդի պաշա-  
րումը և պաշարման ընթացքում կայազորի հերոսական զիմադրություն և  
նրա ծանր դիմակի մասին: Մենք այստեղ բերում ենք զեկուցման միայն  
մի մասը: Ա. Ն.

շուրաքանչյուր օր թնդանոթային 40—80 արկեր, առաջին շորս օրը լեռնային թնդանոթներից, իսկ մնացած ժամանակ նաև 6 րմ. թնդանոթներից:

...Պաշարման ընթացքում ամենաժանր դրուժյան մեջ էին գտնվում հիվանդները, հատկապես ջրի պակասության պատճառով: Նրանք ոչ բոլոր դեպքերումն էին տաք ճաշ ստանում, վերքերը լվացվում էին միայն առաջին երեք օրը. մաքրելու հնարավորություն չունենալով փաթաթանները շատ ուշ ուշ էին փոխվում: Սակայն չնայած այդ պայմաններին բժիշկների հոգատարության շնորհիվ ջրի պակասը մեղմացնող միջոցներ գտնվեցին, այդ բոլորի հետևանքով կանխվեց վտանգավոր ֆլիդեմիայի զարգացումը և այդ դժվարին պայմաններում պաշարման 23 օրվա ընթացքում վիրավորների մոտ շորս գանգրենայի դեպք է հայտնաբերվել միայն:

...Ամենից շատ զգացվել է ջրի պակասը, մեր կողմից կատարված ջրի պաշարը բավականացրեց միայն 5—6 օր, գինվորներին տալով առաջին երկու օրը մեկական բաժակ, շորրորդ օրը օրեկան կես բաժակ, իսկ հիվանդներին օրեկան երկու բաժակ: Միջնաբերդից 300 բալլի վրա հասող դետակից ջուր հայթհայթելու փորձերը ամեն անգամ 5—10 մարդկային կյանք էր արժենում: Այդ ջուրը չափազանց անախորժ համուներ, իսկ երկրորդ օրվանից նրանից հոտած գիակների հոտ էր գալիս ... որովհետև թյուրքերը ամեն օր ջուրն էին նետում մարդկանց և սատկած անասունների նեխած գիակներ: Պաշարման ամբողջ ընթացքում անձնատուր լինելու մասին 9 առաջարկ է արվել ինձ, առաջին երեք նամակներում հրաժարվելու դեպքում մեզ սպառնացել են ոչնչացնել շխնայելով ոչ ոքի, իսկ հետագա առաջարկները գնալով մեղմացել են, սակայն բոլոր դեպքերումն էլ պահանջել են զենքերը հանձնել:

Առաջին առաջարկին պատասխանել եմ գրավոր թույլ տալով միայն իրենց գիակները հավաքելու, երկրորդ և երրորդին պատասխանել եմ կորեկտորեն ողջունելով փաշային, շորրորդին առհասարակ շեմ պատասխանել և հրամայել եմ գրաբերին կախել, այնքան որքան որ նա դուրս եկավ նախկին պարեո ենթագնդապետ Կովալեսկու սուրհանդակը: Հետևյալ շորս առաջարկներին նորից ևս պատասխանել եմ կորեկտորեն ողջունելով փաշային, միաժամանակ խնդրել, որ այդ հարցով ալլևս մեզ չանհանգստացնեն, վերջին և ամենաշահավետ առաջարկին պատասխանել եմ՝ **ՇՅՈՒՆՎԻՉ**

այդքան ցանկանում եք գրավել միջնաբերդը, վերջերք այն ուժով: Թուաները կենդանի չեն հանձնվի: Բանակցելու համար ձեր կողմից ուղարկված առաջին իսկ մարդին կհրամայեմ գնդակահարել:

...Կայսրորդ միջնաբերդում փակվելուց առաջ, բաղկացած էր հինգը շտ. սպաններից, 30 օրեր սպաններից, 126 ունտեր սպաններ և 1461 շարքայիններից: Հունիսի 6-ից մինչև 29-ը ընկած ժամանակաշրջանում շարքից դուրս են եկել սպանված 2 շտ. սպաներ, 9 ունտեր սպաներ, 108 շարքային: Վիրավորված են 8 օրեր սպաներ, 17 ունտեր սպաներ, 142 շարքայիններ, շարքում մնացել են 3 շտ. սպաներ, 21 օրեր սպաններ, 100 ունտեր սպաններ և 1211 շարքային:

Սպանված են նորին կայսրական մեծության մեծ իշխան Անդրեյ Միխայլովիչի Ղրիմյան 3-րդ հետևակային գնդից ենթագնդապետ Պացելիչը և 74-րդ Սևաստոպոլյան հետևակային գնդից ենթագնդապետ Կովալեսկին:

Վիրավորված են 74-րդ Սևաստոպոլյան հետևակային գնդից կապիտաններ Գիդուլյանովը և Կոլոսովսկին, սրտապարուշիկներ Թերեխինը և Սոկոլովսկին, հոսպերյան 2-րդ կազակային գնդից հարչուրապետ Բելլիչը. առաջին Ումանյան կազակային գնդից խորունի իշխան Զորջաձեն, Երևանյան հեծյալ անկանոն գնդից Աման-խան Նախիջևանսկին և Ելիզավետոպոլյան հեծյալ գնդից պրավորչիկ Բաղդասարյանը:

Բալագետի պարեո կապիտան ՇՅՈՒՆՎԻՉ

ԳԵՆԵՐԱԿ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎԻ ԵԱՄԱԿԸ ԳԵՆԵՐԱԿ ՊԱՎԼՈՎԻՆ  
ԳԱՀԱՐԻ ՔԱՄԱՐԱՐԻՑ ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՆ՝

Բայազետից ծախյալ կերպով այսօր այստեղ հասավ թարգմանիչ Սամսոն Տերպողոսյանը, որը Բայազետի դրոմբյան մասին հայտնեց ինձ հետևյալը.

1. Մեր կայազորը (6 վաշա հետևակ, երկու թնդանոթ և երեանյան հեծյալ անկանոն զնդի երկուհարյուրակ) հունիսի 6-ին իմանալով մեծ քանակությամբ քրդական հրոսակախմբերի մոտեցման մասին, ուղարկում է երկու վաշա հետևակ մեկ հարյուրակ կազակներից և երեանյան զնդից զնդապետ Իզմայիլ խանի հրամանատարությամբ: Հանդիպելով թշնամու անհամեմատ դերազանց ուժերին, ջոկատը նահանջում է դեպի քաղաք և շուտով միանում միջնաբերդում մնացած զորքերի հետ, այդ մարտերի ընթացքում սպանվում է Սևաստոպոլսյան զնդի գումարտակի հրամանատար ենթազնդապետ Կովալեսկին, որի դիակը տեղափոխում են միջնաբերդ: Կայազորի նահանջից հետո հակառակորդը նույն օրը երեկոյան ներխուժում է քաղաքը և գրոհում միջնաբերդը, սակայն հետ է շարժվում մեծ կորուստներով: Այդ օրը երեկոյան հակառակորդը հավաքել էր շուրջ 8000 մարդ, որից 1000 հոգի կանոնավոր զորքեր: Հարձակման առաջին օրը քանդվում է միջնաբերդի միակ ջրատար խողովակը, սակայն զինվորները հասցնում են որոշ քանակությամբ ջուր պաշարել, որը բավականացնում է մոտավորապես մինչ ամսի 17-ը:

2. 7-ին շարունակվում է կանանազան և հրաձգությունը, սակայն հակառակորդը միջնաբերդին մոտենալ չի կարողանում...

3. Ամսի 8-ին հրաձգությունը շարունակվում է, որի ընթացքում թեթև կերպով վիրավորվում է Բայազետի օկրուգի զորքերի հրամանատար ենթազնդապետ Պացելիչը: Կայազորի հրամանատարությունը հանձնելով կապիտան Շտոկովիչին:

4. Ամսի 9-ին հակառակորդը քաղաքի նախկին պարետ Ալի Քամալ փաշայի գլխավորությամբ պառլամենտյոր է ուղարկում զնդապետ Իզմայիլ խանի հետ բանակցություններ վարելու բերդը հանձնելու մասին: Սպաները պառլամենտյորի առաջարկին պա-

ЦГВИА. ф. 134 А. л. 48796 л. л. 23—25.

տասխանում են ծաղրանքով և որոշում են մինչ վերջին հնարավորությունը դիմադրել և ձեռքի պաշարումը ինչ զնով էլ ուղում է լինի դուրս գալ միջնաբերդից:

5. Ամսի 10-ին դրոմբյունը մնում է անիոփոխ. նույն օրը երեկոյան հարձուգանքը փոխած պարսպից ցած են իջեցնում թարգմանիչ Սամսոն Տերպողոսյանին, որը օնցնելով մեծագույն վտանգներով համնում է Սուրբ Հովհաննես:

6. Հակառակորդի 1000-ից ավելի դիակներ փոխված են մնում բերդի պատերի տակ: Մեր կորուստները կազմում են մոտավորապես 100 հոգի, բացի դրանից հակառակորդին հաջողվում է հափըշտակել կազակային բոլոր ձիերը: Կայազորը համակված է մեծ եռանդով և քաջությամբ:

7. Հենց այժմ կրկին անգամ հրաման ուղարկեցի Քել Բալի խանին իր տրամադրության տակ եղած ուժերով անմիջապես դեպի Բայազետ շարժվելու, այնպես որ թարգմանիչի տեսելով թեկուզ փոքր քանակությամբ զորքերի երևալը թշնամու թիկունքում նրան փախուստի կմատնի:

8. Վերոհիշյալից ելնելով նորին Մեծության թույլտվությունն եմ խնդրում Սամսոն Տերպողոսյանին սպայական առաջին աստիճան շնորհելու և կրտսեր աստիճանների համար սահմանված զինվորական առաջին կարգի շքանշանով պարգևատրելու համար:

ԳԵՆԵՐԱԿ ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ

14 հունիսի 1877 թ.

Ժամանակավորապես ինձ մտա դռնվող ենթազնդապետ Եղի-  
գարովը, կապիտան Չարկովսկին և շտաբային կապիտան Զավրինը  
նշանակվում են՝ առաջին երկուսը լինելու են ինձ մտա, իսկ վեր-  
ջինը գեներալ-մայոր Ալխազովի զորասյունում:

Որպես թարգմանիչներ և ուղեկիցներ յուրաքանչյուր զո-  
րասյուն նշանակվում են ներքոհիշյալները.

Գեներալ-մայոր Կամարովի զորասյունում  
ուղեկցող Աճմեդ-աղա  
թարգմանիչ Բարսեղյան

Իշխան Մելիքովի զորասյունում  
ուղեկցողներ Օմեր Խալիմ օղլի  
Աբգուրխաման

թարգմանիչ Սոլոմոնով

Գրաֆ Գրաբեյի զորասյունում  
ուղեկցողներ Գայո Սուքիասով  
Արուս Կիրակոսով  
թարգմանիչ Բեգլար Թաթոսով.

Գնդապետ Վաթղակինի զորասյունում  
ուղեկցող Բարվութ Հարութով  
թարգմանիչը կնշանակվի հետո.

Գեներալ-մայոր Ալխազովի զորասյունում  
ուղեկցող Խեչո  
թարգմանիչ Պետրոս Տեր-Պետրոսյան

Գեներալ-մայոր Կամարովի և իշխան Շչերբակովի նախկին  
ջոկատներում եղած հեծելազորը բաշխվում է գեներալ-լեյտենանտ  
Ռոպպի հայեցողությամբ և հնարավորին չափ վճռական գործողու-  
թյուններ է զարգացնում գեներալ-լեյտենանտ Ճավճավաձեի հրա-  
մանատարությամբ:

Կարսի պաշարողական ջոկատի հրամանատար  
Գեներալ-լեյտենանտ՝ ԼԱԶԱՐԵՎ

Նորին գերազանցության գեներալ-լեյտենանտ Լազարեանի  
խոնարհաբար հայտարարի ի դիմաց հայ-հասարակության Հին-  
Պայագետի:

Գիտնալով Հին-Պայագեթի հայ-ժողովուրդն որ Պերլինի կոնգ-  
րեսի վճռույն համեմատ Հին-Պայագետը վերագործնում է թյուր-  
քիային, որով և նորեն այն բարբարոս հին դրացի տաճիկները,  
որոնց ձեռքով այնչափ սոսկալի շարիքներ կրեցինք... նրանք  
դրացի շունենալու համար, Հին-Պայագեթեն Ղարս գաղթելու հաս-  
տատա որոշումով 108-են մինչև 140 ստորագրություն կրող աղեր-  
սագրով ի Մուսուն գեներալ Կամարովին դիմեցինք, որից հրա-  
ման ընդունելով Ձերդ բարձրութ ղիմելու այս մասին, ահա բոլոր  
ժողովրդյանս կողմե պատգամավոր ընտրած չորս անձինք ներկա-  
յացնում ենք Ձերդ գերազանցության Կամարովի գրով հանդերձ,  
խնդրելով համաձայն հայ-ժողովուրդքս Հին-Պայագեթի, որ մեր  
թշվառ վիճակին գթալով տեղի հրամայեք բնակեցնելու մեր ժո-  
ղովուրդը ի Ղարս, օգնել խնդրելով խոնհարաբար նաև մեր թալված  
ժողովուրդյան մեջ դռնվող անտեր և անճար բազմաթիվ աղքատ-  
ներուն Պայագեթից Ղարս տեղափոխելու համար, այսու ամեն  
գաղթող ժողովուրդքս իր բնակության մեջ թողնում է 10-են ավել-  
ի շախրներ անկից զատ ջաղացներ, բաղեր, արտեր, չուխքներ,  
ոչխարի ձմեռային գոմեր, յոնջալղներ, տներ և դյուքեններ, սրանց  
համար, ինչ տնօրինություն ընելը հանձնելով Ձերդ բարձր կառա-  
վարության. մնամբ խոն. հայ-ժողովուրդը Հին-Պայագեթի:

Ստորագրություններ.

■ Վրաստանի Պետական անխիվ. ֆ.—1219, գ. 18, էջ 13:

1 ЦГВИА, ф.-Б 21/м 34, л. л. 549—550.



Յ Ա Ն Կ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Մ ա ռ Բ ա ի գ մ ի կ լ յ ա ի կ ն ե ռ

1. *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., т. I, 1938, т. IX, 1932, т. XVI, ч. II, 1936, Москва.
2. *В. И. Ленин*, Соч., т. XV, 1930, т. XVIII, 1929, Ленинград.
3. Ի. Վ. Սալիև, *Մարքսիզմ և ազգային զագոթային հարցը, 1938, Երևան:*
4. Ի. Վ. Սալիև, *Երկեր, հ. 4, 1948, Երևան:*

Ա ռ խ ի վ ա յ ի ն փ ա ս ա թ ղ թ ե ռ (նյութեր)

1. Հայկական ՄՍԻՒ Պետական կենտրոնական արխիվ (Երևան)
  - Ֆ. 57, գործ 157, 159, 309:
  - Ֆ. 320/102, գործ 126:
  - Ֆ. գործ բաղվածքներ—339:
  - Ֆ. № գործ 1:
2. ЦГВИА (Москва №) Պետական կենտրոնական ռազմա-դատական արխիվ
  - Ф—ВУА д. 4719, 1876, 48796, 7169, 46760, 48816, 40539, 39/405
  - Ф—Б—213, дело 51, 57, 34.
  - Ф—134 А—дело 48796.
  - Ф—400 дело—261/911.
3. Վրացական ՄՍԻՒ Պետական կենտրոնական արխիվ (Թբիլիսի)
  - Ֆ.—5—գործ—32333/116, 10/1444:
  - Ֆ.—1219—գործ 18, 31, 40, 57:

Հ Ր Ա Տ Ա Ր Կ Վ Ա Ծ Փ Մ Ա Տ Ա Ր Գ Ր Ե Ր

4. Акты, собранные кавказской археографической комиссией  
Том II, 1868 г., Тифлис.  
Том VII, 1878 г. Тифлис.  
Том XI, 1885 г., Тифлис.

5. Собрание актов, относящихся к обозрению истории Арм. народа,  
ч. II, 1833 г., Москва.
6. Сборник турецких документов о войне 1877—1878 г. г., СПб, 1879 г.
7. Сборник материалов русско-турецкой войны 1877—1878 г. г., вып. I  
1903 г., СПб.
8. Материалы для описания русско-турецкой войны 1877—1878 г. г. под  
редакцией Чернявского, 1908 г., Тифлис.

Պ ա ռ Բ ե ռ ա ի կ ն ե ռ

9. «Մշակ», 1876 թ. № 24, 27, 30, 33, 38:  
1877 թ. № 3, 5, 18, 46, 75, 77, 83, 84, 85:  
1878 թ. № 7, 9, 14, 30, 40, 41, 48, 51, 52, 117, 131, 132, 142, 151, 204:  
1879 թ. № 20, 107:
10. «Սովետական Հայաստան», 1937 թ. 24 օգոստոսի:  
1941 թ. 28 մայիսի:
11. «Правда» 1920 г., 4-го декабря.
12. " " 1935 г., 28-го ноября.
13. " " 1946 г. 16-го декабря.
14. «Исторический вестник» 1915 г. июль.
15. «Военный сборник» 1877 г. № 9 и 10.  
1880 г. № 7.
16. «Русская старина» 1896 г. июль.  
1888 г. февраль, май, июнь.  
1889 г. январь.
17. «Մեզու Հայաստանի» 1877 թ. №№ 27, 30, 38:  
1878 թիվ № 30:
18. «Արագիր» 1878 թ. թիվ 780, 789, 821, 823:
19. «Փորձ» 187 թ. 2-րդ զեբբե:  
1877 թ. 3-րդ զեբբե:
20. «Հովիտ» 1914 թ. №№ 44, 46, 48, 49:
21. «Արևելյան Մամուլ» 1875 թ. հոկտեմբեր:  
1877 թ. ապրիլ:  
1877 թ. օգոստոս:

Պ ա Տ մ ա կ ա ն ու ս ու մ ն ա ի ռ ու թ յ ու ն ն ե ռ և ա յ լ ա շ Ե խ ա ս ու թ յ ու ն ն ե ռ

22. Ան, Գրեգոր Արծրունի, հ. 1, 1903, Թբիլիսի, հ. 2, 1905, Թբիլիսի:
23. » Թուրքահայ հեղափոխության զաղափարականությանը, 1935, Փարեղ:
24. » Հայոց հարցի վավերագրերը, 1915, Թբիլիսի:
25. Սարգիսան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թյուրքիայում, 1912, Թբիլիսի:

26. Ասով, Բարենորոգումների հարցը, 1914, Կ. Պոլիս:
27. Պր. Քուսանյան, Պատմություն Արևելյան ինչրոս և առաջնորդ հայկական հարցի, 1905, Լոնդոն:
28. Ա. Անսոնյան, Ընդարձակ պատմություն պարսկանյան պատերազմի, 1912, Պոլիս:
29. Մ. Կարանյան, Անտիպ երկեր, 1935, Երևան:
30. Ն. Կեղամյան, Հայերի ազատագրական շարժումները ժԹ դարում, 1915, Բարու:
31. Մինաս Չերազ, Ինչ շահեցանք Բեռլինյան վեճածոցովն, 1878, Պոլիս:
32. Սալ-Ման, Ռուս տանկական պատերազմը և նրա հայ ազգի հերոսները, 1914, Թիֆլիս:
- + 33. Պարսամյան, Յարիզի գաղութային քաղաքականությունը, 1940, Երևան:
- + 34. » Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը, Ակադեմիայի Տեղեկագիր, 1947 թ. № 11—12:
35. Խ. Արսվյան, Վերջ Հայաստանի, 1939, Երևան:
36. Կ. Փարիֆա, Բանաստեղծություններ:
37. Խրիմյան Հ., Վանդուծ, 1878, Պոլիս:
38. Кашмишев С. Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб 1884.
39. Потто В. и Д. Лазарев, 1900, Тифлис.
40. Турбы В. П. Герои и деятели русско-турецкой войны 1877—1878, гг., СПб, 1878.
41. Богданович, Восточная война 1853 -- 1856, гг. т. 1, 1877, СПб.
42. История дипломатия, т. 1, II, 1941, Москва.
43. Бисмарк, Мысли и воспоминания, т. II, 1940, Москва.
44. Журнал военных действий Эриванского отряда 1877, № 191.
45. Грядовский, Война в Малой Азии, 1877.
46. Эм. Дилоя, Положенне дел в Армении, 1896, Москва.
47. Гр. Диев, Армянский вопрос в Турции, 1896, Москва.
48. Кан-Мелькольм Маколла, Ответственность Англии перед Арменией, 1896.
49. Фр. Дев Грин, Армянский кризис и владычество турок, 1896, Москва.
50. М. Г. Ролен-Жекмен, Армения, армяне и трактаты, 1896, Москва.
51. Г. Арцруни, Восточный вопрос, 1876, Тифлис.
52. Патто В. Первые добровольцы Карабага, Тифлис, 1902.
53. " " Кавказская война, т. III, вып. 1, 2, 3, 4 и т. IV, вып. 1, 2, 3, 4, СПб, 1888.
54. Абаза В. А. История Армении, СПб, 1888.
55. Братская помощь пострадавшим о турции армянам, М. 1897.
56. Кавказский календар 1846 по 1917.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջաբանի փոխաբան . . . . .	3
Դյուխ I. Հայերի մասնակցությունը ռուս-պարսկական և ռուս-թյուրքական պատերազմներին մինչ 1877—1878 թթ. պատերազմը . . . . .	7
Դյուխ II. Արևելյան ճգնաժամը և հայերը . . . . .	22
Դյուխ III. Հայերի մասնակցությունը 1877—1878 թ.թ. ռուս-թյուրքական պատերազմին . . . . .	50
Դյուխ IV Պատերազմի արդյունքները և հայերի վիճակը պատերազմից հետո . . . . .	100
Հավելված . . . . .	127
Ցանկ օգտագործված աղբյուրների և զրականություն . . . . .	140

*Handwritten notes in the left margin:*  
 Կ. Արսվյանի հարցը  
 1912 թ. 11-12

*Handwritten notes at the bottom left:*  
 Կ. Արսվյանի հարցը  
 Ինչևէ որպիսի զրույց